

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Գրիգորյան Գաբրիկ Գագիկի

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ՊԱՐՍԿԵՐԵՆԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ
ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՉՈՒ ԳԱԴՐԱԿԱՆ ՔՆՆՈՒ ԹՅՈՒՆԸ**

Ժ.02.02- «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն»
մասնագիտությունը բանասիրական գիտությունների
թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Ատենախոսություն

Գիտական ղեկավար՝
բ.գ.դ., պրոֆ.
Լ. Ս. Հովսեփյան

ԵՐԵՎԱՆ – 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒ ԹՅՈՒՆ

ՆԵՐԱՃՈՒ ԹՅՈՒՆ.....	2
ԳԼՈՒԽ 1. ԹԿԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒ ՄԵՎ ՊԱՐՍԿԵՐԵՆՈՒ Մ.....	19
1.1. Ընդհանուր նկատառու մեներ թվի քերականական կարգի վերաբերյալ ...	19
1.2. Բուռն թվային իմաստներ. եզակի եվ հոգնակի	23
1.3. Բացարձակ թիվ	27
1.4. Անհոգնականներ և անեզակականներ	30
1.5. Հավաքական թիվ	37
1.6. Մոտավոր թիվ	39
1.7. Ժամանակակից հայերենի և պարսկերենի թվակազմական հիմքերն ու վերջավորու թյունները	40
1.8. Պարսկերենի թեքական հոգնակին	47
1.9. Թվային համաձայնությունը հայերենում և պարսկերենում	50
ԳԼՈՒԽ 2. ԱՌԿԱՅԱՑՄԱՆ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՅԵՐԵՆՈՒ ՄԵՎ ՊԱՐՍԿԵՐԵՆՈՒ Մ.....	56
2.1 Որոշյալ ու թյան ենթակարգ	57
2.2. Ցուցաստացական ու թյան ենթակարգ	65
ԳԼՈՒԽ 3. ՀՈԼՈԿԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՅԵՐԵՆՈՒ ՄԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԽՆԴՐԱՌԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՊԱՐՍԿԵՐԵՆՈՒ Մ.....	69
3.1. Հոլովի հարցը հայ լեզվաբանություն մեջ	71
3.2. Ուղղական հոլով	73
3.3. Սեռական հոլով	76
3.4. Տրական հոլով	82
3.5. Հայցական հոլով	88
3.6. Բացառական հոլով	93
3.7. Գործիական հոլով	96
3.8. Ներգոյական հոլով	99
ԳԼՈՒԽ 4. ԱԾԱԿԱՆԻ ՀԱՄԵՄԱՏՈՒ ԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ	103
4.1. Բաղդատական աստիճան	104
4.2. Գերադրական աստիճան	107
ԵԶՐԱԿԱՑՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ	110
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒ ԹՅԱՆ ՑԱՆԿ	115

ՆԵՐԱՃՈՒ ԹՅՈՒՆ

Չու գաղարական լեզվաբանությունը երկու կամ ավելի լեզուների տիպաբանական ուսումնասիրությունն է, որի նպատակն է ի հայտ բերել համեմատվող լեզուների քերականական կառուցվածքի ընդհանրություններն ու տարբերությունները, ինչպես նաև բացահայտել այն բնորոշ գծերը, որոնք աննկատ են մնում մտյալ լեզվի միակողմանի քննության ընթացքում¹:

Թեև զուգադրական լեզվաբանությունը, որպես այդ գիտության առանձին ճյուղ, ձևավորվել է քսաներորդ դարի երկրորդ կեսին և համարվում է ամենաերիտասարդ լեզվաբանական ուղղություններից մեկը, լեզուների զուգադրումը, որն ընկած է դրա հիմքում, կիրառվել է դեռևս հնագույն ժամանակներից: Տարբեր հեղինակների կողմից այս կամ այն լեզվի համար մշակվող քերականություններն իրենց մեջ զգալի չափով կրում էին զուգադրության տարրեր, որը կարող էր լինել հեղինակի մայրենի լեզվի հետ, եթե գրված աշխատությունը որևէ օտար լեզվի էր վերաբերում, կամ, ինչպես պատահում էր ավելի հաճախ, որպես զուգադրության առարկա ծառայում էին լատիներենը կամ հունարենը, որոնք միջնադարում համարվել են գիտության հիմնական լեզուները²:

Ռուս լեզվաբան Վ. Գակը այս կապակցությամբ եզրակացնում է, որ զուգադրական լեզվաբանությունը, որպես ձևավորված առանձին ուղղություն, պարզապես «լեզվի նկարագրության բնագավառում մարդկության փորձի տեսական ընդհանրացումն ու բյուրեղացումն է»³:

Ինչ վերաբերում է զուգադրական լեզվաբանության և լեզվաբանական տիպաբանության⁴ նույնացման կամ տարբերակման հարցին, ապա այստեղ լեզվաբանների տեսակետները բաժանվում են: Օրինակ՝ չեխ լեզվաբան Վ. Սկալիչկան գտնում է, որ «տիպաբանությունը ուսումնասիրում է լեզվի առանձին տարրերը

¹ Ст' у Ярцева В. Н., Методы сопоставительного изучения языков, Москва, 1988, стр. 6-7.

² Ст' у Кодухов В. И., Общее языкознание, Москва, 1974, стр. 272-273.

³ Гак В. Г., О контрастивной лингвистике//«Новое в зарубежной лингвистике, XXV, Москва, 1989, стр. 5-6.

⁴ Ст' у Милевский Т., Предпосылки типологического языкознания, в *Исследования по структурной типологии*, Москва, 1963, стр. 4-5.

հնարավորինս բազմաթիվ լեզուների օրինակով, մինչդեռ զուգադրական քննության են ենթարկվում երկու լեզուներ, և փորձ է արվում վեր հանել դրանց ընդհանրություններն ու տարբերությունները⁵»:

Վ. Գակը համարում է, որ զուգադրական քննության կարող են ենթարկվել նաև երկուսից ավելի լեզուներ: Միևնույն ժամանակ զուգադրական քննության առարկա կարող են լինել լեզվական համակարգի առանձին տարրեր, այլ ոչ միայն լեզուն ամբողջությամբ: Նրա բնորոշմամբ՝ լեզվաբանական տիպաբանության և զուգադրական լեզվաբանության տարբերությունը հիմնականում այն է, որ առաջինի հիմնական խնդիրը լեզվատիպի որոշումն է, իսկ զուգադրական լեզվաբանությունն իր առջև դնում է ավելի համեստ նպատակներ, այն է՝ համեմատության մեջ քննել լեզուների քերականական առանձնահատկությունները և նմանությունները⁶:

Է. Աղայանը նշում է, որ զուգադրական լեզվաբանության ուսումնասիրություններն «ըստ իրենց մեթոդի և հայեցակետի նույնանում են լեզվաբանական տիպաբանության հետ, և ըստ էության տիպաբանական հետազոտություն են երկու կամ ավելի լեզուների»⁷:

Յուրաքանչյուր լեզվաբան Լ. Դեժյոն համարում է, որ տիպաբանության շնորհիվ հնարավոր է համակարգված ձևով քննության ենթարկել աշխարհի լեզուների քերականական կառուցվածքը, սահմանել ընդհանուր օրինաչափությունները, ըստ այդ օրինաչափությունների դասակարգել լեզուները⁸:

Զուգադրական լեզվաբանությունն իր հերթին տիպաբանության համար ապահովում է գիտական նյութ՝ հետագա տեսական վերլուծության ենթարկելու նպատակով: Այլ կերպ ասած՝ լեզվաբանական տիպաբանությունը և զուգադրական

⁵ Скаличка В., Типология и сопоставительная лингвистика // «Новое в зарубежной лингвистике», вып. XXV, Москва, 1989, стр. 27-32.

⁶ Տե՛ս և Գակ В. Գ., ук. соч., стр. 6.

⁷ Աղայան Է. Բ., Լեզվաբանության հիմունքներ, Երևան, 1987, էջ 134-135:

⁸ Տե՛ս և Дежэ Л., Некоторые замечания о роли приложения типологии к контрастивной лингвистике // «Новое в зарубежной лингвистике», вып. XXV, Москва, 1989, стр. 179-187.

լեզվաբանությունը կազմում են անբալտեկի միասնությունն և փոխընդհանուրացում են միմյանց:

Լեհ լեզվաբան Յ. Ֆիզիակը առանձնացնում է գուգադրական լեզվաբանության երկու ուղղություն՝ տեսական և գործնական-կիրառական: Առաջինը, ըստ նրա, սերտորեն կապված է ընդհանրույթների (ուսիվերսալիաների) գաղափարի հետ և ցույց է տալիս, թե դրանք ինչպես են արտահայտվում այս կամ այն լեզվի քերականական համակարգում⁹:

Կիրառական գուգադրական լեզվաբանությունն իր հերթին հենվելով տեսական ճյուղի տվյալների վրա՝ դրանք հարմարեցնում է մի շարք գործնական նպատակների, ինչպիսիք են օտար լեզվի ուսուցումը, թարգմանության տեսությունը¹⁰ և այլն: Օտար լեզվի քերականությունը յուրացնելիս ենթագիտակցորեն միշտ որպես հիմք ծառայում է մայրենի լեզվի քերականությունը, ուստի գուգադրական լեզվաբանությունը միաժամանակ քննության է ենթարկում դրանք երկուսն էլ¹¹: Չուգադրական քերականությունը կարող է կարևոր դեր ունենալ նաև մեքենական թարգմանական համակարգերի ստեղծման մեջ¹²:

Երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդող շրջանում գուգադրական լեզվաբանության նկատմամբ զգալի հետաքրքրություն առաջ եկավ Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Սկսած նախորդ դարի 50-ական թվականներից՝ ավելի ու ավելի էր մեծանում օտար լեզուների ուսուցման կարևորությունը և նշանակությունը, որը մասնագետներին դրդում էր փնտրել դասավանդման նոր և ավելի արդյունավետ մեթոդներ: Այս համատեքստում առաջ եկավ այն տեսակետը, որ երկու տարբեր լեզուների քերականական կառուցվածքի գուգադրական քննությունը կարող է նպաստել օտար լեզվի յուրացմանը, մասնավորապես, կանխել այն սխալները, որոնք սովորողները թույլ են տալիս օտար լեզու սովորելիս՝ իրենց մայրենի լեզվի

⁹ St' u Fisiak J., Contrastive linguistics and language teaching, New York, 1981, pp. 4-6.

¹⁰ St' u Керквуд Г. В., Перевод как основа контрастивного лингвистического анализа, // «Новое в зарубежной лингвистике», вып. XXV, М., 1989, стр. 341-350.

¹¹ St' u Хельбиг Г., Языкознание-сопоставление-преподавание иностранных языков, // «Новое в зарубежной лингвистике», вып. XXV, М., 1989, стр. 307-327.

¹² St' u Никкель Г., Контрастивная лингвистика и обучение иностранным языкам, // «Новое в зарубежной лингвистике», вып. XXV, М., 1989, стр. 350-351.

քերականական կառուցվածքի ազդեցությամբ: Թեև հետագայում բավականին թվով մասնագետներ լինվին կամ մասնակի կասկածի տակ էին դնում այս մեթոդի օգտակարությունը, միևնույն է, զուգադրական լեզվաբանությունը մի շարք հարցերում ունի արդյունավետ կիրառման լուրջ հնարավորություն¹³:

Լեհ լեզվաբան Վ. Մարտոնը նշում է, որ օտար լեզու ուսուցանող մասնագետների համար զուգադրական քերականության ձեռնարկները կարող են օգտակար լինել՝ համակարգելու մատուցվող ուսումնական նյութը՝ հաշվի առնելով ուսանողի մայրենի լեզվի քերականական համակարգի առանձնահատկությունները: Նույն կերպ ուսանողի համար նման ձեռնարկները կարող են փոխանի լինել՝ առավել դյուրին և համակարգված ընկալելու ուսումնասիրվող լեզվում առկա այն քերականական իրողությունները, որոնք տարբեր են իր մայրենի լեզվում: Նշվածից զատ, զուգադրական քերականության ուսումնասիրությունները կարող են օգտակար լինել օտար լեզուների ուսուցման ձեռնարկներ մշակողների համար¹⁴:

Խորհրդային Միությունում ևս լեզվաբանության այս ուղղությունը գտնվում էր լեզվաբանների ու շարժական կենտրոնում: Տարբեր լեզուների և ռուսերենի զուգադրական քերականությանը վերաբերող աշխատություններ են հրատարակել Վ.Արակինը, Վ. Յարցևան, Վ. Գակը, և այլք:

Ատենախոսությունում որպեսզուգադրական լեզվաբանության ուսումնասիրության առարկա դիտարկվում են անվանական քերականական կարգերը:

Քերականական կարգերը քերականական իմաստի և դրա արտահայտման միջոցների միասնությունն են: Դրանք, նախևառաջ, կարելի է բաժանել երկու խմբի՝ *շարահյուսական* և *ձևաբանական*: Ձևաբանականներն իրենց հերթին կարող են լինել *անվանական* և *բայական*: Լեզուներում առավել լայն կիրառում ունեցող անվանական քերականական կարգերն են առկայացման, թվի, հոլովի,

¹³ Տե՛ս Sanders C., Recent developments in contrastive analysis and their relevance to language teachers// *Contrastive linguistics and the language teacher*, Pergamon Press, Oxford/ New York, 1981, pp. 21-33.

¹⁴ Տե՛ս Marton W., Pedagogical implications of contrastive analysis// *Contrastive linguistics and the language teacher*, Pergamon Press, Oxford/ New York, 1981, pp. 157-171.

ածականի համեմատության աստիճանների, որոշ լեզուներում նաև անձի և իրի, շնչավորի և անշունչի քերականական կարգերը: Բայական կարգերից են եղանակը, ժամանակը, կերպը, դեմքը, բայասեռը, հաստատում-ժխտումը:

Վ. Գակը նշում է, որ գուգադրական լեզվաբանության առարկա կարող են լինել լեզվաբանական բոլոր մակարդակների տարրերը՝ հնչյունները, բառերը, քերականական կառույցները և երևույթները¹⁵:

Խոսելով քերականական կարգերի նկարագրության մեթոդների մասին՝ ռուս լեզվաբան Ա. Չելենեցկին նշում է, որ այդ նպատակի համար կարող է հաջողությամբ կիրառվել *իմաստային դաշտերի* տեսությունը: Իր հիմնական նշանակությամբ իմաստային դաշտն արտահայտում է իմաստով միմյանց հետ որոշակի կերպով հարաբերվող բառային միավորների ամբողջություն: Սակայն լեզվաբանական տիպաբանության մեջ այն այլ կիրառություն է ձեռք բերել. միավորում է տվյալ քերականական կարգին առավել բնորոշ արտահայտության միջոցները և իմաստային առումները մեկ համակարգի մեջ¹⁶:

Քերականական կարգերի արտապատկերումը իմաստային դաշտերի վրա հստակ պատկերացնելու համար պետք է տարբերակել արտահայտության և բովանդակության պլանները: Առաջինը ներկայանում է որպես տվյալ քերականական կարգի արտահայտման միջոցների ամբողջություն: Այդ քերականական արտահայտության միջոցները պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի: Առաջին խմբին են պատկանում քերականական ձևույթները, նախևառաջ՝ ածանցները: Երկրորդ խումբն են կազմում շարահյուսական միջոցները՝ շարադասություն, կապեր, նախդիրներ և այլն:

Քերականական կարգերի նման վերլուծությունը իմաստաբանության և ձևաբանության տեսանկյունից հնարավորություն է տալիս դիտարկել այդ կարգերն իրենց

¹⁵ Ст' у Гак В. Г., ук. соч., стр. 7-8:

¹⁶ Ст' у Зеленецкий А. Л., Сравнительная типология основных европейских языков, М. 2004, стр. 105-109.

ամբողջության մեջ՝ միաժամանակ համեմատության ենթարկելով դրանց բաղկացուցիչ տարրերը:

Անվանական քերականական կարգերից առավել բարդ երևույթ է հոլովը: Հոլովի քերականական կարգի տիպականական նկարագրությունը նախևառաջ ենթադրում է հոլովական քերականական արտահայտության միջոցների համակարգում, որոնք ներկայացնում են մեծ բազմազանություն: Հոլովի կարգի համար հստակ և համապարփակ սահմանում տալը նույնպես չափազանց դժվար է, քանի որ հոլովական կապակցության իմաստը նախևառաջ բխում է նրա բաղկացուցիչ բառերի բառային իմաստից: Ռուս լեզվաբան Վ. Վինոգրադովը այս կապակցությամբ նշում է, որ «գոյականի հոլովական ձևերում արտահայտվում են առարկաների, երևույթների, գործողությունների և որակների միջև հարաբերությունների ընկալումը նյութական իրականության մեջ»¹⁷:

Ընդհանրապես, հոլովի կարգի ուսումնասիրությունը բարդանում է այն հանգամանքով, որ լեզուների միմասում այն առկա է, իսկ մյուսներում՝ ոչ: Առաջիններում հոլովական իմաստները քերականական արտահայտություն ստանում են մասնիկների, երկրորդների դեպքում՝ բառային միջոցներով: Հենց այս պատճառով լեզվաբանության մեջ առաջ է եկել խորքային հոլովների մասին տեսությունը, որը հայտնի է նաև *հոլովական քերականություն (case grammar)* անվամբ: Այս ուղղության հիմնադիրներն են համարվում ամերիկացի լեզվաբաներ Չ. Ֆիլմորը¹⁸ և Ու. Չեյֆը¹⁹:

Անվանական քերականական կարգերից մյուսը՝ թիվը, առավել մեծ կիրառություն ունի աշխարհի լեզուներում և այս կամ այն կերպ արտահայտվում է դրանցից յուրաքանչյուրում: Թվի կարգը դիտարկելիս անհրաժեշտ է հաշվի առնել երկու տարբեր տեսակի հակադրություններ դրա ներսում: Առաջինը, բնականաբար,

¹⁷ Виноградов В. В., Русский язык. , М., 1972., стр. 139.

¹⁸ St' u Fillmore, Charles J. "The Case for Case" In: E. Bach and R.T. Harms (eds) (1968) Universals in Linguistic Theory. London: Holt, Rinehart and Winston, pp. 1-25 (Part Two).

¹⁹ St' u Чейф У. Л., Значение и структура языка, Москва, 1975.

եզակիության և հոգնակիության հակադրությունն է, որն առկա է հաշվելի առարկաների դեպքում:

Երկրորդ տիպի հակադրության մի կողմում այն գոյականներն են, որոնք ենթակա են թվային առկայացման, այսինքն հաշվելի են, իսկ մյուս կողմում այն գոյականները, որոնք ենթակա չեն թվային առկայացման և անհաշվելի են: Դրանց շարքին կարելի է դասել հավաքական, անհոգնական, անեզական գոյականները: Այս հակադրությունը պայմանավորված է նրանով, որ մի խումբ բառերի բառային իմաստը հնարավորությունն չի տալիս արտահայտել թվային հակադրության երկու եզրերը, և նրանք ներկայանում են կա՛մ միայն եզակի, կա՛մ միայն հոգնակի ձևով:

Անվանական կարգերից է նաև առկայացումը: Քերականական իմաստի տեսանկյունից առկայացման կարգը որոշակիացնում է առարկաների հարաբերությունները հաղորդակցական իրադրության և հաղորդակցման մասնակիցների նկատմամբ՝ ըստ վերջիններիս համար հայտնի կամ անհայտլինելու հանգամանքի:

Գ. Ջահուկյանը հայերենում առկայացման քերականական կարգի համար առանձնացնում է երկու ենթակարգ՝ որոշյալություն և ցուցատացականություն²⁰:

Տարբերվեզուներում առկա են բառիմաստի որոշակիացման ինչպես բառային, այնպես էլ քերականական միջոցներ, որոնք ցույց են տալիս, թե տվյալ խոսքային իրավիճակում ի նկատի է առնվում որոշակի առարկան ընդհանրական, տեսակի իմաստավորմամբ, թե խոսքը գնում է միայն այդ նշված տեսակի մեջ մտնող մի որևէ առանձին առարկայի մասին: Ձևաբանական տեսանկյունից առկայացումը արտահայտվում է հիմնականում հոդերի միջոցով, և առկայացման քերականական կարգի ուսումնասիրությունը կարող է նաև նպաստել հոդերի (*անորոշ, որոշյալ, դիմաստացական*) ծագման, զարգացման, նրանց գործառնության մանրամասնությունների ու նրբերանգների բացահայտմանը:

Ներկայացնելով ատենախոսության թեմատիկ ընդգրկումը՝ պետք է նաև անդրադառնանք այն աղբյուրներին, որոնցից օգտվել ենք ատենախոսությունը շարադրելիս:

²⁰ Տե՛ս Ջահուկյան Գ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 208-209:

Հայոց Լեզվի քերականության վերլուծության հարցերում անգնահատելի է ակադեմիկոս Յ. Աճառյանի «Լիակատար քերականությունն հայոց Լեզվի»²¹ բազմահատոր աշխատությունը, որտեղ նա փաստական նյութի համակողմանի ուսումնասիրության հիման վրա հայերենի քերականությունը համեմատում է աշխարհի 562 լեզուների հետ: Նշված աշխատությունում, մասնավորապես՝ դրա երրորդ հատորում քննարկված թեմաները օգտակար են եղել ատենախոսության համապատասխան բաժինները շարադրելիս՝ հատկապես հաշվի առնելով նշանավոր Լեզվաբանի աշխատության Լայն ընդգրկումն ու թեմատիկ բազմազանությունը:

Ժամանակակից հայերենի քերականության տեսական հարցերն ուսումնասիրելիս անփոխարինելի ուղեցույց է եղել ակադեմիկոս Գ. Ջահուկյանի «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները»²² հետազոտությունը, որտեղ խոր և համապարփակ վերլուծության է ենթարկվում ժամանակակից հայերենի քերականությունը:

Ատենախոսության տարբեր բաժինները շարադրելիս մեզ համար որպես ուղեցույց են ծառայել պրոֆեսոր Յ. Պետրոսյանի աշխատությունները: Մասնավորապես, թվի քերականական կարգի վերաբերյալ հատվածում մեծապես օգտվել ենք հեղինակի «Գոյականի թվի կարգը հայերենում»²³ աշխատությունից: Առկայացման քերականական կարգին վերաբերող գլխում օգտվել ենք նրա մեկ այլ՝ «Գոյականի առումները հայերենում»²⁴ հետազոտությունից:

Անշուշտ, չի կարելի անտեսել ակադեմիկոս Է. Աղայանի «Լեզվաբանության հիմունքներ»²⁵ աշխատությունը, որը հատկապես օգտակար է եղել ընդհանուր Լեզվաբանական տեսական հարցերում: Հեղինակի մեկ այլ՝ «Ժամանակակից հայերենի հոլովումը և

²¹ Աճառյան Յ., Լիակատար քերականությունն հայոց Լեզվի, Ներածություն, համեմատություն ամբ 562 լեզուների, Երևան, ՀՍՍՌԿԱ հրատ., 1955:

Աճառյան Յ., Լիակատար քերականությունն հայոց Լեզվի, համեմատություն ամբ 562 լեզուների, հ. III, Երևան, ՀՍՍՌԿԱ հրատ., 1957:

²² Ջահուկյան Գ. Բ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974:

²³ Պետրոսյան Յ. Զ., Գոյականի թվի կարգը հայերենում, Երևան, 1972:

²⁴ Պետրոսյան Յ. Զ., Գոյականի առումները հայերենում, Հայկական ՍՍՌԿԱ հրատարակչություն, Երևան, 1960:

²⁵ Աղայան Է. Բ., Լեզվաբանության հիմունքներ, Երևան, 1987:

խոնարհուումը»²⁶ աշխատությունից, ինչպես նաև «Պատմաբանասիրական հանդեսում» 1966թ. հրատարակված՝ «Ժամանակակից հայերենի հոլոգրաֆի»²⁷ ծավալուն հոդվածից օգտվել ենք հոլոգրաֆի իմաստներին վերաբերող հատվածները շարադրելիս: Նշված թեմային անդրադառնալիս օգտվել ենք նաև Մ. Աբեղյանի «Յայերենի տեսություն»²⁸, Գ. Սևակի «Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց»²⁹ աշխատություններից: Ատենախոսության տարբեր հատվածներում օգտվել ենք նաև Մ. Ասատրյանի «Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր»³⁰ հետազոտությունից:

Հիշատակության է արժանի նաև պրոֆեսոր Գ. Նալբանդյանի «Պարսից լեզվի քերականություն»³¹ հրատարակությունը:

Անհրաժեշտ ենք համարում առանձնահատուկ հիշատակել պրոֆեսոր Վ. Առաքելյանի «Ժամանակակից հայերենի հոլոգրաֆի և հոլոգրաֆի կապակցությունների իմաստային առումները»³² աշխատությունը, որը հիմնավորապես մեկնաբանում է ժամանակակից հայերենի հոլոգրաֆի համակարգի իմաստային կողմը, որն անփոխարինելի է դարձնում սույն աշխատանքը մեր ատենախոսության շարադրանքի համար, քանի որ որպես զուգադրական քննության համեմատության եզրվերցված են հենց հոլոգրաֆի իմաստային առումները:

Բնականաբար, ատենախոսության թեմատիկ ընդգրկումը մյուս կողմից թելադրում է նաև իրանցի լեզվաբանների աշխատությունների օգտագործումը ևս: Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ վերջիններիս աշխատանքում ավելի մեծ տեղ է հատկացված բանասիրական այնպիսի ոլորտներին, ինչպիսիք են ոճագիտությունը, բառարանագրությունը կամ ուսուցողական, ուսումնական ձեռնարկների հրատարակությունները՝ գրված հիմնականում նկարագրական ոճով, խիստ սահմանափակ տեսական

²⁶ Աղայան Է. Բ., Ժամանակակից հայերենի հոլոգրաֆի և խոնարհումը, Երևան, 1967:
²⁷ Աղայան Է. Բ., Ժամանակակից հայերենի հոլոգրաֆի, Պատմաբանասիրական հանդես, N. 4, Երևան, 1966, էջ 117-140:
²⁸ Աբեղյան, Յայոց լեզվի տեսություն, Երևան, 1965:
²⁹ Սևակ Գ., Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955:
³⁰ Ասատրյան, Մ. Ե., Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Կ. Ա, Երևան, 1970:
³¹ Նալբանդյան, Գ.Մ., Պարսից լեզվի քերականություն, Երևան, 1980:
³² Առաքելյան Վ., Ժամանակակից հայերենի հոլոգրաֆի և հոլոգրաֆի կապակցությունների իմաստային առումները, Երևան, 1957:

բաղադրիչով: Տեսական բնույթի աշխատությունները՝ հատկապես
լեզվաբանական տիպաբանության բնագավառում, դեռևս
համեմատաբար նոր երևույթ են իրանական լեզվաբանության մեջ,
որն, անշուշտ, որոշակի չափով բարդացնում է պարսից լեզվին
վերաբերող տիպաբանական ուղղվածության գիտական
աշխատանքները:

Մենք հնարավորինս օգտվել ենք իրանցի գիտնականների
հրատարակություններից, որոնցից կարելի է առանձնացնել Յասան
Անվարիի և Յասան Ահմադի Գիվիի³³, Մոհամադ Ջավադ Շարիաթի³⁴,
Աբդոլմասոուլ Խայամփուրի³⁵, Փարվիզ Նաթել Խանլարիի³⁶, Մոհամադ
Ռեզա Բաթենիի³⁷ պարսից լեզվի քերականությանը նվիրված
հիմնարար աշխատությունները:

Որոշ հետազոտողների կողմից հատկապես վերջին
ժամանակահատվածում փորձեր են կատարվում ժամանակակից
լեզվաբանության չափանիշների և մեթոդների հիման վրա
իրականացնել տեսական բնույթի ուսումնասիրություններ,
որոնցից կարելի է առանձնացնել Բ. Ալինեժադի և Ս. Մ. Թադիթայեբի՝
պարսից լեզվի թվի քերականական կարգին վերաբերող ոչ
մեծածավալ, սակայն համապարփակ և հարուստ նյութ պարունակող
հետազոտությունը³⁸:

Պարսկերենի գիտական ուսումնասիրության գործում իրենց
անժխտելի ավանդն են ներդրել նաև ռուսական դպրոցի
իրանագետները և լեզվաբանները: Ատենախոսության տարբեր
հատվածներ շարադրելիս օգտվել ենք Յու. Ռուբինչիկի³⁹, Ե.

³³ Anvari H., Givi. H. A., حسن انوری، حسن احمدی گوی، "دستور زبان فارسی"، ویرایش چهارم، انتشارات فاطمی، تهران
"Dastur-e zabān-e fārsi: virāyesh-e čahārom", Enteshārāt-e Fātemi, Tehrān, 1391 (2012).

³⁴ Šariat, M. J., "دستور زبان فارسی"، (ویرایش 3). تهران: اساطیر
"Dastur-e zabān-e fārsi" Enteshārāt-e Asātir, Tehran, 1364 (1985).

³⁵ Khayāmpur, A., Dastur-e zabān-e fārsi, Enteshārāt-e
Sotude, Tabriz, 1392 (2013).

³⁶ Khānlari, P. N., Dastur-e zabān-e fārsi, Enteshārāt-e
Tus, Tehrān, 1377 (1998).

³⁷ Bāteni M., Dastur-e zabān-e fārsi,
Enteshārāt-e Amir Kabir, Tehrān, 1392 (2013).

³⁸ علی نژاد، بتول، تقی طیب، سید محمد، نگاهی به دستگاه شمار اسم در فارسی معاصر، مجله علوم اجتماعی و انسانی دانشگاه شیراز،
شماره سوم

/ Alinezhad A., Taghitayeb S. M., "Negāhi be dastgāh-e shomār-e esm dar fārsi-e moāser" Majale-ye olum-e
ejtemāyi va ensāni dānshgāh-e Shirāz., No. 48, Shirāz, 1385 (2004), pp. 158-170.

³⁹ Рубинчик Ю. А., Грамматика современного персидского литературного языка, РАН, Москва, 2001.;
Рубинчик Ю. А., Современный персидский язык, Москва, 1960.

Բերտելսի⁴⁰, Լ. Պեյսիկովի⁴¹ հրատարակություններին, ինչպես նաև միջարքայլ հեղինակների հոդվածներին:

Պակաս կարևորություն չեն ներկայացնում նաև պարսկերենի քերականությանը նվիրված անգլալեզու հրատարակությունները, որոնցից կարող ենք առանձնացնել Գ. Վինդֆուրի⁴², Է. Լեմբտոնի⁴³, Դ. Ֆիլլոտի⁴⁴ աշխատությունները: Վերջինս, որը հրատարակվել է դեռևս 1919թ.-ին, թեև լեզվական փաստերի տեսանկյունից փոքր-ինչ հնացած է, սակայն վերլուծության ծավալով և խորությամբ այն դեռևս չի կորցրել իր գիտական արժեքը:

Այս շարքում առանձնահատուկ կարելի է հիշատակել ազգությամբ իրանցի, Իլինոյսի համալսարանը ներկայացնող լեզվաբան Շահրզադ Մահոթիանի և Լ. Գեբհարդտի «Պարսկերենի նկարագրական քերականություն»⁴⁵ համատեղ աշխատությունը, որն իրավամբ կարող ենք համարել այդ լեզվի տեսական քերականության վերաբերյալ լավագույն գիտական աշխատանքներից մեկը:

Ատենախոսության տեսական լեզվաբանական բաղադրիչն ապահովելու համար օգտվել ենք նաև միջարք հեղինակների աշխատություններից: Ռուս հեղինակներից կարող ենք նշել Ռ. Յակոբսոնին⁴⁶, Ս. Կացնելսոնին⁴⁷, Վ. Գակին⁴⁸:

Անգլալեզու հեղինակներից առանձնահատուկ հիշատակության է արժանի Գ. Քորբեթի՝ թվի քերականական կարգի տիպականությանը նվիրված ծավալուն ուսումնասիրությունը⁴⁹, որն իր մեջ ներառում է աշխարհի հարյուրավոր լեզուների տվյալներ և օրինակներ: Ատենախոսության տարբեր հատվածներ շարադրելիս օգտվել ենք Օ. Եսպերսենի «Քերականության փիլիսոփայությունը»⁵⁰ աշխատությունից:

⁴⁰ Бертельс Е. Э., Грамматика персидского языка, Ленинград, 1926.

⁴¹ Пейсиков Л.С., Лексикология современного персидского языка, Москва, 1975.

⁴² Windfuhr, G. L., Persian Grammar: history and state of its study, The Hague, 1979.

⁴³ Lambton, A.K.S., Persian Grammar, Cambridge University Press, Cambridge; 2000.

⁴⁴ Phillo, D.C., Higher Persian Grammar, Calcutta University, Calcutta, 1919.

⁴⁵ Mahootian Sh.; Gebhardt L., Persian descriptive grammars, Taylor & Francis Routledge, London, 1997.

⁴⁶ Якобсон Р., Избранные работы, Москва, 1985.

⁴⁷ Кацнельсон С. Д., Типология языка и речевое мышление., Ленинград, 1972.

⁴⁸ Гак В. Г., О контрастивной лингвистике // «Новое в зарубежной лингвистике», вып. XXV, М., 1989.

⁴⁹ Corbett, G. G. , Number, Cambridge, 2004.

⁵⁰ Jespersen O., The philosophy of grammar, London, 1924.

Մինչ բուն նյութին անցնելը, անհրաժեշտ ենք համարում պարզաբանել նաև ընդհանուր տեսական բնույթի մի հարց՝ այն է, թե ի՞նչ սկզբունքով պետք է անցկացնել երկու լեզուների քերականական կարգերի միջև զուգադրական քննությունը, արդյո՞ք պետք է որպես այդ վերլուծության մեկնակետ վերցնել ձևաբանական կողմը, թե իմաստային-գործառնությունային: Չարցը կարևոր է այնքանով, որ զուգադրական քննության մեջ պետք է ներառել իմաստաբանորեն համարժեք քերականական միավորներ: Իհարկե, պետք է նաև նշել, որ նշված հայեցակետերից որևէ մեկը, լինի ձևաբանական սկզբունքով, թե իմաստային-գործառնությունային, ինքնին լիակատար համարժեքություն չի կարող երաշխավորել⁵¹:

Եթե հիմք ընդունենք ձևաբանական սկզբունքը, այսինքն՝ զուգադրական քննության առարկա դարձնենք ինքնին քերականական ձևությունները՝ մի կողմ թողնելով դրանց իմաստային արժեքները, ապա անխուսափելիորեն կբախվենք լուրջ անհամապատասխանության, քանի որ դրանք լայն բազմազանություն են ներկայացնում և որևէ առանձին վերցված քերականական արտահայտչամիջոցի հնարավոր չէ վերագրել հստակ և որոշակի գործառնություն⁵²:

Թեև զուգադրական քննության անցկացման մյուս սկզբունքը ևս լիարժեք չէ, այնուհանդերձ, քերականական իմաստները տարբեր լեզուներում շատ ավելի միօրինակ և նույնարժեք կերպով են ներկայացված, քան քերականական արտահայտության միջոցները, ուստի ատենախոսությունը շարադրելիս մենք կառանջնորդվենք այս սկզբունքով, թեև առանձին ենթազույգություններ վերաբերում են որոշակի քերականական ձևությունների զուգադրմանը, որոնք համեմատաբար համընդհանուր իմաստային արժեք ունեն երկու լեզուներում, ինչպիսիք են, օրինակ՝ թվակազմական վերջավորությունները:

Անցնելով ատենախոսության բուն թեմային՝ կարող ենք փաստել, որ ժամանակակից պարսկերենի քերականությունը բավականին պարզ է, չկան սեռի, հոլովի քերականական կարգեր, ածականի համաձայնեցում, էական անկանոնություններ բայական

⁵¹ Տե՛ս Song J. J., Linguistic typology: morphology and syntax, London and New York, 2014, pp. 10-11.

⁵² Տե՛ս Croft W., Modern syntactic typology, in M. Shibatani and T. Bynon (eds), 1995, p. 88.

համակարգում: Դրա փոխարեն պարսկերենի բարդությունն առավելապես դրսևորվում է դարձվածաբանության, ոճաբանության, ընդհանրապես գեղարվեստական խոսքի մեջ, և հատկապես այս հատվածներն են պարսկերեն լեզուն սովորողների համար որոշակի բարդություններ կայացնում⁵³: Այնուհանդերձ, չնայած պարսկերենի քերականության արտաքուստ պարզությանը և այն հանգամանքին, որ օտարների համար պարսից լեզուն սովորելը համեմատաբար հեշտ է համարվում, այդ լեզվի քերականության մանրամասնությունները և նրբերանգերը յուրացնելը բավականին դժվար է⁵⁴:

Պարսկերենի քերականությանը նվիրված վաղ շրջանի աշխատություններին անդրադառնալով՝ կարող ենք նշել, որ դրանք հիմնականում նկարագրական բնույթ ունեն, և Յու. Ռուբինչիկի բնորոշմամբ հիմնվում են քերականության «սքոլաստիկական դարոցի» ավանդույթների վրա՝ որպես ուսումնասիրության նյութ օգտագործելով հիմնականում դասական պարսկական գրականության տվյալները⁵⁵: Պարսկերենի քերականությանը բնորոշ տարբերակներն են սահմանելու, մեկնաբանելու համար օգտագործվում է արաբերեն տերմինաբանությունը, որն արտացոլում է հենց արաբերենին հատուկ լեզվական իրողությունները: Հիմնականում շեշտը դրվում է այդ ուսումնասիրություններում ձևաբանական-կառուցվածքային հարցերի վրա, իսկ այնպիսի բնագավառներ, ինչպիսիք են հնչյունաբանությունը, շարահյուսությունը, քիչ ուշադրության են արժանանում մասնագետների կողմից:

Միևնույն ժամանակ, հանուն ճշմարտության անհրաժեշտ է նաև նշել, որ պարսից լեզվի քերականության ուսումնասիրությունը, առանց այդ լեզվով ստեղծված գրականության ընձեռած նմուշներին անդրադառնալու լիարժեք չի կարող լինել⁵⁶: Դասական գրականության ստեղծագործությունները մեծ ժողովրդականություն են վայելում իրանցիների շրջանում, հաճախ

⁵³ St´ u Thackston W. M., An Introduction to Persian, 1, Rev. 4th edition, Maryland, 2009, pp. 9-10.
⁵⁴ St´ u Newmeyer F. J., Possible and Probable Languages, Oxford, 2005, pp. 113-114.
⁵⁵ Рубинчик Ю. А., Современный персидский язык, стр. 16-17.
⁵⁶ St´ u Бертельс Е. Э., ук. соч., стр. 3-4.

կարող են մեջբերվել բանավոր խոսքում, հրապարակախոսական տեքստերում, մամուլում:

Գերմանացի հայտնի իրանագետ Գ. Վինդֆուրի կարծիքով պարսից լեզվի քերականության ուսումնասիրության առաջին քայլերը կարելի է թվագրել դեռևս տասնմեկերորդ դարով: Այս ուսումնասիրություններն, ըստ նրա, արվել են հիմնականում երկու քերականական հայեցակարգի շրջանակներում, որոնք պայմանականորեն կարելի է անվանել *մերձավորարևելյան կամ իսլամական* և *արևմտյան*: Երրորդը՝ *սանսկրիտի* քերականական ավանդույթների հիման վրա իրականացվող ուսումնասիրությունները, ըստ որոշ տվյալների, կատարվել են միջին դարերում՝ Յնդկաստանում⁵⁷:

Արևմտյան կամ եվրոպական ուսումնասիրողների ուշադրությունը պարսկերենը սկսել է գրավել բավականին վաղ շրջանից: Եվրոպայում պարսից լեզվի ուսումնասիրության սկզբնավորումը կապված էր կաթոլիկ միսիոներների գործունեության հետ, որոնք այդ լեզվով էին թարգմանում Աստվածաշունչը: Ավելի ուշ, տասնվեցերորդ դարից սկսած, առևտրային կապերի զարգացման համատեքստում ավելացավ նաև հետաքրքրությունը պարսկերենի նկատմամբ:

Տասնութերորդ դարից սկսած Մեծ Բրիտանիան Յնդկաստանը ենթարկեց գաղութացման, սկսվեց անգլիացի հետազոտողների կողմից պարսկերենի համակարգված և գիտական ուսումնասիրումը, քանի որ, ինչպես արդեն նշեցինք, պարսկերենը Յնդկաստանում ձեռք էր բերել արքունի գրական, մշակութային լեզվի կարգավիճակ, այդ լեզվով տեղի հեղինակների կողմից ստեղծվել էր հսկայածավալ պարսկալեզու գրականություն⁵⁸:

Պարսկերենի ուսումնասիրման գործում իր ուրույն ներդրումն ունեցավ նաև արևելագիտության ռուսական դպրոցը: Այն դեպքում, երբ անգլիացի հետազոտողները գործ ունեին հիմնականում հնդկական պարսկերենի հետ, ռուս արևելագետները լայն հնարավորություններ ունեին ուսումնասիրություններ

⁵⁷ St' u Windfuhr G. L., op. cit., pp. 9-11.

⁵⁸ افشار، کتابشناسی ده ساله کتابهای ایران، تهران. / Afšār I., Ketābšenāsiye dah sāleye Irān 1333-1342, Tehrān, 1346 (1967).

իրականացնելու ինչպես բուն Իրանում, այնպես էլ Միջին Ասիայում: Ռուսական հետազոտությունները հիմնական ծավալով սկսվեցին տասնիններորդ դարում և հիմք ծառայեցին հետագայում իրանագիտության, մասնավորապես՝ իրանական բանասիրության խորհրդային դպրոցի կայացման համար: Այդ դպրոցի ներկայացուցիչները հետագայում կարևոր դեր խաղացին պարսից լեզվի գիտական ուսումնասիրության գործում:

Քսաներորդ դարի երկրորդ կեսից պարսկերենի ուսումնասիրման նկատմամբ զգալի հետաքրքրություն առաջացավ նաև ամերիկացի գիտնականների շրջանում, որոնք մի շարք աշխատություններ հեղինակեցին՝ հատկապես հաշվի առնելով լեզվաբանական նոր հայեցակետերը և մեթոդները: Ընդհանրապես, եթե մինչ այդ պարսից լեզվի ուսումնասիրությունը տարբեր արևելագիտական դպրոցների յուրատեսակ «մենաշնորհն» էր դարձել, այժմ այն դարձավ տարբեր ուղղություններ ներկայացնող լեզվաբանների ուսումնասիրության առարկան: Օրինակ՝ Պրահայի դպրոցի մի շարք ներկայացուցիչներ քննության ենթարկեցին պարսկերենի հնչյունաբանությունը, խորհրդային դպրոցի ներկայացուցիչները լուրջ ձեռքբերումներ արձանագրեցին պարսից լեզվի ձևաբանության ուսումնասիրության հարցում⁵⁹:

Ատենախոսությունը շարադրելիս փորձել ենք համաչափորեն օգտագործել նշված բաղադրիչները՝ գուճադրական լեզվաբանության տեսական սկզբունքները, հայ լեզվաբանների հեղինակած ծավալուն և հիմնարար աշխատությունները հայոց լեզվի քերականության վերաբերյալ, օտարերկրյա և իրանցի հեղինակների աշխատանքները պարսկերենի քերականության մասին: Ատենախոսության առաջին երկու գլուխներում անդրադարձ է կատարվել համապատասխանաբար թվի և առկայացման քերականական կարգերին, վերլուծության են ենթարկել նշված կարգերի իմաստային և արտահայտության պլանները, միմյանց հետ համեմատվել են քերականական ցուցիչները, գուճադրվել են քերականական իմաստային առումները, դրանց իմաստային ընդգրկումները: Երրորդ գլխում, որտեղ գուճադրական քննության

⁵⁹ Տե՛ս Windfuhr G. L., op. cit., pp. 13-15.

են ենթարկվել ժամանակակից հայերենի հոլովի քերականական կարգը և պարսկերենում դրան համարժեք քերականական իմաստներն արտահայտող քերականական կառույցները, որպես համեմատության եզրվերցված են հայերենի յոթ հոլովները՝ իրենց արտահայտած իմաստներով, և ըստ հոլովների հերթականության՝ ներկայացվում են նաև պարսկերենի օրինակները: Ժամանակակից հայերենի հոլովների իմաստային առումները նկարագրել ենք՝ հետևելով Վարագ Առաքելյանի «Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները» աշխատության ներկայացրած օրինակներին:

ԳԼ ՈՒ Խ1. ԹՎԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒ Մ ԵՎ ՊԱՐՍԿԵՐԵՆՈՒ Մ

Անվանական քերականական կարգերի շարքում գոյականի թվն ունի ամենից լայն տարածվածությունը և այս կամ այն կերպ իր արտահայտությունն է գտնում բոլոր լեզուներում: Աշխարհի լեզուների մակերեսային դիտարկումն անգամ թույլ է տալիս նշել, որ դրանք բոլորն ունեն թվի քերականական իմաստի արտահայտման միջոցներ հիմնականում գոյականների համար, սակայն այդ լեզուների մի մասում թվի կարգը կարող է վերաբերել նաև այլ խոսքի մասերի, ինչպիսիք են բայը կամ ածականը⁶⁰:

Ատենախոսության այս գլխում գուգադրական քննության են ենթարկվում ժամանակակից հայերենի և ժամանակակից պարսկերենի թվի քերականական կարգը՝ իր ենթակարգերով: Առանձին դիտարկվում են դրանց բնութագրերը իմաստաբանության, ձևաբանության, շարահյուսության տեսանկյունից: Թվի քերականական կարգի ուսումնասիրությունն առնչվում է լեզվական համակարգի բոլոր հիմնական տարրերին, չնայած տվյալ դեպքում մեզ համար հետաքրքրություն է ներկայացնում դրանվանական իմաստներով կիրառությունը՝ պայմանավորված սույն աշխատանքի թեմատիկ ընդգրկմամբ: Հետագա ենթաբաժիններում փորձ է արվում վերը նշված տեսանկյուններից միմյանց հետ համեմատել ժամանակակից հայերենի և պարսկերենի թվային համակարգերի համապատասխան միավորները՝ ցույց տալու համար դրանց միջև առկան մանրություններն ու տարբերությունները:

1.1. Ընդհանուր նկատառումներ թվի քերականական կարգի վերաբերյալ

Ս. Կացնելսոնը համարում է, որ գոյականի թվի առաջնային գործառնությունը գոյականի թվային առկայացման ապահովումն է: Խոսքի մեջ կիրառվելիս գոյականները պետք է որոշակիացվեն, և թվի

⁶⁰ Տե՛ս Storch A., Dimmendaal G. J., Number constructions and semantics, Amsterdam/Philadelphia, 2014, pp. 1-3.

կարգի միջոցով արտահայտվող եզակիության կամ հոգնակիության գաղափարը լուծում է հենց այս խնդիրը⁶¹:

Օ. Եսպերսենը այսպես է բնորոշում թվի քերականական կարգը. «Թիվը կարող է արտաբուստ թվալ բնական ամենապարզ կարգերից մեկը, այնքան պարզ, ինչպես *«երկու անգամ երկու հավասար է չորսի»*: Սակայն ավելի մանրամասն դիտարկումը ի հայտ է բերում բազմաթիվ բարդություններ՝ և՛ տրամաբանական, և՛ լեզվաբանական: Տրամաբանական տեսանկյունից ակնհայտ տարբերակում կամեկի և մեկից ավելիի միջև, որոնցից երկրորդ խումբը այնուհետև բաժանվում է երկուսի, երեքի, չորսի, և այլն: Առանձին կարելի է համարել *ամբողջի* գաղափարը: Այդ ամենից գառ գոյություն ունի առարկաների խումբ, որոնց համար մեկ կամ երկու թվերը կիրառելի չեն, որոնց մենք համարում ենք անհաշվելիներ»⁶²:

Է. Աղայանը, խոսելով թվի քերականական կարգի մասին նշում է. «Ժամանակակից լեզուների մեծ մասին հատուկ է քերականական երկու թիվ՝ *եզակի* և *հոգնակի*: Բայց կան լեզուներ, որոնք ունեն *եզակի, երկակի (երկու առարկան)* և *հոգնակի (երկուսից ավելի առարկաներ նշելու համար)*: Այդպես է արաբերենը, այդպես են եղել հին հունարենը, հին հնդկերենը և այլն: Կան նաև լեզուներ, որոնք ունեն *եզակի, երկակի, եռակի, քառակի և հոգնակի*: Այդպես են, օրինակ, միկրոնեզյան լեզուները, որոնք ունեն *եզակի, երկակի, եռակի, քառակի* թվեր: Վերջապես, շատ լեզուներում թիվ ունեն ոչ միայն առարկացույց տվող բառերը (գոյականները), այլև բայերը: Բայց բայերի քերականական թիվը սովորաբար ցույց է տալիս ոչ թե գործողության քանակը, այլ դարձյալ առարկայի, այսինքն՝ գործողություն կատարողի քանակային հատկանիշը»⁶³:

Բաժանական, թվարկվող անունների դեպքում եզակին և հոգնակին միմյանց հետ հարաբերակից են: Տարբեր լեզուների դիտարկումները թույլ են տալիս նկատել, որ թվակարգի այդ երկու հիմնական եզրերը՝ եզակին և հոգնակին, կարող են լինել բազմանշանակ:

⁶¹ Տե՛ս Кацнельсон С. Д., Типология языка и речевое мышление, Ленинград, 1972, стр. 27-35.

⁶² Jespersen O., The philosophy of grammar, London, 1924, p. 188.

⁶³ Աղայան Է. Բ., Լեզվաբանության հիմունքներ, Էջ 489-490:

Եզակիի քերականական ձևը կարող է ցույց տալ ինչպես թվարկվող առարկաներից մեկի թվային հատկանիշը, այնպես էլ տվյալ տեսակն ընդհանրապես: Հոգնակին, իր հերթին, նախաառաջ թվակարգային հակադրության եզր է. *տուև-տներ, մեքենա-մեքենաներ*: Սովորաբար այն գոյականներն են ունենում հոգնակի, որոնք թվական լրացում են առնում. *երեք գյուղ>գյուղեր, հինգ ծառ>ծառեր*:

Սակայն տարբեր լեզուների տվյալները ցույց են տալիս, որ թվի ենթակարգերի քանակը կարող է ավելի մեծ լինել՝ ներառելով երկակի, եռակի, մոտավոր արժեքներ⁶⁴:

Օ. Եսպերսենը համարում է, որ հոգնակի թվով ներկայացված առարկաները պետք է ունենան որևէ ընդհանուր, միավորող հատկանիշ: Օրինակ՝ *տանձը* և *խնձորը* կարելի է համարել *երկու միրգ*: Հոգնակիի այս տեսակը, որը վերաբերում է հաշվելի, միմյանցից հստակորեն սահմանազատվող գոյականներին, Եսպերսենն անվանում է *սովորական հոգնակի (normal plural)*: Օրինակ՝ *ծի-ծիեր*, որտեղ հոգնակի ձևը ենթադրում է մեկից ավելի թվով առանձին՝ եզակի ձևով դրված առարկաների հանրահաշվական հանրագումարը⁶⁵:

Թվային համակարգերը չեն սահմանափակվում եզակի-հոգնակի հակադրությամբ: Բացի վերը նշված երկակի (որոշ լեզուների դեպքում՝ նաև այլ թվային արժեքների) թվից, թվային համակարգի մաս են կազմում նաև անհոգնականները, անեզականները, հավաքական գոյականները:

Ինչպես իրավացիորեն նկատում է Ս. Կացնելսոնը, թվային առկայացումից բացի, կարևոր է նաև թվի շարահյուսական կիրառությունը: Նա նշում է. «Թվի՝ առանց բացառության բոլոր ձևերը միավորող գործառույթը թվային համաձայնեցումն է: Ինչպես քերականական սեռը և դասը, թվի քերականական կարգը և սօգտագործվում է համաձայնեցման նպատակով: Համաձայնեցման գործառույթը կախված է թվի բովանդակային գործառույթից: Դրա իրացման համար անհրաժեշտ է, որ թվային ձևեր ունենան ոչ միայն գոյականները, այլև դրանց հետ համաձայնեցվող մյուս խոսքի

⁶⁴ Տե՛ս Shopen T., *Language Typology and Syntactic Description*, vol. 3, New York, 2007, pp. 227-229.

⁶⁵ Տե՛ս Jespersen O., *op. cit.*, pp. 190-191.

մասերը: Բովանդակային գործառույթները վերաբերում են միայն գոյականներին և դրանց հետ համաձայնեցվող բառերի հետ անմիջական կապչուն են: Թվային առկայացումը, որը բովանդակային գործառույթներից ամենաառաջնայինն է, չնայած իր իմաստային կարևորությամբ, քերականական կարգային գործառույթ է, որը ներառի թվի բոլոր քերականական ձևերը: Այն հատուկ է միայն գոյականներին, այն էլ՝ ոչ բոլոր»⁶⁶:

Թվի քերականական կարգի գործառույթները, փաստորեն, չեն սահմանակվում միայն նրաներքին իմաստով: Այն անմիջականորեն կապված է նաև շարահյուսության հետ: Հակառակ դեպքում թվի քերականական գործառույթները կվերաբերեին միայն հաշվելի գոյականներին և որևէ կերպ չէին անդրադառնա մյուս խոսքի մասերի վրա:

Թվի քերականական կարգի՝ տարբեր գործառույթներ ունենալու հանգամանքը պայմանավորում է նաև տարբեր լեզուներում դրա դրսևորման առանձնահատկությունները: Համընդհանուր է միայն վերը նշված թվային առկայացման գործառույթը, որն, ինչպես նշեցինք, պարտադիր կերպով ունի իր քերականական յուրահատուկ արտահայտությունը լեզվի մեջ՝ լինի դա՞նձանցմամբ, սպասարկու բառերով, ներքին թեքմամբ կամ այլ միջոցներով:

Բրիտանացի լեզվաբան Գ. Քորբեթը նշում է, որ սխալ է թիվը համարել սոսկ անվանական քերականական կարգ: Ըստ նրա՝ նման տեսակետն առաջ է եկել հնդեվրոպական լեզուների քերականական կառուցվածքի ազդեցությամբ, քանի որ մինչև վերջին ժամանակները ընդհանուր և տիպաբանական լեզվաբանության ուսումնասիրության առարկան հիմնականում եղել են այդ լեզուները, իսկ աշխարհի տարբեր անկյունների՝ Աֆրիկայի, Հարավային և Հյուսիսային Ամերիկայի, խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի բնիկ լեզուների ուսումնասիրությունները, հատկապես տիպաբանական տեսանկյունից, ավելի ուշ շրջանի արդյունք են: Մինչդեռ, որոշ լեզուներում թվային հատկանիշով օժտված է նաև բայը. տվյալ դեպքում նկատի է առնվում ոչ թե

⁶⁶ Кацнельсон С. Д., ук. соч., стр. 27-35.

գոյականի հետ համաձայնության արդյունքում բայի թվ ընդունելու հանգամանքը, որն իրականում գոյականի թվի հավելյալ արտահայտություն է, այլ հենց բայի արտահայտած գործողությունների քանակական հատկանիշը⁶⁷:

Քորբեթը նաև անդրադառնում է այն հնարավոր բարդություններին, որոնք կարող են առաջ գալ տարբեր լեզուների թվային համակարգերը միմյանց հետ համեմատելու ընթացքում: Նա նշում է, որ պետք է ուշադրություն դարձնել վերաբերվել տվյալ համեմատության մեթոդին, որպեսզի վերլուծության ենթարկվեն համադրելի արժեքները՝ հաշվի առնելով նաև տարբեր լեզուներում միևնույն տերմինաբանական եզրույթների՝ տարբեր իմաստներով կիրառումը: Նա, մասնավորապես, առանձնացնում է «*հավաքական թիվ*» եզրույթը, որը կիրառվում է բազմաթիվ, երբեմն իրար հետ անմիջական աղերս չունեցող իմաստներով⁶⁸:

Պետք է նաև առանձնակի ուշադրություն դարձնել այն դեպքերին, երբ միմյանց հետ համեմատվում են եզակի-հոգնակի և եզակի-երկակի-հոգնակի հակադրություններ ունեցող լեզուները, քանի որ առաջին տիպի լեզուների հոգնակին իմաստային տեսանկյունից «ծածկում է» երկրորդ տիպի լեզուների և՛ երկակին, և՛ հոգնակին: Իսկ ինչ վերաբերում է հենց երկակի թվին, ապա այս դեպքում հաճախ տվյալ լեզվի գոյականների միմասի համար երկակի թվի առկայությունը չի նշանակում, որ այն պարտադիր է ողջ լեզվական համակարգի համար, և կարող է ունենալ միայն սահմանափակ կիրառություն:

1.2. ԲուՆ թվային իմաստներ. եզակի եվ հոգնակի

Չայերենում թվի քերականական կարգը արտահայտվում է եզակի և հոգնակի հակադրությամբ: Այս երկեզր հակադրության մեջ եզակի թիվը ցույց է տալիս առաջին եզրը՝ այսինքն այն, որ խոսքի առարկան մեկն է: Հոգնակի թիվը ցույց է տալիս նույն հարաբերության երկրորդ եզրը՝ այսինքն այն, որ խոսքի առարկան

⁶⁷ Տե՛ս Corbett, G. G. , Number, Cambridge, 2004, pp. 3-6.

⁶⁸ Նույն տեղում:

մեկից ավելի է: Վ. Արակինը այս մասին նշում է. «Թվի քերականական կարգը ցույց է տալիս քանակային հարաբերությունները, որոնք գոյություն ունեն իրականության մեջ և արտացոլված են տվյալ լեզվի կրողների գիտակցության մեջ, ինչպես նաև ունեն համապատասխան ձևաբանական արտահայտություն»⁶⁹:

Ընդհանրապես հնդեվրոպական լեզուների մեծ մասին հատուկ է երկեզր թվակարգը, չնայած որոշ արխայիկ լեզուներում առկա է նաև երկակի թիվը: Այն մնացուկային ձևով կարող է հանդիպել այն լեզուներում, որոնք ունեն միայն եզակի և հոգնակի թիվ⁷⁰:

Յ. Աճառյանը, խոսելով թվի քերականական կարգի մասին, նշում է. «Նախնական մարդը գիտեր հաշվել միայն երեք թիվ, այն է՝ մեկ, երկու, երեք, վերջինը հոմանիշ է շատության և բազմության գաղափարին: Յին եգիպտական մեհենագիր արձանագրությանց մեջ, երբ ուզում էին մի բան հոգնակի դնել, գաղափարանշանը նկարում էին երեք անգամ, կամ նրա կողքին երեք գիծ էին քաշում. նույն ոճով գրաբարի մեջ ունեինք *երեքալյան, երեքթշուռ առեան, եռատենչ, եռամեծար* և այլն, որոնց իմաստն է՝ «բազում ալիքներ ունեցող» և այլն»⁷¹:

Յ. Պետրոսյանը, խոսելով հայերենի թվակարգի մասին, նկատում է. «Թվակարգը մեկի և մեկից ավելի քանակային հարաբերության իմացական ասպեկտի քերականական դրսևորումների ամբողջությունն է: Եվ քանի որ այդ հայեցակետն ամբողջանում է իբրև երկու (կամ երեք) մոմենտներով, ուստի ունենք թվային երկու՝ եզակի և հոգնակի (կամ երեք՝ եզակի-երկակի-հոգնակի) ենթակարգեր: Սրանք թվակարգի *բուս ենթակարգերն են*»⁷²:

Գ. Ջահուկյանը, անդրադառնալով ժամանակակից հայերենի թվակարգի իմաստային արժեքներին, առանձնացնում է հետևյալները⁷³. միաթվություն և անմիաթվություն (եզակիություն

⁶⁹ Аракин В. Д., Сравнительная типология английского и русского языков, Москва, 2005, стр. 103-104.

⁷⁰ Ст' у Красухин К. Г., Введение в индоевропейское языкознание, Москва, 2004, стр. 110.

⁷¹ Աճառյան Յ., Լիակատար քերականություն և հայոց լեզվի համեմատություն ամբ 562 լեզուների, հ. III, Երևան, 1957, էջ 174:

⁷² Պետրոսյան Յ. Զ., Գոյականի թվի կարգը հայերենում, Երևան, 1972, էջ 35:

⁷³ Ջահուկյան Գ. Բ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 183-184:

և հոգնակի ությունն)⁷⁴, միասնական ություն և
ամիասնական ություն⁷⁵, և իհասականշայն ություն և
անլիհասականշայն ություն (մենահասականշայն ություն)⁷⁶,
վերացական ություն և անվերացական ություն
(թանձրացական ություն)⁷⁷:

Ինչպես տեսնում ենք, ներկայացված օրինակներից միայն
առաջինն է վերաբերում բուն թվի քերականական իմաստին, իսկ
մնացած երեք դեպքերը թվային հարաբերությունների ոլորտից
դուրս են:

Ժամանակակից պարսկերենի թվակարգը ևս ներկայանում է
եզակի-հոգնակի հարաբերակցությամբ: Այս անվանական
քերականական կարգը պարսկերենում ունի հստակ և որոշակի
դրսևորում: Հնագույն հնդեվրոպական եռանդամ թվային
հակադրությունը (եզակի-երկակի-հոգնակի) ժամանակակից
պարսկերենում, ինչպես և հայերենում, չի պահպանվել, և իր տեղը
գիջել է երկանդամ՝ եզակի-հոգնակի հակադրությանը: Հաշվելի
գոյականների դեպքում եզակին, բնականաբար, ցույց է տալիս մեկ
առարկան, հոգնակին՝ մեկից ավելի⁷⁸:

Պարսկերենում, ինչպես և հայերենում, թվակարգի
իմաստաբանական բնութագիրը չի սահմանափակվում միայն բուն
քանակային իմաստների արտահայտմամբ: Այն ներառում է
առարկաների, երևույթների միջև ավելի բարդ տրամաբանական,
հոգեբանական հարաբերությունների արտահայտման գործառնություն:
Հոգնակի ձևեր կազմվում են ինչպես սովորական, հաշվելի

⁷⁴ Տվյալ անվամբ նշանակվող մեկ առարկա, թե մեկից ավելի առարկաներ
նշանակելը՝ տուև-տներ, քաղաք-քաղաքներ, մարդ-մարդիկ, կին-կանայք և այլն:

⁷⁵ Անընդհատական ություն և ընդհատական ություն, անբաժանական ություն և
բաժանական ություն, անհաշվական ություն և հաշվական ություն՝ տվյալ անվամբ
նշանակվող առարկաները կամ զանգվածը որպես մեկ ամբողջ ություն, թե
բաժանված, տեսակավորված առնելը՝ ջուր-ջրեր, խնձոր-խնձորներ:

⁷⁶ Տվյալ անվամբ նշանակվող առարկան որպես հատկանիշների մեկ ամբողջ ություն
(որակ). թե որպես մեկ հատկանիշի կրող (այդ թվում՝ նաև տվյալ անունը կրող)
առնելը՝ Գրիգոր-Գրիգորներ (Գրիգորի մեկ կամ մի քանի հատկանիշներն
ունեցողներ կամ Գրիգոր անունը կրողներ), Գրիգոր-Գրիգորեք (մարդիկ, որոնց
համար ընդհանուր է Գրիգորի հետկապված լինելու հատկանիշը) և այլն:

⁷⁷ Տվյալ անվամբ նշանակված հասկացության՝ վերացական, թե թանձրացական
առնվելը՝ հասկացություն հասկացություններ: (73-76 սահմանումները՝ ըստ Գ.
Ջահուկյանի, տե՛ս հղում թիվ 72):

⁷⁸ Տե՛ս Рубинчик Ю. А., Грамматика современного персидского литературного языка, РАН, Москва,
2001, стр. 161.

գոյականներից, այնպես էլ վերացականներից, նյութականներից և այլն: Պարսկերենի հոգնակիի ձևերը կարող են նաև արտահայտել ծավալի, հավաքականության, տեսակի իմաստավորումներ:

Իրանցի լեզվաբանները պաշտպանում են այն տեսակետը, ըստ որի՝ պարսկերենի թվակարգը բնույթով երկանդամ է, սակայն միաժամանակ իրենց աշխատությանն են ներդրում առանձնացնում են երկակի իմաստարտահայտող բառերի մի խումբ, որոնք ընդհանուր անվանումով կոչվում են تشبيه/tasnie⁷⁹:

طرف/taraf- طرفین/tarafeyn- اطراف/atrāf - կողմ- կողմեր (երկու)- կողմեր (շատ)

Սակայն պետք է նկատել, որ նշված երկույթը հատուկ է միայն որոշ արաբերենից փոխառյալ սահմանափակ բառերի, իսկ երկակի թվի ենթակարգն արաբերենում առկա է և լայնորեն կիրառելի: Սակայն այս դեպքում գործ ունենք ոչ այնքան քերականական իմաստների, այլ պարզապես որոշ երկակի բառաձևերի փոխառության հետ. հետևաբար նշված օրինակները չեն կարող մեզ համար հիմք ծառայել՝ խոսելու պարսկերենում առկա երկակի թվի ենթակարգի մասին: Ընդհանրապես, երկակի թվի ներառումը թվակարգի մեջ կարող է լինվին փոխել դրանում առկա իմաստային արժեքների միջև առկա հարաբերությունը: Այսպես, եթե երկանդամ հակադրության վրա հիմնված թվակարգում հոգնակին ցույց է տալիս մեկից ավելի իմաստավորումը, ապա այս դեպքում հոգնակին կպարունակի երեք և ավելի իմաստ:

Ինչ վերաբերում է երկակի կիրառությանը հայերենում, ապա այն մնացուկային ձևով, առանձին բառերի օրինակով արձանագրված է հայերենի մի խումբ բարբառներում: Երկակի թվի քարացած ձևեր կարելի է համարել մարմնի զույգ մասերի անվանումները՝ *աչք, ձեռք, ոտք*: Դետրոսյանը գտնում է, որ դրանց մեջ *ք*-ն դիտարկվում է որպես հին երկակի քերականական ցուցիչ, որը ժամանակի ընթացքում զրկվել է իր այդ իմաստից⁸⁰:

⁷⁹ علی نژاد، بتول، تقی طیب، سید محمد، نگاهی به دستگاه شمار اسم در فارسی معاصر، مجله علوم اجتماعی و انسانی دانشگاه شیراز، شماره سوم

/ Alinezhad A., Taghitayeb S. M., “Negāhi be dastgāh-e shomār-e esm dar fārsi-e moāser” Majale-ye olum-e ejtemāyi va ensāni dānshgāh-e Shirāz., No. 48, Shirāz, 1385, pp. 158-170.

⁸⁰ Պետրոսյան Յ. Զ., Գոյականի թվի կարգը հայերենում, էջ 76:

Այլ կերպասած, կարող ենք նշել, որ հայ երեւոյժ երկակի թիվը, որպէս թվակարգի առանձին ենթակարգ, գոյ ու թյ ու ն չ ու ն ի:

1.3. Բացարձակ թիվ

Խոսքային կիրառոյթան մեջ կարող են պատահել իրավիճակներ, երբ թվային իմաստի արտահայտոյթ ու նը քերականորեն կարևոր չէ և մղված է հետին պլան, այսինքն՝ առկա է եզակի ու թյան և հոգնակի ու թյան հակադրոյթան չեզոքացում: Դա հնարավոր է այն դեպքերում, երբ տվյալ գոյականը դիտարկվում է որպէս համընդհանուր անուն և ցույց է տալիս տվյալ հատկանիշով առարկան ընդհանրապէս: Օրինակ՝

Ես փողոցում շուն տեսա:

Տվյալ օրինակը չի հստակեցնում, թե խոսքը քանի շան մասին է, այլ նշանակում է այդ կենդանիներին ընդհանրապէս, քանի որ ենթատեքստից պարզ է, որ առաջնային կարևորոյթ ու ն ու ն ի ոչ թե գոյականի թվային բնութագիրը, այլ նրատեսակային հատկանիշը:

Գ. Քորբեթը, դիտարկելով բազմաթիվ լեզուներ աշխարհի տարբեր մասերից, գալիս է այն եզրահանգման, որ նման դեպքերում լեզուները միևնույն քերականական վարքագիծը չեն դրսևորում: Օրինակ՝ մի շարք աֆրիկյան լեզուներում գոյականը որպէս ընդհանուր հասկացոյթ ու ն կիրառվելիս, երբ թվային իմաստավորումը էական չէ, կիրառվում է հատուկ քերականական ցուցիչով, առանձին մասնիկներ ու ն են նաև եզակի ու հոգնակի թվերը: Այլ լեզուներ, ինչպէս անգլերենը, հնարավորոյթ ու ն չեն տալիս խուսափելու խոսքի մեջ կիրառված գոյականի թիվը հստակեցնելու ց⁸¹:

Իսկ ահայն լեզուները, որոնք հնարավորոյթ ու ն են տալիս չեզոքացնելու գոյականի թվային հայեցակետը, սակայն չ ու ն են տվյալ իմաստն արտահայտող հատուկ քերականական ձև, բնականաբար այդ նպատակի համար պետք է օգտագործեն եզակիի կամ հոգնակի ձևերը⁸²:

⁸¹ Տե՛ս Corbett, G. G., Number, pp. 9-12.

⁸² Պետք է նշել, որ նշված երկու տարբերակներից երկրորդը բավականին հազվադեպ երևույթ է. Քորբեթը բերում է միայն մի քանի, խիստ փոքրաքանակ խոսողներ

Հայերենը պատկանում է այն լեզուների թվին, որտեղ գոյականի ընդհանրական, առանց թվի ընդգծման իմաստավորումն արտահայտվում է եզակի ձևի մեջ: Եզակի բառաձևը բազմանշանակ է և՛ բառային իմաստավորումների, և՛ քերականական արժեքայնության տեսանկյունից: Այս կապակցությամբ Յ. Պետրոսյանը նշում է. «Եզակի բառաձևը բազմանշանակ, տարաֆունկցիոնալ է և՛ լեքսիկական իմաստավորումների տեսանկյունից, և՛ քերականական արժեքայնությամբ... Եթե ասում են, թե եզակի թիվը ցույց է տալիս առարկայի եզակիությունը, մեկ հատ լինելը, ապա բնականաբար սավերաբերում է այնպիսի գոյականներին, որոնք ունեն եզակի-հոգնակի հարաբերակցություն, հակադիր այդպիսի ձևեր, այսինքն՝ այդ գոյականները թվարկվող առարկաների անուններ են»⁸³:

Նման տեսակետ է հայտնում նաև Է. Աղայանը. «Եզակի թիվը որևէ նյութական ձևույթով չի արտահայտվում, ուստի և գոյականների եզակի թվի տեսանկյունից ձևաբանորեն աննշույթ է... Եզակի ձևերը քանակություն ցույց չեն տալիս, եզակին աննշույթ է ոչ միայն ձևական, այլև իմաստի տեսակետից, ըստ որում կարող են ցույց տալ և՛ մեկ առարկա, և՛ առարկաների շատություն (եզակին հոգնակի իմաստով), և՛ առարկաների բազմություն առանց քանակային բնութագրման (հավաքական գոյականներ), և՛ քանակական բնութագրող բացակայություն առհասարակ (վերացական գոյականներ)»⁸⁴:

Ոչ ընդգծված թվային իմաստն արտահայտելու հարցում պարսկերենը ևս կիրառում է նույն սկզբունքը, ինչ որ հայերենը: Այստեղ նույնպես եզակիաձև գոյականը կարող է նշանակել ինչպես թվով մեկ հատ առարկա, այնպես էլ կիրառվել որպես տվյալ առարկաների դասի ընդհանրացված անվանում⁸⁵: Օրինակ՝

ثريا در خانه کار می کرد، پیراهن می دوخت.

Sorayā dar khāne kār mi kard, pirāhan (եզ. ձև) mi dukht.

ուներցող աֆրիկյան լեզուներ, ընդ որում՝ հոգնակի ձևի՝ թվակարգից դուրս կիրառությունը նույնիսկ այս դեպքում սահմանափակ է:

⁸³ Պետրոսյան Յ. Զ., Գոյականի թվի կարգը հայերենում, էջ 36-37:

⁸⁴ Աղայան Է. Բ., Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967, էջ 249:

⁸⁵ Տե՛ս Рубинчик Ю. А., Грамматика современного персидского литературного языка, стр. 108.

Սորայ ան աշխատում էր տանը, վերևաշափկ էր կարում:

Ինչպես կարող ենք եզրակացնել նշված նախադասություններից, *վերևաշափկ* բառը կարելի է մեկնաբանել և՛ որպես եզակի, և՛ որպես հոգնակի: Թեև, պետք է նշել, որ նախադասության ենթատեքստում հասկացվում է մշտապես կատարվող գործողության իմաստը և ավելի նկատելի է նշված գոյականի հոգնակի իմաստը:

Ի. Սմիռնովան համարում է, որ ընդհանրապես իրանական լեզուներում *ձևաբանորեն աննշույթ անունը* (*неоформленное имя*) չի պարունակում թվի, ինչպես նաև որևէ այլ քերականական իմաստ և չեզոք է ցանկացած քերականական կարգի նկատմամբ⁸⁶:

Յեղիևակը այս համատեքստում տարբերակում է զրո ձևույթով գոյականը, որն, ըստ նրա, որևէ քերականական հակադրությունների հարացույցի անդամներից մեկն է՝ որոշակի քերականական նշանակությամբ, և վերը նշված՝ *ձևաբանորեն աննշույթ անունը*: Ըստ նրա, երկրորդի դեպքում, ի տարբերություն առաջինի, քերականական ձևույթի բացակայությունը նշանակում է նաև դրան համարժեք քերականական իմաստի բացակայություն, մինչդեռ *զրո վերջավորությունը* անպայման քերականական իմաստ է արտահայտում: Մինևույն ժամանակ, *չձևակերպված անվան* քերականակորեն չեզոք լինելու հանգամանքը հնարավորություն է տալիս նրան հանդես գալու տարբեր քերականական իմաստներով, որոնք արտահայտվում են խոսքի ենթատեքստում⁸⁷:

Ենթատեքստը, սակայն, քերականական իմաստներ արտահայտելու հարցում միայն սահմանափակ միջոցներ ունի, և թվային իմաստը այստեղ կարող է միայն անուղղակի կերպով արտահայտվել, օրինակ՝

پسرش را پیشه زده بود.

pesaraš rā pašē (եզ. ձև) zade bud.

Նրա որդուն մոծակ (մոծակներ) էր (էին) կծել:

Թեև նախադասությունը ենթադրում է, որ խոսքը ընդհանրապես *մոծակների* մասին է, և տվյալ ենթատեքստում դրանց թիվը էական չէ, այնուհանդերձ նախադասության ձևակերպումը չի բացառում

⁸⁶ Տե՛ս Смирнова И. А., Категория числа в языках с немаркированным именем (на материале иранских языков), Вопросы языкознания, н. 2, 1981, стр. 77-88.

⁸⁷ Նույն տեղում, էջ 80:

այն ախիսի մեկնաբանություն, ըստ որի խոսքը կարող է լինել միայն մի *մոծակի* մասին:

Այստեղ անհրաժեշտ է նշել նաև այն հանգամանքը, որ պարսկերենում թվի քերականական կարգը սերտորեն կապված, որոշ դեպքերում նույնիսկ միահյուսված է առկայացման քերականական կարգի հետ: Եթե վերադառնանք նախորդ օրինակին, ապա կարող ենք նշել, որ տվյալ գոյականը շեշտված եզակիության իմաստ կարող է ստանալ այն դեպքում, երբ նրա հետ դրվում է *ی/ye(i)* անորոշ հոդը, որը միաժամանակ պարունակում է երկու քերականական իմաստ. մի կողմից արտահայտում է խոսողի համար առարկայի անձանոթ լինելու կամ խոսքում առաջին անգամ հիշատակվելու հանգամանքը, մյուս կողմից՝ դրան օժտում է անուղղակի թվային՝ եզակիության բնութագրիչով:

پسرش را پشه ای زده بود.

pesaraš rā **pašei** zade bud.

Նրա որդուն **մի մոծակ** էր կծել:

Այս երկրորդ իմաստավորմամբ այն կարելի է գուգադրել հայերենի *մի* անորոշ առման մասնիկի հետ, որն իր հերթին իմաստաբանորեն, ինչպես նաև ծագումնաբանորեն հանգում է *մեկ* թվականին:

1.4. Անհոգնականներ և անեզականներ

Անհոգնականությունը և անեզականությունը թվի քերականական կարգի յուրաքանչյուր դրսևորումներ են, որ հատուկ են այն գոյականներին, որոնք իրենց իմաստային կառուցվածքի մեջ ունեն բառիմաստին անմիջականորեն կապված թվային իմաստ, որը բացառում է հակադիր իմաստի առկայությունը: Այլ կերպ ասած, անհոգնականները և անեզականները չունեն թվային իմաստի հակադիր ձևերից մեկը, կամ եթե այն առկա է, ապա ցույց չի տալիս եզակի և հոգնակի իմաստային որոշակիացում⁸⁸:

Բազմաթիվ էզոնների հետազոտությունները ցույց են տալիս, որ թվի քերականական կարգը չի ենթադրում միայն և միայն

⁸⁸ Տե՛ս և Кацнельсон С. Д., ук. соч., стр. 28-29.

քանակական իրողությունների արձանագրում, ինչպես, օրինակ, որևէ առարկայի մեկ կամ մի քանի հատ լինելու հանգամանքը: Գոյականների մի մասի պարագայում կիրառվելիս թվի գաղափարը կարող է արտահայտել տարբեր նրբերանգային իմաստներ, որոնք ուղղակիորեն չեն հանգում քանակի հասկացությանը⁸⁹:

Անհոգնական (Singularia tantum) կոչվում են այն բառերը, որոնք չունեն եզակիին համապատասխան հոգնակիի ձևեր, կամ եթե ունեն, ապա այդ հոգնակին կազմված է բառիմաստի խզումով: Գոյություն ունեն բուն անհոգնականներ, որոնք թվակարգից դուրս են, նրանցից հոգնակի ձևեր կազմել հնարավոր չէ, և կան բառիմաստային ուրույն հատկություններով խմբավորումներ, որոնք հարաբերականորեն անհոգնական են⁹⁰:

Այս դեպքում կարող է հարց առաջանալ, որ եթե անհոգնականությունը և անեզականությունը բառիմաստով պայմանավորված երևույթներ են, ի՞նչ նպատակ ունի դրանց դիտարկումը երկու լեզուներում թվի քերականական կարգի սահմաններում՝ գուգադրական-տիպաանական տեսանկյունից: Դա, նախևառաջ, պայմանավորված է նրանով, որ անհոգնականները և անեզականները արտահայտում են թվի քերականական իմաստի հիմնական բաղադրիչին՝ քանակի հասկացությանը հարող որոշակի իմաստներ, որոնց անտեսումը թերի է դարձնում թվի քերականական կարգի բնութագիրը:

Հայերենում սովորաբար առանձնացվում են անհոգնականների հետևյալ խմբերը՝ *զանգվածա-նյութայնություն, վերացական անհոգնական գոյականներ, անհոգնական հավաքականներ, անհոգնական հատուկ անուններ և եզակի՝ բնություն մեջ մեկ հատ առարկայի անուններ*:

Պարսկերենում, ըստ էության, չկան այնպիսի գոյականներ, որոնցից ձևաբանորեն հնարավոր չլինի կազմել հոգնակի ձևեր: Այլ կերպ ասած, պարսկերենում բուն անհոգնականներ չկան, այլ կան հարաբերական, ենթատեքստային անհոգնականներ:

Ընդհանրապես անհոգնականները չունեն հատուկ կառուցվածքային գիծ: 3. Պետրոսյանը նշում է.

⁸⁹ Տե՛ս Storch A. and Dimmendal G. J., op. cit., pp. 1-3.

⁹⁰ Տե՛ս Պետրոսյան Զ. 2., Գոյականի թվի կարգը հայերենում., էջ 44-45:

«Անհոգնականությունը պայմանավորող գործոնները աշխարհի տարբեր լեզուներում ունեն իմացական (իմաստային) ընդհանրական հիմունքներ, սակայն կառուցվածքային որոշ գծեր, յուրահատկություններ երբեմն նեղացնում կամ լայնացնում են նրա դրսևորումների շրջանակը»⁹¹:

Անհոգնականներին բնորոշ ոչ մեծաթիվ քերականական յուրահատկություններից կարելի է նշել, օրինակ, այն, որ դրանք թվական լրացում սովորաբար չեն ընդունում, իսկ նախադասության մեջ որպես ենթակա կիրառվելիս պահանջում են եզակի թվով դրված ստորոգյալ :

Ինչպես նշվեց, անհոգնական են հատուկ անունները, որոնք իրենց ուղիղ իմաստով կիրառության դեպքում բացառում են հոգնակի թիվը: Դետրոսյանը հատուկ անվան անհոգնական լինելու հանգամանքը մեկնաբանում է հետևյալ կերպ. «Հատուկ անունը, նշանակելով միայն անհատը, բացառելով այդ անհատը ներկայացնող տեսակի մնացած անդամները՝ բացառում է նաև կառուցվածքային այն միջոցները, որոնք մեկից ավելի ընդգրկումների համար են, այսինքն՝ չեզոք է դառնում հոգնակիակազմության նկատմամբ»⁹²:

Այնուամենայնիվ, պայմանավորված ենթատեքստով, հայերենում երբեմն հնարավոր է հատուկ անունների հոգնակի թիվ ընդունելը: Պետք է, սակայն, նշել, որ այս երևույթը հիմնականում հատուկ է գրական-գեղարվեստական ստեղծագործությունների լեզվին:

Հայերենում հատուկ անունները հոգնակի թվով կիրառվում են հազվադեպ՝ արտահայտելով որոշ առանձնահատուկ նշանակություններ.

1. տարբեր անձեր կամ տեղանուններ, որոնք նույն անուն ունեն, օրինակ.

Դպրոցում բազմաթիվ Արմեններ, Արամներ, Անահիտներ կան:

2. նույն ընտանիքի կամ գերդաստանի անդամներ, ամուսիններ, օրինակ.

Պողոսյանները ավանդապահ ընտանիք են:

⁹¹ Նույն տեղում:

⁹² Նույն տեղում, էջ 51:

3. տվյալ հատուկ անվանը բնորոշ ընդհանուր տիպական նշանակությունը ամբօժտված անձինք՝

Հայ ժողովուրդը Վարդան Մամիկոնյ աններ շատ է ծնել :

Պարսկերենում, ի տարբերություն հայերենի, հատուկ անունը կարող է հոգնակի թիվ ստանալ միայն վերը նշված իմաստներից երրորդով կիրառվել իս⁹³: Օրինակ՝

ایران در دامن خود فردوسی ها و حافظ ها پروده است.

Iran dar dāman e khod ferdowsihā va hāfezhā parvarde ast.

Իրանը իր գրկում Ֆիրդուսիներ և Հաֆեզներ է մեծացրել :

Ինչ վերաբերում է հայերենում հատուկ անվան հոգնակի թիվ ընդունելու նշված դեպքերից առաջին և երկրորդ տարբերակներին, ապա պարսկերենում դրանք չեն կիրառվում:

Անհոգնականների թվային առկայացման տարածված միջոցներից մեկը թվականի հետորևէ պայմանական միավորի կիրառությունն է, որ հատուկ է նյութազանգվածայնության գոյականներին: Օրինակ՝ *մի շիշ ջուր, երկու պարկ ալյուր, հինգ կապցախն այլն*⁹⁴:

Եվ՝ հայերենում, և՛ պարսկերենում բառի մեջ իմաստային երանգավորումների և լրացուցիչ իմաստավորումների հետևանքով կարող է փոխվել անհոգնականի քերականական վարքագիծը, երբ անհոգնականը ձեռք է բերում հոգնակիի քերականական ձև: Իմաստաբանական տեսանկյունից այդ հոգնակի ձևերը երկու լեզուներում որոշ դեպքերում կարող են ունենալ նման իմաստներ, իսկ որոշ այլ դեպքերում՝ տարբեր:

Երկու լեզուներում էլ կան մի շարք նյութ-ցույց տվող գոյականներ, որոնց հոգնակի ձևը արտահայտում է տվյալ նյութի տեսակների գաղափարը, օրինակ՝

روغن- روغنها

յ ու ղ-յ ու ղ եր/roughan-roughanhā

این کارخانه روغنهایی ماشین تولید می کند.

In kārkhāne roughanhaye mashin toulid mi konad.

⁹³ تهران: اساطیر / Šariat, M. J., "Dastur-e zabān-e fārsi", Tehran, Asātir, 1364, p. 178.

⁹⁴ Ст' у Кацнельсон С. Д., ук. соч., стр. 30:

Այս գործարանը ավտոմեքենայի յոլդեր է արտադրում:

شراب- شرابها

գինի-գինիներ/sharāb-sharābhā

شرابهای فرانسوی خیلی مشهور هستند.

Sharābhāye farānsavi kheili mashhur hastand.

Ֆրանսիական գինիները շատ հայտնի են:

فلز- فلزها

մետաղ-մետաղներ/felez-felezhā

Աگر چه شباهتهای زیادی بین فلزها وجود دارد، تفاوتهایی نیز دارند که مشخص می‌کند یک فلز تا چه حد برای یک کاربرد خاص مناسب است.

Agarche shabāthāye ziādi beyn e felezhā vojud dārad, tafāvōtha niz darand ke moshakhas mi konad yek felez tā che had baroye yek kārbord e khasi monāseb ast.

Չնայած մետաղների մեջ նմանություններ կան, բայց տարբերություններ նույնպես կան, որոնք ցույց են տալիս թե տվյալ մետաղը այս կամ այն կիրառություն համար որքան է պիտանի:

گندم- گندمها

հացահատիկ-հացահատիկներ/gandom-gandomhā

کل افست به 3 درصد نیز نمی‌رسد که نشان دهنده‌ی کیفیت بالایی گندم‌ها است.

Kol e oft 3 darsad niz nemi resad ke neshān dahandeye keyfiyat bālāye gandomhā ast.

Ամբողջ կորուստը չի հասնում նույնիսկ 3 տոկոսի, որը հացահատիկների բարձր որակի ապացույցն է:

Պարսկերենում որոշ անհոգևակների հոգևակի ձևը ցույց է տալիս տվյալ առարկայի մեծ ծավալ, օրինակ՝

پشم- پشمها

pashm-pashmhā/ բուրդ- 0

یکی از رسوم دامداران این است که در تابستان هر سال، پشم‌های بدن گوسفندان‌شان را کوتاه می‌کنند.

Yeki az rosum e dāmdārān in ast ke bar tābestān har sāl pashmhāye badan e gusfandāheshan rā qutāh mi konand.

Անասնապահների պարտականություններից մեկն այն է, որ ամեն ամառ խուզող մենիրենց ոչխարների բուրդը:

چربی- چربیها

ճարպ-ճարպեր/charbi-charbihā

روش سوزاندن چربی‌های شکم و کنار پهلو پیدا شده است.

Ravesh e suzāndan e charbihaye shekam va kenār e pahlu peydā shode ast.

Որովայնի և կողերի ճարպերից ազատվելու միջոցը գտնվել է:

Անհոգականների մեկ այլ խումբ են կազմում վերացական գոյականները: Դրանք արտահայտում են միասեռ հատկանիշի ընդհանրությունը, իրենց ուղղակի իմաստներով չեզոք են թվի կարգի նկատմամբ, ուստի համարվում են անհոգնական: Դրանք ցույց են տալիս ոչ նյութական հասկացություններ՝ հատկություն, գործողություն, դրություն, մարդու հոգեկան կամ մտավոր գործունեություն:

Հայերենում հոգնակիի ձև կարող են ստանալ գործողություն և հատկություն ցույց տվող մի շարք վերացական բառեր, որոնք լեզվագործածության ընթացքում ձեռք են բերել որոշակի թանձրացական իմաստային երանգավորում, օրինակ՝ *հիշողություն և հիշողություններ, ցանկություն և ցանկություններ*:

Անհոգնական են նաև մի շարք վերացական գոյականներ, որոնք արտահայտում են հոգեկան կամ ֆիզիոլոգիական երևույթներ՝ *սեր, կամք, վարք, համակրանք*, և այլն: Այս խմբի բառերն իրենց բուն նշանակությամբ անհոգնական են, սակայն որոշ գեղարվեստական կիրառությունների դեպքում հնարավոր է դրանց հոգնակի թվով գործածումը, օրինակ՝ «*Արցունքով լվացված սերեր*» (Հ. Սահյան):

Բնության որոշ երևույթներ, պայմանավորված իրենց իմաստային առանձնահատկություններով, անհոգնական են, սակայն երբ արտահայտում են տվյալ երևույթի առանձին պահերի շարք, բազմադեպություն, կարող են հոգնակի կազմել՝ *շոգ-շոգեր, ցուրտ-ցրտեր, սառնամանիք-սառնամանիքներ*:

Պարսկերենի վերացական գոյականները՝ հոգնակի կազմելու տեսանկյունից կարող ենք պայմանականորեն բաժանել մի քանի խմբերի.

1. վերացական գոյականներ, որոնք չեն կարող ունենալ հոգնակի ձև- *اسارت/ esārat- գերություն և, غرور/ghorur- հպարտություն և, فقر/foqr- աղքատություն և, پیری/piri- ծերություն և*:
2. վերացական բառեր, որոնք լեզվագործածության ընթացքում ձեռք են բերել որոշակի առարկայական իմաստ-

مهربيانى ها-مهربيانى / mehrabani- mehrabaniha-բարոն թյ ու ն-
բարոն թյ ու ններ, شايستگيها/شايستگي/shāyastegi/shāyastegiha-
կարող ու թյ ու ն/կարող ու թյ ու ններ:

3. վերացական բառեր, որոնց եզակի ձևը նշանակում է մի բան, հոգնակին՝ այլ բան- تشكيل-تشكيلات/tashkil-tashkilat- կառուցվածք, բաղադրող ու թյ ու ն /կազմակերպող ու թյ ու ն, تشریف-
تشریفات/tashrif-tashrifat- պատիվ-արարողակարգ:

Անհաջ վելի գոյականների մյուս խումբը անեզականներն են (Pluaralia tantum): Դրանք ունեն միայն հոգնակի ձև, իսկ եզակի բառաձևը իսպառ կամ գրեթե իսպառ բացակայում է: Անեզականները նույնպես կարելի է պայմանականորեն բաժանել երկու խմբի՝ բուն անեզականներ, որոնք ընդհանրապես չունեն եզակի ձևեր, և եզակի-հոգնակի անհամարժեքությամբ պայմանավորված անեզականներ: Անեզականների կիրառությունը և՛ հայերենում, և՛ պարսկերենում խիստ սահմանափակ է: Հայերենի պարագայում անեզականությունը մեծ տարածում է ունեցել գրաբարում, սակայն ժամանակակից հայերենում անեզականների քանակը փոքր է: Անեզական են, մասնավորապես, հոգնակի ձևով կիրառվող մի շարք հատուկ անուններ: Սակայն այդ հատուկ անունները, որոնք ոչ միայն հայերենում, այլև ուրիշ լեզուներում հանդես են գալիս որպես ձևով անեզականներ, պարսկերենում չունեն հոգնակի քերականական ցուցիչ: Օրինակ՝

آلپ / ālp – Ալ պեր

مالديو / māldiv- Մալ դիվներ

فيلپين / filipin- Ֆիլիպիններ

Այս երևույթը պարսկերենին վերաբերող լեզվաբանական գրականության մեջ մինչև այժմ որևէ կերպ մեկնաբանված չէ: Մենք կարող ենք ենթադրել, որ այս դեպքում հատուկ անունների անհոգնական լինելու կանոնը պարսկերենում չափազանց խիստ և հստակ է գործում, որ անհնար է դարձնում որևէ հատուկ անվան հոգնակի քերականական ցուցիչի հավելումը:

Պարսկերենի անեզականների թվին կարելի է դասել նաև արաբերենից փոխառյալ թեքական հոգնակի մի շարք բառաձևերը,

որոնց եզակին պարսկերենում ընդհանրապես կամ գրեթե չի կիրառվում⁹⁵: Օրինակ՝

آمال / *āmāl*- հոռյ սեր, ակնկալ իքներ (արաբ. եզ.՝ *أمل / amal*)

مآثر / *maāser*- քաջագործություններ (արաբ. եզ.՝ *مآثره / masere*)

Պարսկերենում նշված բառերի եզակին նշելու համար օգտագործվում են այլ հոմանիշներ:

1.5. Հավաքական թիվ

Հավաքական թիվը արտահայտում է միասեռ, որոշակի հատկանիշով միավորվող առարկաների ամբողջություն, բազմություն:

Է. Աղայանը նշում է. «Բացի եզակի և հոգնակի թվերից՝ գոյություն ունին նաև թվի մեկ այլ արտահայտություն՝ այսպես կոչված *հավաքական թիվ*: Կան բազմաթիվ բառեր, որոնք արտահայտում են առարկաների քանակը ոչ թե որպես եզակի (մեկ) կամ հոգնակի (մեկից ավելի), այլ որպես հավաքական ամբողջություն. օրինակ՝ «*Համալ սարանի ու սանոդությունը հաջողությամբ ավարտեց քննաշրջանը*» նախադասության մեջ *ուսանողություն* բառն արտահայտում է մի հավաքական ամբողջություն, և եթե այդ միտքը հաղորդելու լինեինք այլ կերպ, պետք է ասեինք՝ *ուսանողները*: Այսպիսով հավաքականությունը ևս արտահայտում է հոգնակիություն, քանակի շատություն, բայց որպես մի ամբողջություն»⁹⁶:

Ընդհանրապես, տվյալ լեզվի քերականական ավանդույթից, *հավաքական* տերմինը կարող է կիրառվել տարբեր նշանակություններով, և միշտ էլ, որ այն, ինչ հավաքական է անվանվում մի լեզվում, համընկնում է նույն բառերով մեկ այլ լեզվում բնորոշվող հասկացության հետ:

Այսպես, հայ քերականագիտության մեջ ավանդաբար հավաքականների շարքին է դասվում այն գոյականը, որը նախադասության մեջ կիրառվում է որպես անվանում՝ տվյալ

⁹⁵Տե՛ս Բ. Բ. Рубинчик Ю. А., Грамматика современного персидского литературного языка, стр. 112.

⁹⁶ Աղայան Է. Բ., Լեզվաբանության հիմունքներ, էջ 489-490:

հասկացությունը նշելու նպատակով, առանց հստակեցնելու դրա թիվը, օրինակ՝

Գյուղացին հավ է պահում:

Այս նախադասությունը մենք կարող ենք երկու ձևով մեկնաբանել. առաջին՝ գյուղացին հենց մեկ հատ հավ է պահում, երկրորդ՝ առաջնային է պարզապես հավ պահելու փաստը, և նախադասության մեջ դրաթվի հարցը երկրորդական է:

Բրիտանացի լեզվաբան Քորբետը այդ երևույթն անվանում է *ընդհանուր թիվ (general number)*⁹⁷:

Չավաքական են համարվում նաև այն արմատական բառերը, որոնք ունեն բազմություն, խմբի իմաստ՝ *ամբոխ, ժողովուրդ, զորք*: Չայերենում առաջին խմբին պատկանող բառերը դրսևորում են եզակի գոյականներին բնորոշ վարքագիծ՝ ստանում են եզակի ձևին հատուկ հոլովական վերջավորություններ, նրանց հետ դրվում է եզակի թվով ստորոգյալ:

Պարսկերենում նույնպես արմատական հավաքականները կիրառվում են նման օրինաչափություններով, սակայն երբեմն հնարավոր են որոշ բացառություններ, օրինակ՝ տվյալ հավաքական ենթակայի ստորոգյալը կարող է դրվել հոգնակի թվով՝

نآگهان جمعیت فریاد آوردند.

nāgahān jamiya't fariyād āvardand (անց. կատերրորդ դեմք, **հոգնակի**).

Չանկարծ ժողովուրդն սկսեց գոչել:

Չավաքականների մյուս մասի պարագայում հավաքական կազմվում է հավաքականակերտ վերջնամասնիկների օգնությամբ: Օրինակ՝ հայերենի քերականության մեջ հավաքական են կոչվում նաև գոյական հիմքերից *ություն* վերացականակերտ հավաքականակերտ մասնիկով կազմված գոյականները, օրինակ՝ *ուսանող-ուսանողություն*, *աշակերտ-աշակերտություն*:

Չավաքական են նաև *եղեն* հավաքականակերտ ածանցով կազմված բառերը: Յ. Պետրոսյանը դրանց մասին ասում է. «*եղեն* հավաքականը սովորաբար դրվում է այն հիմքերի վրա, որոնց իմաստը կարող է դառնալ միավորող, ամբողջացնող հատկանիշ հարակից իրերի, առարկաների համար. *արծաթեղեն*՝ միայն արծաթի

⁹⁷ Տե՛ս Corbett, G. G. , Number, pp. 9-12.

հավաքականությունն է, այլև այն առարկաների, իրերի, որոնց համար ընդհանուր է արժաթի հատկանիշը: Նույնը և *բանջարեղեն, ամանեղեն, կտորեղեն* և այլն»⁹⁸:

Պարսկերենում թեև չկա առանձին հավաքականակերտ ածանց, սակայն դիտարկումը թույլ է տալիս նշել, որ գոյականներին հավաքականության ընդգծված իմաստավորում հաղորդելու հատկությունն ունի *-jāt/ جات* վերջածանցը⁹⁹:

میوه-میوهجات

mive- mivejāt – միրգ/մրգեղեն

سبزی-سبزیجات

sabzi-sabzijāt- կանաչի/կանաչեղեն

-jāt/ جات վերջածանցը իր հերթին արաբական ծագման *-āt/ ات* հոգնակիակերտվերջածանցի այլ աձևությունն է¹⁰⁰:

Հայերենի հավաքականների թվին ավանդաբար դասվում են նաև *-ենք, -անք, -ոնք* վերջավորություններով և անձնանուններով, ինչպես նաև մերձավոր ազգակցական կապցույց տվող բառերով կազմված՝ ազգակցություն, մերձավոր կապ, խմբավորման իմաստ արտահայտող գոյականները՝ *Դավիթենք, Վարդանանք, պապոնք* և այլն:

Այս երևույթը որոշ լեզվաբաններ անվանում են *գուգորդական հոգնակի (associative plural)*: Ընդ որում, ինչպես ցույց են տալիս հետազոտությունները, այս կառույցը հնդեվրոպական լեզուներում բացակայում է: Այն առկա է մի շարք ասիական, ամերիկյան լեզուներում, ինչպես նաև հունգարերենում¹⁰¹:

Ի տարբերություն հայերենի՝ ազգակցություն, մերձավորություն, մարդկանց խմբավորում ցույց տվող առանձին քերականական մասնիկ պարսկերենում գոյություն չունի:

1.6. Մոսավոր թիվ

⁹⁸ Պետրոսյան Յ. Զ., Գոյականի թվի կարգը հայերենում, Էջ 28:

⁹⁹ حسن انوری، حسن احمدی گیوی، "دستور زبان فارسی"، ویرایش چهارم، انتشارات فاطمی، تهران
Anvari H., Givi. H. A., "Dastur-e zabān-e fārsi: virāyeš-e čahārom", Entesārāt-e Fātemi, Tehrān, 1391. p. 95.

¹⁰⁰ Այս դեպքում *j* բաղաձայնն ավելացել է *-āt/ ات* վերջավորությանը բարեհնչության նկատառմամբ, քանի որ ինչպես կարող ենք նկատել բերված օրինակներից, դրանք ավարտվում են ձայնավորով, և *j* -հավելումը դրուրացնում է բառի արտասանությունը:

¹⁰¹ St' u Moravcsik, E. A., Group plural: associative plural or cohort plural. Email document, LINGUIST List: Vol-5-681. 11 June 1994.

Մոտավոր թիվը հայ երեւնում արտահայտվում է համապատասխան բառային լրացումների օգնությամբ կամ ստանում է քերականական դրսևորում՝ միասին դրվում են թվային շարքում միմյանց հաջորդող կամ արժեքով մոտ թվականները՝ *մեկ-երկու օր, տաս-քսան հոգի* և այլն:

Պարսկերեւնում ևս տվյալ քերականական հնարքը կիրառվելու նունի՝ *یک دو نفر / yek do nafar (մեկ-երկու հոգի), سی چهل میلیون / si čehel meliun (երեսու ն-քառասուն միլիոն)*: Պարսկերեւնում մոտավոր թվի արտահայտման մեկ այլ միջոց է գոյականի և թվականի այն կապակցությունը, երբ գոյականը դրվում է նախադաս և ստանում է անորոշ *ی / ye(i)* հոդը, այն դեպքում, երբ թվականի և գոյականի կապակցության համար սովորական է հակառակ շարադասությունը, օրինակ՝ *کارگری شش / kārgari šeš (շուրջ վեց բանվոր), درختی پنج / derakhti panj (շուրջ հինգ ծառ)*¹⁰²:

Նշված օրինակներից զատ, պարսկերեւնում 10-ից բարձր մոտավոր թվին հավելվում է *اند / and* անորոշ թվականը (3-9-ի միջև եղած անորոշ թվական, որը խորթ է հայերենին և հնդեվրոպական մյուս լեզուներին)¹⁰³: Հայերեւնում սրան որոշ չափով կարող է մոտենալ *մի քանի* արտահայտությունը:

Օ. Եսպերսենը որպես *մոտավորության հոգնակիի (plural of approximation)* օրինակ նշում է *մենք* դերանունը, որը թեև ընդունված է համարել *ես* դերանվան հոգնակին, մինչդեռ իրականում նա նշանակում է «*ես և որոշ այլ անձինք*»: Այն, ըստ հեղինակի, չի ենթադրում որևէ ընդհանուր հատկանիշով միավորված առարկաների որոշակի թվաքանական գումար¹⁰⁴:

1.7. Ժամանակակից հայերենի և պարսկերենի թվակազմական հիմքերն ու վերջավորությունները

Տարբեր լեզուներ թվի քերականական իմաստն արտահայտելու համար օգտագործում են տարբեր միջոցներ՝ քանակ ցույց տվող

¹⁰² Рубинчик Ю. А., ук. соч., стр. 189-190.

¹⁰³ Տե՛ս Առաքելյան Վ. Գ., Հայերենի և պարսկերենի դարձվածքաքանական և բառակազմական ընդհանրությունները, թեկն. ատենախոսություն, Երևան, 2011, էջ 74-75:

¹⁰⁴ Տե՛ս Jespersen O., op. cit., pp. 192.

բառեր, ներքին թեքում, օժանդակ բառեր, բառի կամ դրա մի մասի կրկնություն, և, վերջապես, քանակ ցույց տվող վերջավորություններ: Հայերենում և պարսկերենում թվակազմության համար կիրառվում է հենց վերջին ձևը:

Հիմքակազմ տարրերի և թվակերտ վերջավորությունների միջև կարող են լինել տարբեր հարաբերություններ: Որոշ դեպքերում հիմքակազմ տարրը կարող է համընկնել բառարմատին, իսկ եզակին և հոգնակին յուրաքանչյուրը ստանան իրենց թվակերտ ցուցիչը: Այլ դեպքերում հոգնակիի և եզակիի հիմքակազմ տարրերը կարող են տարբերվել: Հնարավոր են նաև տարբերակներ, երբ եզակիի կամ հոգնակիի հիմքը համընկնեն բառարմատի հետ: Նույնիսկ հնարավոր են դեպքեր, երբ թվակազմական վերջավորությունները համընկնեն միմյանց հետ, իսկ եզակի-հոգնակի տարբերությունն արտահայտվի հիմքակազմ տարրերի մեջ¹⁰⁵: Ժամանակակից հայերենին հատուկ է կցական հոգնակիակազմություն: Հոգնակին եզակիին հակադրվում է համապատասխան հոգնակերտ վերջավորություններով: Ժամանակակից հայերենում քիչ են ոչ համակարգային, հնատիպ թվային կազմավորումները, իսկ համակարգային կառույցներում գերակա դիրք ունեն *եր* և *ներ* հոգնակերտները:

Գ. Ջահուկյանի բնորոշմամբ՝ «այսպիսով ստացվում են մի կողմում զրո հիմքակազմ տարրով և զրո վերջավորությամբ արտահայտված, մյուս կողմում՝ որոշ հիմքակազմ տարրերով ձևավորված և վերջավորություններ ունեցող թվածներ»¹⁰⁶:

Թվի քերականական կարգը հայերենում սերտորեն կապված է մյուս անվանական քերականական կարգերի հետ: Հայերենում գոյականին հատուկ են հոլովի, թվի և առկայացման քերականական կարգերը, որոնք բոլորն էլ արտահայտվում են մասնիկավորմամբ: Ուստի գոյականների թվակազմությանն անդրադառնալ իս անխուսափելիորեն պետք է զուգահեռաբար քննարկենք նաև մյուս քերականական կարգերը:

Հայերենում հոլովական վերջավորությունը հիմքի հետ զուգորդվում է հոգնակերտ վերջավորության միջոցով. հոգնակերտը դառնում է հոլովական հիմքի տարր: Եզակիի

¹⁰⁵ Տե՛ս Corbett G. G., Number, pp. 139-143.

¹⁰⁶ Ջահուկյան Գ., նշվ. աշխ., էջ 173-174:

թվակազմում թյան պարագայում այն քերականական արտահայտությունն չունի և եզակիություն գաղափարն արտահայտվում է բառի ուղիղ ձևով: Հետևաբար, ժամանակակից հայերենում եզակի և հոգնակի հոլովահիմքերը նույնը չեն, չեն համընկնում նաև հոգնակի հիմքն ու հոգնակի հոլովահիմքը:

Ժամանակակից հայերենում գոյություն ունի անվանական քերականական վերջամասնիկների հաջորդականության որոշակի կարգ: Ձահուկյանը առանձնացնում է հետևյալ չորս կադապարները. 1) *քաղաք(+ներ)+ից+ս*)), 2) *ընկեր(+ոջ)ից+ս*)), 3) *կան(+անց)ից+ս*)) 4) *մարդ(+կ)+անց)+ից+ս*)): Ընդ որում, ամենակիրառելիս առաջին կադապարն է, մնացած երեքը վերաբերում են միայն որոշակի, սահմանափակ թվով գոյականների: Ըստ Ձահուկյանի, այդ վերջնամասնիկները կարելի է պայմանականորեն բաժանել չորս խմբի. առաջին կարգի մասնիկներ (*իկ-ի խումբ` a*), երկրորդ կարգի մասնիկներ (*անց-ի խումբ` b*), երրորդ կարգի մասնիկներ (*ից-ի խումբ` c*), չորրորդ կարգի մասնիկներ (*ս-ի խումբ` d*)¹⁰⁷:

Չարգացնելով նշված տեսակետը` Գ. Ձահուկյանը ըստ անվանական վերջնամասնիկների հաջորդականության հայերենում տարբերակում է անվանական հիմքերի չորս խմբեր: Առաջին կարգի վերջավորությունների համար հիմք են ծառայում հիմնական բառաձևերը, երկրորդ կարգի վերջավորությունների համար հիմք են ծառայում առաջին կարգի վերջավորություններով (նաև գրով վերջավորությամբ) օժտված բառաձևերը, երրորդ կարգի վերջավորությունների համար հիմք են ծառայում երկրորդ կարգի վերջավորություններով (նաև գրով վերջավորությամբ) օժտված բառաձևերը, չորրորդ կարգի վերջավորությունների համար հիմք են ծառայում երրորդ կարգի վերջավորություններով (նաև գրով վերջավորությամբ) օժտված բառաձևերը¹⁰⁸:

Ինչ վերաբերում է թվակերտ վերջավորությանը, այն չի տեղավորվում նշված խմբերից որևէ մեկի մեջ: Սակայն լրացուցիչ վերլուծությունը ցույց է տալիս, որ այն նույնաթեք է առաջին կարգի վերջավորություններին, հետևաբար կարելի է դրանք

¹⁰⁷Նույն տեղում, էջ 165:

¹⁰⁸Նույն տեղում, էջ 166:

անվանել թվանիշ կամ թվակերտ կամ հոգնանիշ կամ հոգնակերտ վերջավորություններ:

Ժամանակակից հայերենի հոգնակերտ վերջավորությունները հետևյալն են.

եր- կիրառվում է միավանկ բառահիմքերի հետ (բացի իկ-ի և անց-ի հետ կիրառվող հիմքերից), ինչպես նաև այն բարդությունների հետ, որոնց վերջին բաղադրիչը միավանկ է, և նրա իմաստը հակադրվում է ամբողջ բարդության իմաստին,

ներ- բազմավանկ հիմքերի հետ,

իկ- մարդ հիմքի և նրանով վերջացող բարդ հիմքերի հետ,

այք- կիՆ հիմքի և նրանով վերջացող հիմքերի հետ,

ք- ի-ով վերջացող բարդ հիմքերի հետ,

անք- հատուկ անուններով արտահայտված հիմքերի հետ (արխայ իկ և խոսակցական-բարբառային ոճերում),

ենք- հատուկ անուններով արտահայտված հիմքերի հետ (խոսակցական ոճում),

ոնք- միավանկ ազգակցական անունների (պապ, տատ), ինչպես նաև ստացական դերանունների հետ:

Ի տարբերություն հայերենի, պարսկերենը հունվի քերականական կարգչունի, և այն քերականական իմաստները, որոնք հայերենում արտահայտվում են հունվական վերջավորությունների օգնությամբ, պարսկերենում արտահայտվում են նախդիրների, հետդիրի կամ հատուկ շարահյուսական կառույցի միջոցով: Այլ կերպ ասած, անվանական քերականական իմաստներից պարսկերենում վերջավորությունների միջոցով արտահայտվում է միայն թվի գաղափարը (բացառությամբ *ye* անորոշության հոդի): Յայերենի նմանությամբ եզակին արտահայտվում է գրո հիմքակազմ տարրով և գրո վերջավորությամբ, իսկ հոգնակին՝ այդ հիմքին հոգնակերտ վերջավորությունների հավելմամբ: Դրանից զատ, արաբերենի ազդեցությամբ պարսկերենում էլ այնորեն կիրառվում է նաև ներքին թեքմամբ հոգնակի կազմությունը:

Ժամանակակից պարսկերենի հոգնակերտ վերջավորությունները հետևյալն են.

ها/hā - ժամանակակից պարսկերենում ամենալայն կիրառություն ունեցող հոգնակերտ վերջավորությունն է: Կարող է գործածվել գոյականների գերակշիռ մեծամասնության հետ *سنگها/sanghā- քարեր, میزها/mizhā-ուեղաններ, دزیاها/daryahā-ծովեր*:

Ոճական տեսանկյունից *ها/hā* մասնիկը չեզոք է. կարող է կիրառվել ինչպես շնչավոր, այնպես էլ անշունչ գոյականների հետ: Կարող է նաև կիրառվել այլ խոսքի մասերի, օրինակ՝ թվականների հետ. *صدها/sadhā - հարյուրներ, هزارها/hezārā - հազարներ*:

ان/ān - այս հոգնակերտ վերջավորությունը օգտագործված է հիմնականում անձ ցույց տվող և շնչավոր գոյականների հետ, օրինակ՝ *زنان/zanān-կանայք, شهیدان/šahidān- նահատակներ, جوانان/javānān- երիտասարդներ*¹⁰⁹:

Ըստիրանցիլ եզվաբան Փ. Խանլարիի՝ անձ ցույց տվող բառերից բացի *ان/ān* հոգնակերտ վերջավորությունն կարող են ստանալ նաև հետևյալ խմբերի որոշ բառեր¹¹⁰.

Բույսեր - *درختان derakhtān (ծառեր), خرمايئنان khormābonān (արմավենիներ), سروان sarvān (սոճիներ), بادامئنان bādāmbonān (սլեկներ),*

Մարմնի մասեր - *رُخان rokhān (դեմքեր), انگشتان angoštān (մատներ), ناخنان nākhonān (եղևիկներ), لیان labān (շերտեր), ابروان abruān (հոնքեր),*

Երկնային մարմիններ - *ستارگان setāregān (աստղեր), اختران akhtārān (աստղեր),*

Ժամանակ, պահ ցույց տվող գոյականներ - *شبانگاهان šabgāhān (երեկներ), روزگاران ruzgāran (ժամանակներ)*

Մի շարք ոչ նյութական գոյականներ - *سوگندان sugandān (երդու մներ), گناهان gonāhān (մեղքեր)*

Դասական պարսկերենում այս վերջավորությունն ավելի լայն կիրառություն ունեցել, բացի այդ *ها/hā* մասնիկը գրեթե չի օգտագործվել շնչավոր և անձ ցույց տվող գոյականների հետ: Ժամանակակից պարսկերենում այդ կանոնը գրեթե վերացել է, և *ها/hā*, և՛ *ان/ān* վերջավորությունները դարձել են հիմնականում փոխադարձաբար փոխարինելի, և դրանցից մեկի կամ մյուսի

¹⁰⁹ Saadāt E., / اسماعیل سعادت، زبان فارسی: ممیز ذیروح از غیرذیروح، مجله نشر دانش، سال چهاردهم، شماره های پنجم و ششم. Momayeze ziruh az gheyreziruh, Majaleye našre dāneš, sāl čahārdahom, šomārehāye panjom va šešom, mordād va ābān, 1393, pp. 240-241.

¹¹⁰ / پرویز نائل خانلری، تاریخ زبان فارسی، ج. چهارم، س. 12، نشر نو، تهران 1365. Khānlari P. N., Tārikhe zabāne fārsi, jelde čahārom, našre nou, Tehrān, 1365, pp. 12-13.

ընտրությունը ավելի շատ ոճական նշանակություն ունի: Ինչպես նշեցինք, *ها/hā-*ն ոճաբանորեն չեզոք է, իսկ *ان/ān-*ը ավելի հատուկ է գրական, գրքային ոճին: Ժամանակակից խոսակցական լեզվում այն գործնականում կորցրել է իր կենսունակությունը¹¹¹:

Իրանցի լեզվաբաններ Ա. Սադեղին և Ա. Սեյեդադային նշում են նաև մի շարք այլ հոգնակերտ վերջավորություններ, որոնք ոչ հաճախ կիրառվել են դասական պարսկերենի տեքստերում, սակայն այժմ դրանք լիովին դուրս են եկել կիրառությունից¹¹²:

ات/at- Այս հոգնակերտ վերջավորությունն ունի արաբական ծագում: Ընդհանրապես, արաբերենը պարսկերենի վրա հսկայական հետք է թողել, որը բացի բառային փոխառություններից, ազդեցություն է ունեցել նաև քերականության վրա, մասնավորապես՝ թվակազմության: Պարսկերենում կիրառվում են ինչպես արաբերենին հատուկ՝ ներքին թեքմամբ հոգնակի կազմությունը, այնպես էլ արաբական ծագման հոգնակերտ վերջավորությունները: *at* վերջավորությունը դրանցից ամենակիրառելին է: Այն արաբերենում օգտագործվում է որպես իգական սեռի գոյականների հոգնակերտ վերջավորություն: Իհարկե, պարսկերենում գոյականի սեռի քերականական կարգ գոյությունն չունի, սակայն փոխառյալ արաբական բառերի հետ վերցվել են նաև նրանց հոգնակի կազմական կաղապարները, օրինակ՝ *مقالات/مقالة/maqale-maqalat/հոդված-հոդվածներ*, *كلمات/كلمه/kalame-kalamat/բար-բարեր*, *حملات/حملة/hamle-hemalat/հարձակում-հարձակումներ*:

Այնուամենայնիվ, *ات/at* վերջավորությունը կարող է կիրառվել նաև իրանական ծագման բառերի հետ, օրինակ՝ *ده-دهات/deh-dehat/գյուղ-գյուղեր*, *دستور-دستورات/dastur-dasturat/ցուցում-ցուցումներ*:

Ընդհանրապես, այս հոգնակերտը պարսկերենում բավականին լայն կիրառություն ունի: Որոշ բառերի հետևում յնիսկ հնարավոր է *ات/at* և *ها/hā* վերջավորությունների զուգահեռ կիրառություն,

111 *علی نژاد، بتول، تقی طیب، سید محمد، نگاهی به دستگاه شمار اسم در فارسی معاصر، مجله علوم اجتماعی و انسانی دانشگاه شیراز، شماره سوم*

/ Alinezhad A., Taghitayeb S. M., "Negāhi be dastgāh-e shomār-e esm dar fārsi-e moāser" Majale-ye olum-e ejtemāyi va ensāni dānshgāh-e Shirāz., No. 48, Shirāz, 1385, pp. 158-170.

112 *Sādeqi A., علی اشرف صادقی، اکرم حاجی سیدآقایی، برخی نشانه های نادر جمع در زبان فارسی، ویژه نامه فرهنگستان سیدآقایی A., Barkhi nešānehāye nādare jam' dar zabāne fārsi, Vizhenāme-ye farhangestān, sale 1389, šomāre 6, pp. 54-76.*

օրինակ՝ *فيلز/felez/*պողպատ-*فيلزها/felezhā/* պողպատներ (*տեսակներ*)- *فيزات/felezat/* պողպատե իրեր, առարկաներ (*հավաք. անվանում*):

اين/in և *اون/un* - Այս հոգնակերտները ևս ունեն արաբական ծագում, սակայն ի տարբերություն նախորդի, դրանք ունեն շատ սահմանափակ կիրառություն և դրվում են *գործիչ, մասնագետ* իմաստն ունեցող որոշ բաների հետ՝ *معلم/moa'lem-معلمين/moalemin/* ուսուցիչ-ուսուցիչներ, *ناظر/nāzer-ناظرين/nāzerin/* հսկիչ-հսկիչներ, *متخصص/motaxases-* *متخصصين/motaxasesin/* մասնագետ-մասնագետներ, *روحانيون/ruhāni-روحاني/ruhāniyun/* հոգևորական-հոգևորականներ, *انقلابيون/enqelābi-انقلابي/enqelābiyun/* հեղափոխական-հեղափոխականներ:

اين/eyn- Արաբերենում ցույց է տալիս երկակի թիվ. մի շարք բաների հետ մուտք է գործել պարսկերեն: Առավել հատուկ է պաշտոնական, վարչական ոճին, օրինակ՝ *طرف/taaraf-طرفين/taarafeyn/* կողմ-կողմեր (*բանակցությունների, պայմանագրի, և այլն*), *دولت/dowlat-دولتين/dowlateyn/* պետություն-պետություններ:

Այսպիսով, կարող ենք մի շարք գուգահեռներ անցկացնել պարսկերենի և հայերենի հոգնակերտվերջավորությունների միջև: Նախևառաջ պետք է նշել, որ հայերենում այդ վերջավորություններից մեկը՝ *եր/ներ-ը*, ունի բացարձակ գերակա դիրք: Պարսկերենում առավել մեծ կիրառություն ունի *ه/hā* մասնիկը, սակայն ոչ այն ծավալով, ինչ հայերենի *եր/ներ-ը*: Իմաստային տեսակետից հայերենի հոգնակերտները, բացի թվային իմաստից այլ իմաստներ չեն հաղորդում, բացի *անք, ենք, ոնք* վերջավորություններից, որոնք ցույց են տալիս ազգակցություն, հավաքականություն: Իսկ պարսկերենում հոգնակերտը կարող է լինել նաև անձ-ոչ անձ կամ անշունչ-շունչավոր քերականական իմաստների ցուցիչ, ինչպիսին է *ان/ān* վերջավորությունը: Ինչպես տեսանք՝ որոշակի անանձնակի իմաստներ են արտահայտում *اين/in* և *اون/un* վերջավորությունները: Մյուս կողմից, վերոնշյալ *անք, ենք, ոնք* վերջավորություններին համարժեք՝ ազգակցություն, հավաքականություն ցույց տվող քերականական ձևեր չեն պարսկերենում չկան:

1.8. Պարսկերենի թեքական հոգնակին

Արաբական թեքական հոգնակիի ձևերը պարսկերեն են ներթափանցել ընդհանուր արաբական փոխառությունների հետ միասին: Ընդհանրապես, Մերձավոր և Միջին Արևելքի բոլոր լեզուներից, որոնք ենթարկվել են արաբերենի ազդեցությանը, պարսկերենն արաբական բառային փոխառությունների քանակով առաջին տեղն է գրավում: Ժամանակակից պարսկերենը միջին պարսկերենից տարբերակող ամենացայտուն առանձնահատկություններից մեկը նրա բառապաշարում տեղ գտած արաբական փոխառություններն են: Փոխառությունները արաբերենից կատարվել են տարբեր ուղիներով՝ բանավոր շփման, կրոնի, գիտական գրականության, մշակույթի միջոցով: Յարկ է նշել նաև, որ փոխառության գործընթացը երկկողմանի է եղել, և պարսկերեն մի շարք բառեր էլ այսօր արաբերենի բառաֆոնդի անբաժան մասն են կազմում: Արաբական փոխառությունների մեծ մասը վերագրում են այն ժամանակահատվածին, երբ \$արսի-դարին դարձավ գրական լեզու, և սկսեց զարգացում ապրել պարսկական դասական գրականությանը: Պետք է սակայն նշել, որ արաբական բառերը մեծ ծավալով սկսել են ներթափանցել պարսից գրական լեզու արաբական նվաճումներից միայն երկու դարանց, որի մասին վկայում են գրավոր հուշարձանների ու սուլտանախրությունները¹¹³:

Ըստ Մ. Բահարի պնդումների՝ \$արսի-դարի լեզվով գրված վաղ շրջանի արձակում և չափածոյում (մինչև 11-րդ դարի 2-րդ կես) արաբական փոխառությունների քանակը բավականին սահմանափակ է, իսկ արդեն 11-րդ դարի 2-րդ կեսից սկսած՝ դրանց քանակը կտրուկ աճում է¹¹⁴:

Ինչպես հայտնի է, արաբերենից փոխառվել են ոչ միայն դարձվածաբանական միավորներ, թևավոր խոսքեր և արտահայտություններ, արաբական գիրը, այլև բառակազմական ձևույթներ, առանձին հնչյուններ, որոնք զգալիորեն ազդել են պարսից լեզվի քերականական և հնչյունական կառուցվածքի վրա: Արաբերենում թեքական հոգնակիի ձևերը իմաստային

¹¹³ Տե՛ս Пейсиков Л.С., Лексикология современного персидского языка, Москва, 1975, стр. 36.

¹¹⁴ Տե՛ս Bahār M.-T., Sabkšenasi ya tarixe-tatavor-e nasr-e fārsi, Tehran, 1370, p. 267.

տեսանկյունն ից բաժանվում են երկու խմբի՝ *սակավոր թյան հոգնակի (plural of paucity)* և *բազմաթյան հոգնակի (plural of multiplicity)*¹¹⁵:

Ի տարբերություն կցական՝ վերջավորությունների միջոցով հոգնակիակազմության՝ թեքական հոգնակին կազմվում է ձայնավորների և բաղաձայների հերթազայական փոփոխությամբ կամ նոր ձայնավորների հավելմամբ: Թեքական հոգնակին հատկապես տարածված է գրական, գրքային լեզվում:

Արաբերենում կիրառվող թեքական թվակազմության կաղապարներից պարսկերենում հիմնականում կիրառվում են հետևյալները.

1. مفاعل /mafā'el- مجلس /majles «խորհրդարան»- مجالس /majāles «խորհրդարաններ»
2. افعال /af'āl- قسم /qesm «տեսակ»- اقسام / aqsām «տեսակներ»
3. فعلاء /foalā- شاعر /šāer «բանաստեղծ»- شعرا /šoarā «բանաստեղծներ»
4. فواعل /favāel- طائفة /tāyefe «ցեղ»- طوائف / tavāyef «ցեղեր»
5. فاعول /foul- علم /elm «գիտություն»- علوم /olum «գիտություններ»
6. فعل /feal- ملت / mellat «ժողովուրդ» – ملل /melal «ժողովուրդներ»

Թեքական հոգնակին որոշ դեպքերում կարող է կիրառվել բուն իրանական ծագման բառերի հետ՝ دهقان /dehqān «գյուղացի» - دهاقين /dehāqin «գյուղացիներ», استاد /ostād «վարպետ, ուսուցիչ»- اساتيد /asātid «վարպետներ, ուսուցիչներ»:

Դ. Ֆիլոտը համարում է, որ իրանական ծագման բառերի՝ արաբական թեքական հոգնակիի ձևերով դրվելը պայմանավորված է նրանով, որ այդ բառերը ժամանակին պարսկերենից փոխառվել են արաբերեն, ապա արաբականացված ձևերով վերստին մուտք են գործել պարսկերեն՝ իրենց հետքերով նաև արաբական հոգնակիի ձևերը¹¹⁶:

Հնարավոր է նաև, որ տեքստի կամ խոսքի ոճաբանությունն ից կախված, նույն գոյականի հոգնակին կազմվի կամ թեքումով, կամ հոգնակերտ վերջավորությամբ՝ ملت /mellat «ժողովուրդ» - ملل /melal «ժողովուրդներ»- ملتها /mellathā «ժողովուրդներ», كتابا /ketābā «գիրք»- كتابا /ketābhā «գրքեր»- كتب /kotob «գրքեր», درسها /darshā «դասեր»- /درسها /darshā «դասեր»: Գրական, բանաստեղծական ոճին առավել հատուկ է

¹¹⁵ St' u Phillot, D.C., Higher Persian Grammar, Calcutta, 1919, pp. 60-61.

¹¹⁶ Նույն տեղում, էջ 62:

նշված բառերի թեքական հոգնակիի կիրառությունը, իսկ առօրյա խոսակցական, ինչպես նաև թերթային, լրատվական ոճին՝ իրանական կանոնավոր կցական հոգնակիակազմությունը¹¹⁷:

Որոշ բառեր կարող են ընդունել կրկնակի հոգնակի, այսինքն՝ երբ թեքումով հոգնակի բառաձևն ընդունում է հոգնակերտ վերջածանց՝ *جوهر / jowhar* «թանկարժեք քար» - *جواهر / javāher* «գոհարներ» - *جواهرات / javāherat* «գոհարներ՝ հավաքական իմաստով»:

Յու. Ռուբինչիկը, պարսկերենի թեքական հոգնակիի ձևաբանական առանձնահատկություններից գատ, նշում է նաև մի շարք իմաստաբանական առանձնահատկություններ՝ կապված դրանց կիրառության հետ: Մասնավորապես, թեքական հոգնակիով դրված գոյականը, իր եզակի ձևի իմաստից գատ, կարող է ստանալ նաև այլ իմաստավորում, օրինակ՝ *وقت / vaqt* «ժամանակ» - *اوقات / ouqāt* «ժամանակներ և պայմաններ, իրավիճակ, ինչպես նաև՝ տրամադրություն», *دقیقه / daqiqe* «րոպե» - *دقایق / daqāyeq* «րոպեներ և մանրամասնություններ»¹¹⁸:

Մի շարք այլ դեպքերում գոյականի թեքական հոգնակի ձևը կարող է ժամանակի ընթացքում իմաստով նույնանալ եզակի ձևի հետ՝ կորցնելով հոգնակիություն իմաստավորումը, օրինակ՝ *وضع / vaz'* (եզ.) և *اوضاع / owzā* (հոգն.)- *վիճակ, դրություն*, *حال / hāl* (եզ.) և *احوال / ahvāl* (հոգն.)- *ինքնազգացողություն*, *որպիսություն*:

Թեքական հոգնակին, մուտք գործելով արաբերենից, դարձել է պարսկերենի թվակազմության, և ընդհանրապես քերականության, բաղկացուցիչ և կարևոր տարրը: Երկակի թվի արաբական կառույցի՝ պարսկերենում կիրառվելու դեպքերին անդրադառնալիս նշեցինք, որ այն, լինելով խիստ սահմանափակ երևույթ, էական ազդեցություն է չի թողնում պարսկերենի թվային համակարգի վրա: Նույնը, սակայն, չի կարելի ասել թեքական հոգնակիի մասին, որը նույնպես լինելով ծագումով արաբական, այն աստիճան լայն կիրառություն է ստացել պարսկերենում, որ, բացի նշված քերականական դերից, նաև մեծապես բնորոշում է պարսկերենի ոճական և գեղարվեստական դիմագիծը:

¹¹⁷ St' u Рубинчик Ю. А., Грамматика современного персидского литературного языка, стр. 117-118.

¹¹⁸ Նույն տեղում:

1.9. Թվային համաձայնությունը հայ երեսում և պարսկերեսում

Համաձայնությունը շարահյուսական կապի տեսակ է, որն արտահայտվում է բայի կամ ածականի՝ գոյականի քերականական հատկանիշներն ընդունելով, ինչպիսիք կարող են լինել թիվը, դեմքը, հոլովը, սեռը և այլն¹¹⁹: Ընդհանրապես թվի կարգի գործառնությունը մեկը հենց նախադասության անդամների միջև համաձայնությունն ապահովելն է:

Համաձայնության նշված բոլոր դեպքերը չէ, որ հայերենին հատուկ են: Գ. Ջահուկյանը նշում է, որ «հայերենին հատուկ է գոյականի և բայի՝ որպես ենթակայի և ստորոգյալի, և երկու գոյականի՝ որպես բացահայտչի և բացահայտյալի միջև համաձայնությունը»¹²⁰:

Եզակի ենթակայի հետդրվում է եզակի ստորոգյալ, հոգնակի ու բազմակի ենթակաների հետ՝ հոգնակի ստորոգյալ:

Ժամանակակից պարսկերեսում նույնպես ստորոգյալը ենթակայի հետ համաձայնում է թվով, հատկապես եթե ենթական շնչավոր է, օրինակ՝

دانشجویان آمدند.

dānešjuyān āmadand (անց. կատ., 3-րդ դ., հոգ.)

Ուսանողներ եկան:

Այն դեպքում, երբ ենթական անշունչ է, ապա համաձայնությունը կայուն չէ. ստորոգյալը կարող է և՛ համաձայնել, և՛ ոչ¹²¹: Օրինակ՝

درها بسته شد. *درها بسته شدند.*

darhā baste šodand (անց. կատ., 3-րդ դ., հոգ.) *և* *darhā baste šod* (անց. կատ., 3-րդ դ., եզ.)

Երկու դեպքում էլ թարգմանվում է՝ **դռները փակվեցին:**

Երբ գոյականը ձևով եզակի է, սակայն իմաստով բազմություն է արտահայտում, ապա ստորոգյալը հնարավոր է հոգնակի թվով դնել, չնայած եզակին նույնպես սխալ չի համարվում: Իմաստային

¹¹⁹ Ахманова О. С., Словарь лингвистических терминов, Москва, 1969, стр. 437-438.

¹²⁰ Ջահուկյան Գ. Բ., նշվ. աշխ., էջ 182:

¹²¹ باطنی، محمدرضا، توصیف ساختمان دستوری زبان فارسی، انتشارات امیر کبیر، تهران. Bāteni M., Dastur-e zabān-e fārsi, Entešārāt-e Amir Kabir, Tehrān, 1392, pp. 98-99.

գործոնը դրսևորվում է նաև այն դեպքում, երբ մերձավոր նշանակությամբ բազմակի ենթակաների հետ դրվում է եզակի ստորոգյալ: Այս երևույթը կոչվում է *բալամոռթյուն* կամ *իմաստային համաձայնություն*, օրինակ՝

Յավաքվածների մի **մառ շարժեցին** դեպի աջ:

Պարսկերենն ու հայերենը միմյանց նման են նաև հավաքական իմաստ արտահայտող եզակիաձև ենթակայի հետ ստորոգյալի համաձայնության հարցում. այն ևս կարող է դրվել երկու տարբերակով՝ համաձայնեցված և չհամաձայնեցված¹²²: Օրինակ՝

چه **داند** مردم که در جامه کيست ...

Չե **dānand** (անց. կատ., 3-րդ դ., հոգ.) *mardom ke dar jāme kist...*

Ի՞նչ **իմանան** մարդիկ թե այդ զգեստի տակ ով է...

(Սասնի)

چنین هم بود مردم ساده دل

Չենին համ **bud** (անց. կատ., 3-րդ դ., եգ.) *mardom sāde del...*

Այնքան ազնիվ (բառացի՝ «սարգ սրտով») մարդիկ **էին** (բառացի՝ «էր»)...

(Ֆիրդուսի)

Թվով համաձայնվում են նաև մի խումբ որոշիչներ, որոնք, իրենց իմաստային առանձնահատկությամբ պայմանավորված, որոշյալին հոգնակի թիվ են պարտադրում: Այդպիսի որոշիչներից են *բազում, անհամար, անթիվ, բազմաթիվ, բազմազան, բազմապիսի, զանազան, տարբեր* բառերը, ինչպես նաև մի շարք կրկնավոր ածական-որոշիչներ՝ *մեծ-մեծ, հին-հին, տեսակ-տեսակ, շատ-շատ, սուր-սուր, մանր-մուկ*: Բնականաբար, պարսկերենում ևս այդ որոշիչները ստանում են հոգնակի թվով դրված որոշյալներ:

Երբ բազմակի որոշիչներն ունեն տարբեր *նշյալներ* (դենոտատ) ունեցող, բայց մի բառով արտահայտված որոշյալ, ապա այն հոգնակի թվով է դրվում, օրինակ՝ «*հայ և ռուս ժողովուրդները*»: Նմանապես հոգնակի թվով է դրվում նաև այն հատկացյալը, որի բազմակի

¹²² Khayāmpur, A., Dastur-e zabān-e fārsi, Enteshārāt-e Sotude, Tabriz, 1392, pp. 86-87.

հատկացուցիչներն ունեն տարբեր դեկորատիվներ՝ *իմ և հարևանի երեխաները*:

Ժամանակակից պարսկերենը նույնպես հետևում է նշված կանոնին, օրինակ՝

روسای جمهوری اسلامی ایران و جمهوری ارمنستان طی گفتگوی تلفنی، تحکیم روابط را مهم دانستند.

rousāye (hnqū.) jomhuriye eslāmiye irān v jomhuriye armanestān teye goftoguye telefoni tahkim e ravābet rā mohem dānestand.

Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության նախագահները հեռախոսազրույցի ընթացքում կարևորեցին հարաբերության ներքին ամրապնդումը:

Տվյալ դեպքում, փաստորեն, դրսևորվում է թվի բաշխական իմաստավորումը, որը ցույց է տալիս խմբի անդամների բաժանականության հատկանիշը: Դրանցից յուրաքանչյուրը դիտարկվում է որպես առանձին միավոր: Հ. Պետրոսյանը այս մասին նշում է. «Քանի որ հոգնակին քանակային հատկանիշով առանձնացնում է մեկից ավելի առարկաներ՝ մեկի հարաբերությամբ, և առարկաների այդ բազմությունը կարող է հատկացվել, պատկանել մեկ այլ՝ մեկ կամ մեկից ավելի առարկաների (անձերի), ապա նա իմաստային վերաբերությամբ կարող է բաշխական արժեք ունենալ»¹²³:

Հայերենում *լրացում թվականի* լրացյալ գոյականը դրվում է եզակի թվով՝ *երեք ուսանող, հինգ մեքենան* այլն:

Պարսկերենում, ինչպես և հայերենում, թվական լրացման հետ դրվող գոյականը եզակի թիվ է ստանում՝ *پنج مداد / panj medād (եզ. ձև) - հինգ մատիտ, شش شاگرد / šeš šāgerd (եզ. ձև) - վեց աշակերտ* Յու. Ռուբինչիկը համարում է, որ թվականը և նրա լրացյալը այսպիսով կազմում են մի շարահյուսական միավոր, որով էլ պայամանվորված է գոյականի՝ առանձին թվակերտ ձևույթ չստանալու հանգամանքը¹²⁴: Սակայն, ի տարբերություն հայերենի, նշված կապակցությունների, ենթակայի դերում կիրառվելիս միայն ստորոգյալները կարող են հոգնակի թվով դրվել՝

فقط سه دانشجو سر درس آمدند.

Faqat se dānešju (եզ. թիվ) sar dars āmadand.

¹²³ Պետրոսյան Հ. Զ., Գոյականի թվի կարգը հայերենում, էջ 43-44:

¹²⁴ St' u Рубинчик Ю. А., Грамматика современного персидского литературного языка, стр. 189-190.

Միայն երեք ուսանող **էին եկել** դասի:

Թվային համաձայնության տեսանկյունից հետաքրքրություն են ներկայացնում նաև դերանունները: Նախևառաջ ժամանակակից հայերենում և ժամանակակից պարսկերենում բազմաթիվ այլ լեզուների նմանությամբ խոսակցին դիմելիս՝ որպես հարգանքի նշան, երկրորդ դեմքի եզակի դերանվան **դու-ի** (*تو/to*) փոխարեն օգտագործվում է **դուք** (*شما/shomā*) հոգնակի դերանունը՝ համապատասխանաբար ստանալով երկրորդ դեմք հոգնակի թվով ստորոգյալ: Պարսկերենը, սակայն, նույն սկզբունքը կիրառում է երրորդ դեմքի եզակի թվով դրված գոյականների և դերանունների պարագայում, երբ խոսքը որևէ անձի մասին է, որի նկատմամբ խոսողը ցանկանում է առանձնահատուկ հարգանք, պատկառանք արտահայտել, ստորոգյալը դրվում է հոգնակիով, օրինակ՝

جناب آقای وزیر به تهران برگشتند.

*jenāb āqāye vazir be tehrān **bargašand** (անց. կատ., 3-րդ դ., հոգ.).*

Հարգարժան պարոն նախարարը վերադարձավ (բառացի՝ **վերադարձան**) *Թեհրան*:

Դերանվան թվի հետ կապված հետաքրքիր զարգացում է նկատվում պարսկերենի առօրյա խոսակցական ոճում: Այսպես, խոսակցական լեզվում *شما/shomā* (**դուք**) երկրորդ դեմքի հոգնակի դերանունը կարող է ստանալ եզակի թվով ստորոգյալ՝ *شما/šomā **boro*** (2-րդ դ., եզ. թ.), *شما/šomā **biyā*** (2-րդ դ., եզ. թ.), բառացիորեն՝ «*դուք գնա՛*» և «*դուք արի՛*»: Այս յուրահատուկ ոճային զարգացումը հավանաբար կարելի է բացատրել պարսկերենում նկատելի անմիջական, մտերիմ երանգավորում ունեցող *تو/to* (**դու**) դերանվան կիրառումից խուսափելու, միաժամանակ պաշտոնական, հոգնակի ձևով դիմել անընդմեջ առօրյա շփման մեջ չկիրառելու ցանկությամբ:

Առօրյա խոսակցական լեզվում նաև հանդիպում են դեպքեր, երբ վերոհիշյալ *شما/shomā* (**դուք**) դերանվանը հոգնակերտ վերջավորություն է ավելացվում՝ *شما/shomāhā*, երբ խոսողը դիմում է մի քանի հոգու՝ ընդգծելով, որ իր խոսքն ուղղված է բոլորին:

Անհրաժեշտ է շեշտել, որ վերջին երկու օրինակները հատուկ են միայն առօրյա խոսակցական, որոշ իմաստով՝ նաև ժարգոնային լեզվին և գրական պարսկերենի քերականական կանոնների համաձայն

ճիշտ համարվել չեն կարող: Մյուս կողմից, նշված դեպքերը նախանշում են դեռևս խոսակցական մակարդակում նկատվող՝ թվային քերականական իմաստների վերաժևորման միտումները:

Ընդհանրապես, համաձայնումը թվի քերականական կարգի կարևոր գործառնություններից մեկն է, որով դրսևորվում է դրա շարահյուսական դերը և եզրի քերականական կառուցվածքի մեջ¹²⁵:

Այսպիսով, կարող ենք ամփոփել ժամանակակից հայերենի և ժամանակակից պարսկերենի թվակարգերի գույքադրությամբ արդյունքում ստացված ընդհանրություններն ու տարբերությունները:

Նախևառաջ, քննարկելով թվի քերականական կարգի ընդհանուր տեսական բնութագիրը՝ վերլուծության ենթարկեցինք դրա բովանդակության և արտահայտության պայմանների բաղադրիչները՝ բուն թվային՝ քանակական իմաստները, այդ իմաստների տիրույթից դուրս գտնվող այլ քերականական իմաստավորումները, ինչպիսիք են անեզականությունը, անհոգնականությունը, հավաքականությունը և այլն: Ժամանակակից հայերենի և ժամանակակից պարսկերենի գույքադրումը ցույց տվեց, որ երկու և եզրուներում էլ առկա է երկեզր՝ հոգնակի-եզակի թվային հակադրություն: Ինչ վերաբերում է երկակի թվին, ապա այն եթե հայերենում հանդիպում է մնացուկային ձևով, պարսկերենում գոյություն ունի միայն որպես արաբերենից մուտք գործած, սահմանփակ կիրառությամբ փոխառյալ քերականական երևույթ՝ միաժամանակ չդառնալով պարսկերենին հատուկ թվակարգային եզր:

Ոչ ընդգծված թվային իմաստի արտահայտման դեպքում ժամանակակից հայերենը և ժամանակակից պարսկերենը հիմնականում առաջնորդվում են նույն սկզբունքով: Եզակի և գոյականը կարող է նշանակել ինչպես մեկ առարկա, այնպես էլ կիրառվել որպես տվյալ առարկայի դասի ընդհանրացված անվանում: Նկատելի է նաև, որ մի շարք դեպքերում պարսկերենում միահյուսված են թվի և առկայացման քերականական կարգերը: Մասնավորապես, անորոշ հոդը, արտահայտելով գոյականի՝ խոսքում

¹²⁵ St´ u Corbett G. G., Features, Cambridge, 2012, pp. 67-68.

առաջին անգամ հիշատակվելու կամ անծանոթ լինելու հանգամանքը, միաժամանակ դրան օժտում է եզակիության իմաստավորմամբ:

Անհոգնականների և անեզականների քննությանը ցույց տվեց, որ նշված խմբերին պատկանող գոյականները երկու լեզուներում կիրառվելիս հիմնականում արտահայտում են նման քերականական իմաստներ, չնայած որոշ դեպքերում հնարավոր են տարամիտումներ: Ժամանակակից հայերենը և ժամանակակից պարսկերենը հիմնականում նույն օրինաչափություններն են կիրառում նման գոյականների և դրանց ստորոգյալի թվային համաձայնության ժամանակ:

Մոտավոր թվի քերականական իմաստի արտահայտման համար երկու լեզուներն էլ կարող են կիրառել թվային շարքում միմյանց հաջորդող թվականների կապակցությունները, ինչպես՝ *մեկ-երկու օր, հինգ-վեց ու սանող* և այլն:

Ժամանակակից պարսկերենը, ի տարբերություն հայերենի, հոգնակերտ վերջավորությունների մակարդակում կարող է արտահայտել անձի և իրի, շնչավորի և անշունչի քերականական իմաստներ: Դրանից բացի, պարսկերենում կիրառելի է նաև ներքին թեքմամբ հոգնակիի կազմությունը, որն արաբերենի լեզվական ազդեցության հետևանք է: Այն լայն կիրառություն է ստացել պարսկերենում՝ դառնալով այդ լեզվի թվակարգի արտահայտության պլանի լիարժեք և անքակտելի բաղադրիչը:

Թվային համաձայնությանն անդրադառնալով՝ կարող ենք նշել, որ ժամանակակից հայերենում ենթական և ստորոգյալը պարտադիր համաձայնվում են թվով, իսկ պարսկերենի դեպքում կանոնը պարտադիր է միայն անձ ցույց տվող և շնչավոր գոյականների՝ ենթակայի դերում հանդես գալու դեպքում: Իսկ երբ այդ գոյականները արտահայտում են իր, ապա համաձայնությունը կամընտրական է: Ժամանակակից հայերենում և ժամանակակից պարսկերենում որոշակիորեն տարբերվում է, այսպես կոչված «*հարգանքի հոգնակի*» (*honorific*). Եթե հայերենում այն կիրառելի է միայն երկրորդ դեմքի դերանվան պարագայում, ապա պարսկերենում հոգնակիով կարող է դրվել նաև երրորդ դեմքի դերանունը կամ գոյականը:

ԳԼՈՒԽ 2. ԱՌԿԱՅԱՑՄԱՆ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՊԱՐՍԿԵՐԵՆՈՒՄ

Առկայացումը կարևորագույն տեղ է զբաղեցնում անվանական քերականական կարգերի շարքում: Քերականական իմաստի տեսանկյունից առկայացման իմաստավորումը հանգուցային է որևէ առանձին վերցված խոսակցության կամ ամբողջ տեքստի իմաստային ընկալման համար, քանի որ այն ցույց է տալիս հաղորդակցվողների հարաբերության տեսակը խոսքի առարկայի նկատմամբ՝ թե արդյո՞ք տվյալ առարկան հայտնի է, անհայտ է, կամ թե այն ինչ հարաբերության մեջ է գտնվում հաղորդակցման այս կամ այն մասնակցի նկատմամբ:

Ձևաբանական տեսանկյունից առկայացումը կարևոր է հոդերի՝ որպես յուրահատուկ քերականական ձևերի ուսումնասիրման տեսանկյունից: Այս համատեքստում առկայացման քերականական կարգի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս բացահայտել հոդերի (անորոշ, որոշյալ, դիմա-ստացական) ծագումը և զարգացումը, նրանց գործառնության մանրամասնություններն ու նրբերանգները:

3. Աճառյանը, խոսելով հոդերի մասին, նշում է. «Քերականական լեզվով սրանք կոչվում են հոդ, և հատկապես ը կոչվում է որոշիչ հոդ, իսկ *մի* անորոշ հոդ: Որոշիչ հոդը դրվում է բառի վրա այն ժամանակ, երբ նա ցույց է տալիս ամբողջ սեռի միջից վերցրած մի որոշ անհատ, անորոշ հոդ դրվում է այն ժամանակ, երբ վերցրած է լինում ըստ պատահման որևիցե մի անհատ: Այս երկուսը հատուկ են ոչ միայն հայերենին, այլ և շատ բազմաթիվ լեզուների և համարյա համաշխարհային նշանակություն ունեն: Մյուս երկուսը տարբերվում են ըստ լեզվի: Ընդհանուր սեռը արդի աշխարհաբար հայերենում նշանակում է որոշյալ հոդով, այսպես նաև ֆրանսերենում, գերմաներենում, իտալերենում և գրեթե բոլոր եվրոպական լեզուներում: Մասնավոր ձևը աշխարհաբարում նշանակվում է առանց որևէ նշանի, պարզ բառի գործածությամբ»¹²⁶:

¹²⁶ Աճառյան 3., նշվ. աշխ., էջ 934:

Գ. Ջահուկյանը նշում է, որ հայերենում առկայացման քերականական կարգն ունի երկու ենթակարգ՝ որոշյալ ու թյուն և ցուցա-ստացական թյուն¹²⁷:

2.1 Որոշյալ ու թյան ենթակարգ

Առկայացման քերականական կարգի հիմքում ընկած է բառի ընդհանուր և մասնավոր իմաստների փոխհարաբերության գաղափարը: Յուրաքանչյուր գոյական ունի ինչպես ընդհանրական, այնպես էլ մասնավոր իմաստ: Օրինակ, ասելով *խնձոր*, մենք կարող ենք հասկանալ «խնձոր» տեսակն ընդհանրապես, օրինակ՝

Խանութում խնձոր են վաճառում:

Միևնույն ժամանակ սա կարող է ենթադրել նաև առանձին վերցված մի ինչ-որ *խնձոր*, օրինակ՝

Այս խնձորը շատ քաղցր է և համեղ:

Սովորաբար խոսքի ենթատեքստից պարզ է դառնում՝ արդյոք տվյալ գոյականը կիրառված է ուղղակի՝ որպես իր տեսակի ընդհանրական անվանում, թե խոսքը այդ տեսակի մեջ մտնող մի որևէ մասնակի առարկայի մասին է: Այդ նպատակով լեզուներն ունեն բառիմաստը որոշակիացնող միջոցներ՝ ինչպես բառային, այնպես էլ քերականական:

Բառիմաստի որոշակիացման հիմնական քերականական միջոցները հոդերն են: Դրանց միջոցով վերացական գաղափարները, ինչպիսիք են նույն *խնձորը*, ավելի են որոշակիացնում իրենց նշանակությունը, Մ. Ասատրյանի բնորոշմամբ՝ «ստանում են թանձրացական բովանդակություն»¹²⁸:

Որոշյալի և անորոշի քերականական կարգի մասին խոսելիս նախևառաջ նկատի է առնվում առարկայի հայտնի կամ անհայտ լինելը, վերացական կամ կոնկրետ, ընդհանուր կամ մասնավոր իմաստները:

Յայերենում և պարսկերենում, բնականաբար, առկա են անորոշ-որոշյալ հարաբերություններն արտահայտելու համար նախատեսված թե՛ բառային, թե՛ քերականական միջոցները: Վերջինների

¹²⁷ Ջահուկյան Գ. Բ., նշվ. աշխ., էջ 208-209:

¹²⁸ Ասատրյան Մ. Ե., ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, հ. Ա, Երևան, 1970, էջ 217:

պարագայում, մասնավորապես, երկու լեզուների միջև կանմանություն. որպես որոշյալության արտահայտման հիմնական քերականական միջոց ծառայում է հետադիր հոդը: Սակայն կամ էական տարբերություն՝ եթե հայերենում այդ հոդը (*ը կամ ն*) որոշյալի ցուցիչն է, ապա պարսկերենում *ع / -ye(i)* հոդը անորոշի քերականական իմաստի ցուցիչն է: Այսինքն, եթե հայերենում գոյականի՝ այսպես կոչված *գրո ձևը* արտահայտում է անորոշություն, ապա պարսկերենում հակառակն է:

Ինքնին առկայացած են բնության մեջ անհատ առարկաները օրինակներ՝ *արև, լուսին, երկինք, տիեզերք*, ինչպես նաև հատուկ անուններով ներկայացողները:

Ժամանակակից հայերենի որոշիչ հոդին նաև հատուկ է ընդհանրացնող իմաստավորում արտահայտելու գործառնություն, երբ խոսքի նշյալը (դենոտատ) տվյալ գոյականով անվանվող հասկացությունն է, այլ ոչ որոշակի անձ կամ առարկա: Օրինակ՝

Լեռնագնացը պետք է դիմացկուն և ճարպիկ լինի, որ կարողանա հաղթահարել դժվարամատչելի բարձունքներն ու լեռնագագաթները:

Որոշիչ հոդի մեկ այլ գործառնություն է ծավալային ամբողջություն ցույց տալը: Այս գործառնություն ցայտուն կերպով արտահայտվում է հոգնակի գոյականների հետ: Այսպես, որոշիչ հոդը հոգնակի գոյականների հետ ցույց է տալիս ոչ միայն որոշյալ առումը, այլև ծավալային ամբողջություն, իսկ հոգնակի անհոդ ձևերը բացի անորոշ առումից, արտահայտում են նաև ծավալային մասնակիություն: Օրինակ՝

2հնվորները կանգնած էին շարահրապարակում:

բայց՝ *Շարահրապարակում գինվորներ էին կանգնած:*

Ինչպես կարող ենք ենթադրել առաջին նախադասության ենթատեքստից, խոսքը նկատի առնված բոլոր գինվորների մասին է, իսկ երկրորդ դեպքում՝ նրանց մի մասի:

Սովորաբար ընդունված է ասել, որ պարսկերենում գոյականի որոշյալ առման հիմնական ձևաբանական ցուցիչը *գրո ձևն* է, այլ կերպ ասած՝ պարսկերենում առանձին որոշիչ հոդ չկա: Այնուհանդերձ, այս պնդումը միանշանակ ճշմարիտ չի կարելի համարել, քանի որ *գրո ձևը*, թեև ինքնին հակադրվում է անորոշ

հոդով դրված գոյականին, սակայն իր մեջ ընգծված որոշյալ ու թյան իմաստ չունի:

Ի. Սմիռնովայի տեսակետի համաձայն՝ ընդհանրապես իրանական լեզուներում, բնականաբար՝ այդ թվում նաև ժամանակակից պարսկերենում, *չ ճնակերպված՝ աննշույթ անունը* (неоформленное имя) չի պարունակում ոչ թվի, ոչ էլ որևէ այլ քերականական իմաստ և չեզոք է ցանկացած քերականական կարգի նկատմամբ¹²⁹:

Գոյականի որոշյալ առման իմաստը պարսկերենում, չնայած քերականական ցուցիչի՝ հոդի բացակայությանը, առավել ցայտուն արտահայտություն է ստանում մի շարք շարահյուսական դիրքերում, ինչպես նաև կարող է արտահայտվել ինքնին՝ խոսքի ենթատեքստից ելնելով¹³⁰:

Որոշիչ հոդի բացակայության պայմաններում որոշյալ ու թյան իմաստի արտահայտման գործառնույթ ստանձնում է *r / rā* հետդիրը, որը նախադասության մեջ դրվում է ուղիղ խնդրից հետո¹³¹: Օրինակ՝

موجهای سفید از دمان زمردین دریا بشتاب میگریختند، و صدفهای شکفته را در پیام میریختند و بحسرت بر می گشتند.
(به آئین، "دریا")

Moujha-ye sefid az damān-e zomorodin-e dārya bešetāb mi-gorixtand, va sadafha-ye šekofte-rā dar pāyam mi-rixand va behesrat bar mi gaštand. (Be'āzin, "Dārya")

Սափտակ ալ իքները ծովի զմրուխոյա կատարից շտապելով փախչում էին և բացված խեցիները լցնում էին ոտքերիս վրա, ապա կարոտով հետէին վերադառնում: (Բեազին, «Ծովը»)

Բրիտանացի իրանագետ Քլեյր-Թիսդալը, անդրադառնալով *r / rā-* ի որոշյալ իմաստ հաղորդելու հարցին, նշում է, որ նրա հիմնական խնդիրը հիմնականում որոշյալ առումով դրված ուղիղ խնդիրը ցույց տալն է¹³²:

Ի. Օվչիննիկովան նշում է, որ *r / rā-ն* դրվում է ուղիղ խնդրի հետ, երբ վերջինս որոշյալ, խոսակիցներին հայտնի առարկա է և հակառակը, այն չի դրվում, երբ խոսքը անորոշ առում ունեցող, առաջին անգամ հիշատակվող առարկայի մասին է¹³³:

¹²⁹ St' u Смирнова И. А., ук. соч., стр. 77-88.

¹³⁰ Anvari H., Givi. H. A., حسن انوری، حسن احمدی گیوی، "دستور زبان فارسی"، ویرایش چهارم، انتشارات فاطمی، تهران "Dastur-e zabān-e fārsi: virāyeš-e čahārom", Entesārāt-e Fātemi, Tehrān, 1391, pp. 86-89.

¹³¹ St' u Windfuhr, G. L., ук. соч., pp. 34-35.

¹³² St' u St. Clair-Tisdall, W., "Modern Persian Conversation Grammar", London, 1904, pp. 26-27.

¹³³ Овчинникова И. К., Мамед-заде А. К., Учебник персидского языка, Москва, 1965, стр. 104.

Մասնակի դեպքերում որպես որոշյալ ության իմաստի արտահայտման միջոց կարող է կիրառվել նաև *ی / -ye(i)* հոդը, որը, ինչպես սույն գլխի սկզբում նշեցինք, անորոշ ության քերականական ցուցիչ է: *ی / -ye(i)* մասնիկը որոշյալ առման իմաստ արտահայտում է այն դեպքում, երբ կիրառվում է *که / ke (հայերեն՝ որ)* շարկապի հետ կապակցության կազմում՝ բարդ ստորադասական նախադասության կառուցվածքի մեջ: Օրինակ՝

در روزهای نوجوانی اش دوربینی که پدرش خریده بود بر می داشت و با دوستانش سوار دوچرخه فاصله ماهان-کرمان طی می کرد.

Dar ruzha-ye noujavaniaš durbini ke pedareš xaride bud bar mi-dāšt va bā dustānesh savār-e dočarxe fāsele-ye Māhān-Kermān tey mi kyard.

Պատանեկության տարիներին վերցնում էր **ֆոտոխցիկը, որ հայրն էր գնել**, և ընկերների հետ հեծանիվով անցնում էր Մահանից Քերման ընկած տարածությունը:

Ավանդական պարսկական քերականության մեջ հստակորեն արտահայտվում է այս տարբերակումը նույնիսկ տերմինաբանական մակարդակում: Վերնորոշյալ դեպքում, երբ *ی / -ye(i)* -ն կիրառվում է բարդ ստորադասական նախադասության կազմում, այն կոչվում է *بی / ya-ye vahdat*, այսինքն՝ «միացման *ی*»:

Ի հակադրություն նորա, այն դեպքերում, երբ *ی / -ye(i)* -ն ցույց է տալիս անորոշ ության իմաստ, այն կոչվում է *بی / ya-ye tankir*, այսինքն «անորոշ ության *ی*»:

Որոշ լեզվաբաններ նույնիսկ ծագումնաբանական տարբերություններ են տեսնում *بی / ya-ye vahdat –ի* և *بی / ya-ye tankir –ի* միջև¹³⁴:

Խոսակցական լեզվում, մասնավորապես՝ Թեհրանի և Շիրազի խոսվածքներում, գոյականի որոշյալ առումն արտահայտելու համար կցվում է *و / o* հնչյունը¹³⁵:

پسرو دیدم. / Pesar-o didam. Səjay hi n tən u x.

کتابو گرفتیم. / Ketāb-o gereftam. Gəhrəpə v tən g r tən g hi:

Այս քանով, սակայն, պարսկերենի՝ որոշյալ ությունն արտահայտող միջոցները չեն սահմանափակվում: Թե՛ բանավոր, թե՛

¹³⁴ Windfuhr, G. L., op. cit., p. 36.

¹³⁵ Նալբանդյան, Գ.Մ., Պարսից լեզվի քերականություն, Երևան, 1980, էջ 149-150:

գրավոր խոսքում լայնորեն կիրառելի են որոշյալ ության արտահայտման բառային միջոցները, ինչպիսիք են ցուցական դերանունները: Որոշյալ առում ունի նաև հատկացուցիչ-հատկացյալ կապակցության մեջ հատկացյալը: Վերջապես, ինքնին առկայացած են բոլոր հատուկ անունները¹³⁶:

Գոյականի անորոշ առումը հայերենում ցույց է տալիս առկայացման բացակայությունը, որն իր ձևաբանական արտահայտությունն ստանում է *գրո հողի* միջոցով: Գոյականն առնաց որոշիչ հոդի արտահայտում է բառիմաստն ընդհանուր և վերացական ձևով, առանց որևէ որոշակիացման կամ սահմանափակման, առարկաների անվանումները առանց հոդերի վերացական և ընդհանուր նշանակություն են ստանում:

Հայերենում գոյականի՝ առանց հոդ ձևը կարող է արտահայտել հետևյալ իմաստային առումները.

1. Գոյականը անձանոթ է հաղորդակցման մասնակիցներին, խոսքի մեջ հիշատակվում է առաջին անգամ, օրինակ՝

Ինձ պետք է ն'չ հարստություն, ն'չ փառք, ն'չ իշխանություն:

2. Գոյականը օգտագործվում է միայն իր անվանողական գործառույթներով, օրինակ՝

-Որո՞նք են այսօր աշխատաշուկայում առավել մեծ պահանջարկ վայելող մասնագիտությունները:

-Թարգմանիչ, ծրագրավորող, ատամնաբույժ, տնտեսագետ, փաստաբան....

3. Գոյականը գործածվում է մասնական նշանակությամբ՝ ցույց տալով առարկայի, հատկապես նյութի մի մասը՝ ի հակադրություն ամբողջության, օրինակ՝

Նա ջուր ու գեց, և աղջիկներից մինը լցրեց փարջը և ու գեց Վաչ ագանին տալ, բայց մի ուրիշ աղջիկ նրա ձեռքից իվեց փարջը և դարտկեց: (Ղ. Աղայան, «Անահիտ»)

4. Գոյականը անորոշ առումով է դրվում նաև մի շարք դերանունների հետ (*ինչ-որ, ինչ-ինչ, այլ, ուրիշ, ամեն, ամեն մի, յուրաքանչյուր, ոչ մի և այլն*), որոշ ածականների հետ, որոնք

¹³⁶ Phillot, D.C., op. cit., pp. 130-131.

անորոշ քանակի իմաստ են արտահայտում (*շատ, քիչ, բազմաթիվ, բավական, բավականին, տարբեր, զանազան*), քանակական թվականների հետ: Որոշիչ հոդ չեն ընդունում գրաբարյան հոգնակիները, օրինակ՝ *մարդիկ, կանայք, պարոնայք*:

Հայերենում անորոշ առման արտահայտման մյուս ձևը *մի* անորոշ հոդն է, սակայն *մի*-ն երբեմն դիտարկվում է նաև որպես թվական: Այս դեպքում, սակայն, անհրաժեշտ է նկատել, որ թվականները առարկաները բնութագրում են քանակական իմաստով և չեն հստակեցնում, թե նշված առարկաները ինչ հարաբերության մեջ են հաղորդակցման մասնակիցների և տվյալ իրադրության նկատմամբ:

Այս կապակցությամբ Հ. Պետրոսյանը նկատում է. «Թվականն անվանում է առարկայի քանակային հատկանիշը՝ անկախ այդ առարկայի՝ այլ առարկաների կամ միևնույն տեսակի առարկաների նկատմամբ ունեցած տարածական-դիրքային հարաբերությունից: Այդ պատճառով թվականը չի պահանջում անպայման հոդ անվան վրան նրա բնութագրած անվան հոդ ստանալը կամ չստանալը անկախ է քանակական թվական վերադրից, ավելին՝ քանակական թվականով մասնավորված բառերը սովորաբար ավելի քիչ են պահանջ զգում, կամ գրեթե բացառում են հոդը»¹³⁷:

Այսպիսով կարող ենք ասել, որ հայերենում անորոշ առումն արտահայտվում է կամ *մի* անորոշ հոդի կամ *գրո հոդի* միջոցով: Սակայն դրանք ամբողջությամբ նույնական չեն և ունեն զգալի իմաստային տարբերություններ:

Ինչպես նշվեց, պարսկերենում անորոշ առման հիմնական ցուցիչը *ی / -ye(i)* հոդն է: Նաև նշել ենք, որ *ی / -ye(i)* հոդը մասնակի դեպքերում կարող է ծառայել նաև որպես որոշյալ իմաստի ցուցիչ, այն դեպքում, եթե այն կիրառվում է *که / ke* (*հայերեն*՝ որ) շաղկապի հետ կապակցված: Այս դեպքում *ی / -ye(i)* հոդը ավանդական պարսկական քերականության մեջ կոչվում է *یای وحدت / ya-ye vahdat* «միացման *ی*», ի տարբերություն *یای تنکیر / ya-ye tankir*-ի՝ «անորոշության *ی*»:

Նման տարբերակման առկայությունը լեզվաբաններին առիթ է տալիս պնդելու, որ տվյալ պարագայում գործ ունենք

¹³⁷ Պետրոսյան Հ. Զ., Գոյականի առումները հայերենում, Երևան, 1960, էջ 49-50:

ծագումնաբանորեն տարբեր հոդերի հետ, որոնք ժամանակակից փուլում են պարզապես դարձել համանուններ:

Այդ տեսակետներից մեկի համաձայն *یای تکبیر / ya-ye tankir*-ը հանգում է հին պարսկերեն *aiva/ մեկ* (*ē< միջ. պարսկ -ev<հին. պարսկ.-aiva*) թվականին: Իսկ *یای وحدت / ya-ye vahdat*-ը հանգում է հին պարսկ. *aita /այ դ* (*ē<միջ. պարսկ -ēt< հին պարսկ.-aita*) ցուցական դերանվանը: Անդրադառնալով այս հարցին՝ ռուս հայտնի իրանագետ Յ. Ռուբինչիկը նշում է, որ այստեղ գործ ունենք ոչ թե երկու տարբեր հոդերի հետ, այլ մեկ հոդի, որի հիմնական դերը գոյականների իմաստային ընդգծումն է, իսկ անորոշության և որոշյալության իմաստավորումները երկրորդվում են դրան՝ կախված ընդանուր բառային իմաստից և ենթատեքստից¹³⁸:

Այլ տեսակետների համաձայն *ی / -ye(i)* մասնիկի հիմնական դերը «*սահմանափակման*» գաղափարի արտահայտումն է՝ հոգնակից առանձնացված ընտրության սահմանափակումը¹³⁹: Այս բնորոշմամբ կարող ենք բացատրել հետևյալ տարբերությունը.

کتابی / ketābi- մի (հնչ -որ) գիրք

یک کتاب / yek ketāb- մի (մեկ հատ) գիրք

یک کتابی / yek ketābi – մի (մեկ հատի հնչ -որ) գիրք

ی / -ye(i) մասնիկը իր վրա շեշտ չի կրում: Այն բառերում, որոնք վերջանում են *•կամ ی / -ye(i)* տառով, *ی / -ye(i)-ի* փոխարեն դրվում է "ء" [*hamze*] վերտողային մասնիկ¹⁴⁰: Այն հիմնականում տեքստի մեջ չի դրվում (*հնչ պես պարսկերենի բոլոր վերտողային նշաններն ընդհանրապես*), և ընթերցողը պետք է ենթատեքստից հասկանատվյալ գոյականի անորոշ լինելու հանգամանքը, օրինակ՝

خانه / xāne- տու և خانه / xāne-i - հնչ -որ տու և

نامه / nāme- նամակ نامه / nāme-i - հնչ -որ նամակ

Կարող է կիրառվել նաև "ی" կապակցությունը, օրինակ՝

کوزه / kuze- կու և کوزه ای / kuze-i- հնչ -որ կու և

قوٹی / quti – տու փ قوٹی ای / quti-i- հնչ -որ տու փ

Երբ բառը ավարտվում է "ا" կամ "و" տառով, անորոշ առման համար ավելանում է ոչ թե մեկ, այլ երկու հատ *ی / -ye(i)* տառ, օրինակ՝

¹³⁸ Рубинчик Ю. А., Грамматика современного персидского литературного языка, стр. 120-122.

¹³⁹ St´ u Windfuhr, G. L., op. cit., pp. 34-35.

¹⁴⁰ St´ u Lambton A.K., Persian Grammar, Cambridge University Press, Cambridge, 2000, pp.3-5.

دانا / *dānā*- իմաստուն / *dānā-yi*- ինչ-որ իմաստուն / *dānā-yi*- ինչ-որ իմաստուն

آهو / *āhu*- եղնիկ

آهویی / *āhu-yi*- ինչ-որ եղնիկ

Պարսկերենում *մի* անորոշ հոդին ձևաբանորեն գուգահեռ է *یک* / *yek* անորոշ հոդը, որը, ինչպես և *մի*-ն, միաժամանակ նաև *մեկ* թվականի իմաստն ունի: *یک* / *yek* անորոշ հոդը կիրառվում է հատկապես այն գոյականներից առաջ, որոնք խոսքի մեջ դեռևս հիշատակված չեն եղել և խոսողներին անծանոթ են:

Իրանցի լեզվաբանները նույնպես անդրադարձել են այն հարցին, թե ինչպես պետք է տարբերակում մտցնել *یک* / *yek* թվականի և *یک* / *yek* անորոշ հոդի միջև: Այս կապակցությամբ մասնավորապես լեզվաբան Շարիաթը նշում է, որ եթե նախադասություներից հետո *نه بیش؟* / *Na bish?*- «*ոչ ավելի*» հարցը ավելացնենք, և նախադասությունը քերականորեն ճիշտ մնա, ապա գործ ունենք թվականի հետ, հակառակ դեպքում՝ անորոշ հոդի¹⁴¹:

Օրինակ՝

یک دانشجو در درسخانه بود. (نه بیش؟) / Yek dānešju dar darsxāne bud. (Na bish?) – Դասատենյ ակում մի ուսանող կար:- Ո՞չ ավելի:

یک روز من رفتم به بازار. / Yek ruz man raftam be bazār. – Մի օր ես գնացի շուկա: Ինչպես տեսնում ենք, երկրորդ նախադասություներից հետո «*ոչ ավելի*» հարցը տալը քերականորեն սխալ կլինի:

Այստեղ կարող է առաջանալ հարց, թե արդյո՞ք պարսկերենում *ی* / *-ye(i)-ով* և *یک* / *yek* -ով ձևերի միջև իմաստային հարաբերությունը նույնական է հայոց լեզվի *մի* և *գրո հոդով* անորոշների իմաստային հարաբերության հետ:

Հայերենում *մի* և *գրո հոդով* անորոշ ձևերը հավասարաթեք չեն և ունեն իմաստային տարբերություններ: Օրինակ՝ կապակցություներից դուրս անհոդ ձևերը նշանակում են տվյալ հասկացություները ընդհանրապես, իսկ *մի* հոդով ձևերը՝ տվյալ հասկացության մեջ մտնող եզակի առարկան, որը մինչ այդ չի հիշատակվել: Մյուս կողմից՝ *մի* հոդով գործածված գոյականը միշտ եզակի է ըմբռնվում, որ գալիս է *մի* թվականի բառային նշանակություներից:

¹⁴¹ Šariat, M. J., “Dastur-e zabān-e fārsi” / شریعت، محمد جواد، "دستور زبان فارسی"، (ویرایش 3). تهران: اساطیر. 1364, pp. 224-225.

Պարսկերենում, ի տարբերություն հայերենի, այս իմաստային տարբերությունը *ی* / -ye(i)-ով և *یک* / *yek* –ով ձևերի միջև այդքան էլ վառ չի արտահայտված, և այն ավելի շատ վերաբերում է ոճաբանության մակարդակին: Այս ձևերը հիմնականում փոխադարձաբար փոխարինելի են, մինչդեռ հայերենում *մի հողով* և *գրո հողով* ձևերը մեկը մյուսով փոխարինելու դեպքում խոսքի մեջ էական իմաստային փոփոխություններ տեղի կունենան: Այսպիսով կարող ենք եզրակացնել, որ հայերենում և պարսկերենում անորոշի արտահայտման վերլուծական և կցական ձևերի միջև իմաստային հարաբերությունը նույնական չէ և առկա է զգալի արժեքային տարբերություն:

2.2. Զուգաստացականության ենթակարգ

Գ. Ջահուկյանը, խոսելով զուգաստացական ենթակարգի մասին, նշում է, որ այն «արտահայտության պլանում բնորոշվում է *ս, դ, երբեմն էլ ը, Ն* մասնիկների (հոդերի) առկայությամբ, որոնք բովանդակության պլանում արտահայտում են զուգաստացական, բուն զուգական և դիմորոշ իմաստներ: Այս բոլոր դեպքերում հիմնականը և ծագմամբ առաջնայինը զուգական իմաստն է. *ս, դ* հոդերը ծագմամբ նույնն են *այս, այդ (և, սա, դա)* որոշյալ դերանունների բուն արմատական մասերի հետ: Երկրորդաբար զուգական իմաստի վրա աճել է ստացական իմաստը, իսկ դիմորոշ իմաստը արդյունք է անձնական (անձնանիշ) դերանունների հետ անունների համաձայնվելու՝ *ես ու սուղիջ ս*»¹⁴²:

Պարսկերենին, ինչպես և հայերենին, հատուկ է ստացական հոդերի կիրառությունը: Անհրաժեշտ է սակայն նշել, որ պարսկերենին վերաբերող աշխատություններում դրանք անվանվում են կցված կամ *էնկլիտիկ* դերանուններ (պարսկ.՝ *ضمایر متصل / zamāyer-e motasal*)¹⁴³:

Այս հոդերը իրենց իմաստով (ինչպես և հայերենում) համապատասխանում են անձնական դերանունների սեռական ձևին,

¹⁴² Ջահուկյան Գ. Բ., նշվ. աշխ., էջ 212-213:

¹⁴³ Տե՛ս Рубинчик Ю. А., Грамматика современного персидского литературного языка, стр. 172-175.

սակայն, բացի պատկանելու թյան իմաստից, կարող են ցույց տալ նաև այլ իմաստներ:

Պարսկերենի ստացական հոդերը հետևյալն են.

- | | | | |
|---------|-----|-----------|-----------|
| 1-ին դ. | م - | -am | مان—emān |
| 2-րդ դ. | ت - | -at (-et) | تان -etān |
| 3-րդ դ. | ش - | -aš (-eš) | شان -ešān |

Ըստ իրենց ծագման այս հոդերը հանգում են համապատասխան հին իրանական էնկլիտիկ դերանուններին:

- 1-ին դ. م - **-am** < միջ. պարսկ. **-am** < հին պարսկ. **-mai** < հին իրանական ***-mai**
- 2-րդ դ. ت - **-at (-et)** < միջ. պարսկ. **-at** < հին պարսկ. **-tai** < հին իրանական ***-tai**
- 3-րդ դ. ش - **-aš (-eš)** < միջ. պարսկ. **-aš** < հին պարսկ. **-šai** < հին իրանական ***-šai**

Ստացական հոդերի հոգնակի թիվը՝ *مان—emān; تان -etān ; شان --ešān* ձևերը, ձևավորվել է միջին իրանական լեզվադարաշրջանում՝ վերը թվարկված եզակի թվի ձևերին *ان / -an* հոգնակիակերտ մասնիկի ավելացմամբ: Վերը թվարկված հոդերը նույնությամբ ավելանում են այն բառերին, որոնք վերջանում են բաղաձայններով¹⁴⁴:

Փոքր ինչ այլ է դրանց ուղղագրությանը ձայնավորով ավարտվող բառերի պարագայում, օրինակ՝

- | | | | |
|---------|------|-------------|--------------|
| 1-ին դ. | يم - | -yam | يمان—yemān |
| 2-րդ դ. | يت - | -yat (-yet) | يتان -yetān |
| 3-րդ դ. | يش - | -yaš (-yeš) | يشان --yešān |

Ինչպես տեսնում ենք, վերը թվարկված դեպքերում ստացական հոդի և բառի միջև ավելանում է **y** հնչյունը:

- پا / pā (նտք) - پايـم /pā-yam (նտքս) - پايـمان /pā-yemān (մեր նտքը)*
دانشجو dānešju (ոլսանող) – دانشجویم dānešju-yam (ոլսանողս) - دانشجويمان dānešju-yemān (մեր ոլսանողը)

Ժամանակակից պարսկերենում ստացական հոդերը հիմնական գործառնության թիվն՝ պատկանելիության ցույց տալու զուգահեռ նաև այլ կիրառում ունեն: Հոդը պարսկերենում նաև կիրառվում է որպես

¹⁴⁴ St´ u Овчинникова И. К., ук. соч., стр. 132-133.

ուղիղ և անուղղակի խնդիր և այդ կարգավիճակով հանդես է գալիս տարբեր նախդիրներին կցված, օրինակ՝

با / bā (հեն) - باهت / bā-hat (քեզ հեն) = با تو / bā to

برای / barāye (համար) - برایشون / barā-šun (նրանց համար) = برای آنها / barāye anhā

جلو / jelo (առջև) - جلویم / jelo-yam (իմ առջև) = جلوی من / jelo ye man

از / az (-ից) - ازش / az-eš (նրանից) = از او / az u

Ուղիղ և անուղղակի լրացումների դերում հանդես գալիս հոդերը միանում են անմիջականորեն բայ անդամին:

Օրինակ՝ گفتتم / goftam-et = به تو گفتم / be to goftam- Ասացի քեզ:

Ստացական հոդերը պարսկերենում հատկապես լայն կիրառություն են ստանում դարձվածային կառույցների կազմում: Օրինակ՝

انگم می آید / nang-am mi ayad.- آیدم / nā-am mi ayad.- Ամաչ ում եմ: (բարացիրեն- **Ամոթս** գալիս է:)

Հայերենի և պարսկերենի ստացական հոդերի գուգադրություն համատեքստում տեղին է հիշատակել ակադեմիկոս Հ. Աճառյանի հետևյալ դիտարկումը. «Ստացական հոդը ուրեմն մի տեսակ պահանջ էր դառնում հայերենի մեջ՝ տիրող լեզուների ազդեցությամբ: Եվ որովհետև հայերենի մեջ էլ հաճախ դիմորոշ հոդը ստացական էր հասկացվում, ուստի դիմորոշ հոդը շեղվեց իր գծից և դարձավ ստացական: Այսպես առաջացան աշխարհաբարի ստացական հոդերը. *հայ րս, հայ րդ, հայ րը* նշանակեցին այլ ևս «իմ հայ րը, քո հայ րը, նրա հայ րը»: Երբ դիմորոշները այսպիսով վերացան, երրորդ դեմքի դիմորոշը (և) բնականաբար պիտի դառնար որոշիչ հոդ և պիտի տարածվեր բոլորի վրա»¹⁴⁵:

Այսպիսով, ամփոփելով ժամանակակից հայերենի և ժամանակակից պարսկերենի առկայացման քերականական կարգերի միջև անցկացված գուգադրական քննության արդյունքները, կարող ենք առանձնացնել հետևյալ կետերը. երկու լեզուներում որոշյալ ության ենթակարգն արտահայտվում է հիմնականում հետադիր հոդով, սակայն եթե հայերենում դա որոշիչ հոդն է, ապա պարսկերենում հոդն անորոշություն է ցույց տալիս: Հետևաբար, հայերենում *գրո ձևը* արտահայտում է անորոշություն, իսկ

¹⁴⁵ Աճառյան Հ., նշվ. աշխ., էջ 986:

պարսկերենում՝ որոշյալ ություն: Այնուհանդերձ, *զրո ձևը* ընդգծված որոշյալ ության քերականական իմաստ չի պարունակում, և այդ իմաստավորումն առավել արտահայտիչ է դառնում լրացուցիչ քերականական ցուցիչների կիրառման դեպքում: Մյուս կողմից, հայերենում առավել ընդգծված անորոշ ության իմաստ արտահայտում են *մի* անորոշ հոդ պարունակող կապակցությունները:

Ցուցաստացական ենթակարգում առկա է նկատելի տարբերություն երրորդ դեմք եզակիի դեպքում. հայերենում այդ դիմային տարբերակի հոդը նույն որոշիչ հոդն է՝ *ը/ն*, իսկ պարսկերենում գործածվում է տարբեր հոդ՝ *یش* - *-yaš (-yeš)*: Դրանից բացի՝ ստացական հոդերը ժամանակակից պարսկերենում կարող են նաև փոխարինել նախադասության առանձին անդամի՝ հանդես գալով որպես խնդիր:

ԳԼՈՒԽ 3. ՀՈԼՈՎԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԽՆԴՐԱՌԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԱՐՏԱՅ ԱՅՏՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՊԱՐՍԿԵՐԵՆՈՒՄ

Անվանական քերականական կարգերի շարքում հոլովի կարգը յուրահատուկ տեղ է զբաղեցնում. այն լեզուները, որտեղ այն կա, առարկայի և գործողությունների կամ այլ առարկաների միջև հարաբերություններն արտահայտում են հիմնականում հոլովական թեքության միջոցով: Մյուս կողմից, ի տարբերություն այլ անվանական քերականական կարգերի, հոլովը չունի առանձին, որոշակի, Ջահուկյանի բնորոշմամբ՝ «ինքնակա» քերականական իմաստ¹⁴⁶: Այդ իմաստը արտահայտվում է միայն նախադասության շարահյուսական կառուցվածքի մեջ՝ ցույց տալով զանազան հարաբերություններ:

Հոլովի քերականական կարգի ուսումնասիրության գլխավոր հարցերից մեկը հոլովների ընդհանուր իմաստների սահմանման խնդիրն է: Ռ.Յակոբսոնը այս առթիվ նշում է. «Յուրաքանչյուր լեզվի որևէ հոլովի նշանակությունը պայմանավորված է տվյալ լեզվի հոլովական համակարգի առանձնահատկություններով, և այն կարող է որոշվել միայն այդ համակարգի կառուցվածքի հետազոտության միջոցով: Հնարավոր է սահմանել համընդհանուր, տվյալ լեզվի հոլովական հակադրությունների համակարգից դուրս հոլովական իմաստներ»¹⁴⁷:

Հոլովների առաջացման մասին Յ. Աճառյանը նշում է. «Խոսակցության մեջ ոչ մի բառ անկախ չէ. նա կապված է մյուս բառերի հետ որոշ առնչությամբ, և այդ առնչությունը արտահայտվում է այլևայլ կողմնակի կամ օժանդակ բառերով: Ինչպես լեզվի կենսաբանության մեջ տեսել ենք, լեզվի հետագա շրջանում այդ օժանդակ բառերը մյուսներից շատավելի մաշվելով վերածվում են մասնիկների և կցվելով բուն բառերին՝ տալիս նրանց հարափոփոխ կերպարանք: Այն մասնիկները, որոնք կցվելով անուններին, որոշում են նրանց զանազան առնչությունները ուրիշ բառերի հետ, առանց սակայն նրանց հիմնական իմաստը

¹⁴⁶ Ջահուկյան Գ., նշվ. աշխ., էջ 171:

¹⁴⁷ Якобсон Р., Избранные работы, Москва, 1985, стр. 135-136.

փոխել ու և միայն մի հանգամանք կամ պարագա են ավելացնում նրան, կոչվում են *հոլոպական մասնիկներ*, իսկ այն բառը, որին կցվել է հոլոպական այս կամ այն մասնիկը, նրա հետ միասին վերցրած՝ դառնում է հոլոպ»¹⁴⁸

Հոլոպը տվյալ լեզվում որոշակի շարահյուսական գործառնությունների և դրանց համարժեք ձևաբանական ցուցիչների միասնությունն է: Ավանդական լեզվաբանության մեջ գերակա է այն տեսակետը, ըստ որի՝ հոլոպը համարվում է ձևաբանական կարգ և որ *հոլոպ* եզրույթը կիրառելի է միայն որոշակի հատուկ հոլոպական ձևությունների օգնությամբ արտահայտված քերականական հարաբերություններ բնութագրելու համար: Մյուս կողմից, կարևոր է հաշվի առնել նաև հոլոպի քերականական կարգի իմաստային բաղադրիչը ևս¹⁴⁹:

Ընդհանրապես յուրաքանչյուր հոլոպ իմաստաբանորեն զուգորդվում է որևէ շարահյուսական պաշտոնի հետ, օրինակ՝ ուղղական հոլոպը՝ ենթակայի հետ, հայցական հոլոպը՝ ուղիղ խնդրի, և այլն¹⁵⁰: Ամերիկացի լեզվաբան Չ. Ֆիլմորը, ընդգծելով հոլոպի քերականական կարգի իմաստային կողմը, տարբերակում է մակերեսային և խորքային հոլոպական կառուցվածքային հարաբերություններ: Նա գտնում է, որ այն քերականական հարաբերությունները, որոնք սովորաբար արտահայտվում են հոլոպական ձևությունների միջոցով, այլ լեզուներում կարող են արտահայտվել այլ քերականական միջոցների օգնությամբ, որը սակայն չի կարող խոչընդոտ համարվել դրանք ևս հոլոպների շարքին դասելու համար: Եականը այն իմաստային դերն է, որը թելադրվում է տվյալ գոյականին բայական անդամի կողմից¹⁵¹:

Ընդհանրացնելով տարբեր լեզուների տվյալները՝ կարելի է առանձնացնել քերականական իմաստների որոշակի խմբեր, որոնց առավել բնորոշ է հոլոպական արտահայտությունը¹⁵².

1. Ենթակաև ուղիղ խնդիր

¹⁴⁸ Աճ առյան Հ., Աշվ. աշխ., էջ 313:

¹⁴⁹ Ярцева В. Н., Большой энциклопедический словарь: языкознание, Москва, 1998, стр. 355-356.

¹⁵⁰ Steu Comrie B., Language Universals and Linguistic Typology, Chicago, 1989, pp. 70-71.

¹⁵¹ Steu Fillmore, Charles J., The Case for Case, In: E. Bach and R.T. Harms (eds.) (1968) Universals in Linguistic Theory. London: Holt, Rinehart and Winston, pp. 1-25 (Part Two).

¹⁵² Steu Velupillai V., An Introduction to Linguistic Typology, Amsterdam/Philadelphia, 2012, pp. 175-176.

2. առարկաների միջև հարաբերության, կապի իմաստ (հայերենում արտահայտվում է սեռական հոլովի միջոցով)
3. ժամանակային, տեղային, միջոցի և այլ քերականական իմաստներ:

3.1. Հոլովի հարցը հայ լեզվաբանության մեջ

Հայ լեզվաբանության պատմության ընթացքում ամենասկզբունքային և սուր գիտական հակասություններից մեկը, եթե ոչ ամենասկզբունքայինը, կարելի է համարել ժամանակակից հայերենի հոլովների շուրջ ծավալված բանավեճը:

Հայ լեզվաբաններից Մ. Աբեղյանը համարում էր, որ հայցականը իր առանձին ձևը չունի և հանդես է գալիս կա՛մ ուղղականի, կա՛մ տրականի ձևով, և առանձին հոլով չի կարող կոչվել: Նա նաև չէր ընդունում սեռական և տրական հոլովների անկախ, առանձին գոյություն իրավացիությունը: Ըստ նրա, լեզվի զարգացման ընթացքում դրանց ձևային տարբերությունները վերացել են, առաջացել է մեկ ընդհանուր հոլով՝ տրական, իսկ սեռականը միայն դրամասնակի կիրառություն է:

Հինգ հոլովի տեսությունը քննադատում էր մեկ այլ նշանավոր լեզվաբան՝ Գ. Սևակը, որը չէր ընդունում հոլովների որոշման ձևաբանական սկզբունքը և գտնում էր, որ պետք է առաջնորդվել հայերենի ավանդական քերականության հոլովների դասակարգմամբ:

Այս հարցի շուրջ մեկ այլ տեսակետ առաջ քաշեց Է. Աղայանը. նա մի կողմից համաձայն էր այն մտքի հետ, որ հայցականը պետք է դիտարկել որպես առանձին հոլով, մյուս կողմից չէր ընդունում սեռականի և տրականի նույնացումը՝ համարելով դրանք միանգամայն տարբեր հոլովներ: Է. Աղայանը հայցականի և ուղղականի մասին մասնավորապես նշում էր. «Մենք ունենք բառի ելակետային ձև կամ բացարձակ ձև, որն իր մեջ ներառում է ուրիշ լեզուների և՛ ուղղականի, և՛ հայցականի հոլովական իմաստները: Այս սկզբունքից ելնելով մենք ավելի հարմար ենք գտնում այդ անվանումների փոխարեն գործածել *ուղիղ հոլով* (կամ բացարձակ, ելակետային բառաձև) անվանումը, բայց որպեսզի դարավոր

գործածությունն ունեցող և համընդհանուր ճանաչում գտած տերմինը փոխելու անախորժ դերը չստանձնենք, մենք թողնում ենք *ուղղական* անվանումը իբրև պայմանական անվանում (ինչպես բոլոր հոլովների անվանումներն առհասարակ) մեր բնութագրած իմաստի համար, որպես *ուղիղ հոլով* կամ *բացարձակ, էլակետային բառածև* տերմինների համանիշ... Մեր ուղիղ հոլովների մեջ միաձուլվել են ուրիշ լեզուների ուղղական և հայցական հոլովների իմաստները, որոնք մեր լեզվում դարձել են այդ մեկ, ընդհանուր հոլովական իմաստի իրական դրսևորումները խոսքի մեջ, նրա ենթիմաստները»¹⁵³:

Քանի որ նշված խնդրի քննարկումը դուրս է աշխատության թեմայի շրջանակներից, նշված տեսակետներից որևէ մեկին սկզբունքորեն նախընտրություն տրված չէ: Մյուս կողմից հաշվի առնելով, որ աշխատանքում քննվող լեզուներից մեկը՝ ժամանակակից պարսկերենը չունի հոլովի կարգ որպես այդպիսին, և գուգարական քննությունն անցկացվում է երկու լեզուների համապատասխան քերականական իմաստների միջև (որոնք հայերենում արտահայտվում են հոլովներով, իսկ պարսկերենում՝ կապական կառույցներով և շարադասությամբ)՝ նպատակահարմար է որպես հիմք ընդունել յոթ հոլովի համակարգը, որն ավելի մեծ տեղ է տալիս իմաստային բաղադրիչին:

Հատկանշական է, որ Մ. Աբեղյանը, առաջ քաշելով հինգ հոլովների տեսությունը, այնուհանդերձ, չի ժխտում *սեռականի*, *հայցականի*, ինչպես նաև *կոչականի*՝ որպես հատուկ շարահյուսական կիրառությունների հնարավորությունը: Նա այդ կապակցությամբ նշում է. «Թեպետ և մեր աշխարհաբարն իսկապես չունի կոչական, հայցական և սեռական հոլովներ, այսինքն այդ հոլովներն այլևս ոչ թե բառի առանձին ձևերով են որոշվում, այլ միայն դրությամբ և կիրառությամբ, բայց և այնպես՝ կոչական, հայցական և սեռական անունները իբրև շարահյուսական հարաբերությունների արտահայտիչներ ոչ միայն ընդունելի, այլ և նույնիսկ անհրաժեշտ են, ի նկատի ունենալով, որ մեր

¹⁵³ Աղայան Է. Բ., ժամանակակից հայերենի հոլովները, Պատմաբանասիրական հանդես, N. 4, Երևան, 1966, էջ 117-140:

քերականության ուսումը լինում է միշտ զուգընթաց գրաբարի և օտար լեզուների քերականության ուսման հետ»¹⁵⁴:

3.2.Ուղղական հոլով

Ուղղական հոլովն իր հիմնական՝ ենթակայական կիրառությամբ գտնվում է հայցական հոլովի հետ իմաստային հակադրության մեջ. առաջինը գործող առարկայի՝ սուբյեկտի հոլովն է, երկրորդը՝ այդ գործողության կրող օբյեկտի՝ ուղիղ խնդրի հոլովը: Ուղղականը գործուն առարկայի հոլովն է նաև ինչպես ներգործական, այնպես էլ չեզոք սեռի գոյականների հետ կիրառվելիս: Իսկ ահա կրավորական սեռի բայերի հետ կիրառվելիս այն ինքն է հանդես գալիս որպես գործողությունն իր վրակրող:

Վ. Առաքելյանը նշում է. «Ուղղական հոլովով դրված գոյականի առանձնահատկությունը ոչ միայն գործուն լինելու հանգամանքն է, այլև ստորոգյալի հետ ունեցած քերականական սերտ հարաբերությունը: Ուղղական հոլովով դրված գոյականը միշտ համաձայնում է ստորոգյալի հետ դեմքով, թվով: Միևնույն ժամանակ, ենթական և ստորոգյալը հավասարազոր անդամներ են և նրանց մեջ չկաստորադասական հարաբերություններ»¹⁵⁵:

Ենթակա ուղղականը որոշակիորեն գերակադիրք է զբաղեցնում նախադասության մեջ այլ ուղղական հոլովով դրված բառերի նկատմամբ: Այլ կիրառություն ունեցող ուղղականները այս կամ այն կերպ հարաբերվում են հենց ենթակա ուղղականի հետ կամ նախադասությունից դուրս են գտնվում:

Պարսկերենում, որտեղ խնդրառական հարաբերություններն արտահայտվում են կապերով կամ շարադասությամբ, ենթական առանձնանում է նրանով, որ հայերենի նման, դրվում է գոյականի ուղիղ ձևով՝ առանց հավելյալ քերականական ցուցիչների: Այլ կերպ ասած, պարսկերենում ենթական չունի որևէ առանձնահատուկ

¹⁵⁴ Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 399-400:

¹⁵⁵ Առաքելյան Վ., Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, Երևան, 1957, էջ 12-13:

քերականական ցուցիչ, անկախ նրանից, թե ստորոգյալը ներգործական, չեզոք կամ կրավորական սեռի բայ է¹⁵⁶:

Ներգործական սեռ՝

بیسر لیوان را شکست.

Pesar *livān rā šekast.*

Տղան բաժակը կոտրեց:

Կրավորական սեռ՝

در بازار شد.

Dar *bāz šod.*

Դուռը բացվեց:

Կոչ ական. հայերենում ուղղական հոլովով է դրվում նաև կոչականը: Կոչականով կանչում, դիմում են խոսակցության մյուս մասնակցին՝ հրաման, խնդրանք, հորդոր արտահայտելու նպատակով:

Կոչականը նախկինում համարվել է առանձին հոլով, սակայն ներկայումս ինչպես հայերենում, այնպես էլ աշխարհի բազմաթիվ այլ լեզուներում այն չի առանձնացվում ուղղականից:

Կոչական-ուղղականի և ենթակա ուղղականի սկզբունքային ձևաբանական տարբերությունը հոդառության հարցն է. ենթակա-ուղղականը ընդունում է որոշյալ հոդը, իսկ կոչականը՝ ոչ:

Խոսելով հայերենում կոչականի տեսակների մասին՝ Վ. Առաքելյանը նշում է. «Այն կոչականը, որով կանչվում է մեկը, որպեսզի նրան որևէ բան ասվի, հրամայվի, պատվիրվի, և այլն, անվանում են *բուն կոչական ուղղական*: Իսկ այն կոչականը, որը միայն ոճաբանական, հուզարտահայտչական արժեք ունի, սահմանազատում են *հուզական կամ թարմատար կոչական ուղղական* անվանումով: Բացի դրանից, գոյություն ունի նաև *բացականչողական կոչականը*, որով խոսողը երրորդ դեմքի հասցեին զգացմունք է արտահայտում»¹⁵⁷:

Պարսկերենում կոչականն ունի արտահայտման մի քանի եղանակ, այն կարող է արտահայտվել պարզապես խոսքի հնչերանգով՝

¹⁵⁶ Mahootian Sh.; Gebhardt L., Persian descriptive grammars, London, 1997, pp. 135-136.

¹⁵⁷ Առաքելյան Վ., նշվ. աշխ., էջ 14-15:

առանց հատուկ քերականական ցուցիչների, ինչպես նաև որոշ գոյականների հետկարող է ստանալ մի շարք մասնիկներ¹⁵⁸: Օրինակ՝
ա) հնչերանգով՝

مسعود! بنشین.

Ma'sud benšin.

Մասու՛ղ, նստի՛ր:

բ) բառի վերջում դրվում է «ا» (alef) մասնիկը

دختر، بیا اینجا.

Dokhtarā biyā injā.

Աղջի՛կ, արի այ ստեղ:

գ) բառակազմում դրվում է «یا» (**yā**) մասնիկը (կրոնական բնույթի մի շարք բացականչությունների մեջ)

ياالله! گناهان ما را ببخش.

Yā āllah gonāhān e mā rā bebakhš.

Ալլա՛հ, ների՛ր իմ մեղքերը:

Որոշիչ. Հայերենում ուղղական հոլովով կարող է դրվել նաև որոշիչը: Որոշիչ ուղղականով են դրվում կոչում, պաշտոն արտահայտող գոյականները հատուկ անունների հետ միասին, օրինակ՝ *սպարապետ Վասակ, գորավար Վարդան:*

Պարսկերենում ևս հնարավոր է ուղիղ ձևով դրված գոյականի նմանատիպ կիրառությունը:

Ստորոգելիական վերադիր. Ուղղական հոլովով հայերենում կարող է դրվել նաև ստորոգելիական վերադիրը: Ստորոգելիական վերադիր ուղղականը դրվում է նախևառաջ մի շարք լինելիություն ցույց տվող բայերի հետ միասին, օրինակ՝ *լինել, դառնալ, հանդիսանալ:*

Հրամանատար լինելը մեծ պատասխանատվություն է:

Պարսկերենում նույնպես գոյականը առանց հավելյալ քերականական ցուցիչների կարող է հանդես գալ որպես ստորոգելիական վերադիր, օրինակ՝

¹⁵⁸ حسن انوری، حسن احمدی گیوی، "دستور زبان فارسی"، ویرایش چهارم، انتشارات فاطمی، تهران 1391، pp. 129-130. / Anvari H., Givi. H. A., "Dastur-e zabān-e fārsi: virāyeš-e čahārom", Entešārāt-e Fātemi, Tehrān, 1391, pp. 129-130.

ان مرد آقای معسودی است.

an mard aghāye Ma'sudi ast.

Այ դ տղամարդը պարոն Մասուդին է:

Վ. Առաքելյանը հայերենում առանձնացնում է նաև *պատկերման*, *լինելիություն*, *ցուցական* ուղղականները: Սակայն դրանց կիրառությունը հիմնականում պայմանավորված է հայերենի ոճային առանձնահատկություններով և նշված հոլովային տարբերակները պարսկերենում չունեն իրենց իմաստային համարժեքները:

3.3.Սեռական հոլով

Տվյալ հատվածի համար որպես քննության առարկա վերցված են մի կողմից հայերենի սեռական հոլովը, մյուս կողմից՝ պարսկերենում կիրառվող *իզաֆեթային* կառույցը: Այսպիսի ընտրության հիմքում ընկած է այդ երկուսի արտահայտած առաջնային քերականական իմաստների համադրելիությունը և ընդհանրությունը: Հայերենում սեռական հոլովի միջոցով արտահայտվող քերականական իմաստներից առաջնայինը ստացականության իմաստն է: Այն նաև պարսկերենի իզաֆեթային կապակցության արտահայտած հիմնական իմաստներից մեկն է:

Այլ կերպ ասած, այս երկու կառույցների միջև որպես տրամաբանական հանգման կետ ծառայում է նրանց կողմից ստացականության, պատկանելության քերականական իմաստ արտահայտելու ունակությունը: Այնուհետև, որպես մեկնակետ դարձնելով վերոնշյալ իմաստը, գուգադրական քննությունն է անցկացվում սեռական հոլովի և իզաֆեթային կապակցության արտահայտած այլ՝ երբեմն համընկնող, երբեմն տարամիտվող քերականական իմաստների միջև: Այս վերլուծության արդյունքում, այսպիսով, մենք կստանանք հայերենի սեռական հոլովի և պարսկերենի իզաֆեթային կառույցի արտահայտած քերականական իմաստների համեմատական հարացույցը: Այսպիսով, տվյալ աշխատանքում մենք կիրառել ենք գուգադրական քննության այն մեթոդը, որը գերմանացի Լեզվաբան Ռ. Շտերնեմանը անվանում է

երկկողմանի քննություն: Այս մեթոդի հիմքում ընկած են գուգադրվող միավորների քերականական իմաստները, որոնց հիման վրա գուգադրական քննության են ենթարկվում այդ միավորները: Այս մեթոդը հակադրվում է *միակողմանի* մեթոդին, որը ենթադրում է, որ գուգադրվող լեզուներից մեկի տվյալ քերականական միավորը ընդունվում է որպես չափանիշ, որի հետ համեմատվում է մյուս լեզվի համանման միավորը¹⁵⁹:

Գրեթե բոլոր քերականական իմաստները, որոնք հայերենում արտահայտվում են սեռական հոլովի միջոցով, պարսկերենում արտահայտվում են իզաֆեթային կառույցի միջոցով: Այն իմաստային նրբերանգների բազմազանությունը, որ առկա է հայերենի սեռական հոլովում, դրսևորվում է նաև իզաֆեթային կապակցությունների մեջ՝ սկսած առաջնային՝ ստացականության իմաստից, վերջացրած ավելի հատուկ, նեղ իմաստավորումներով:

Ընդհանրապես, հայերենի հոլովների և պարսկերենի նախդիրների (նաև *rā* հետադիրի) կամ իզաֆեթային կապակցության գուգահեռ դիտարկումը ցույց է տալիս, որ հայերենի հոլովական թեքույթներից յուրաքանչյուրն իր իմաստային ընդգրկվածությամբ գրեթե լիովին համընկնում է պարսկերենի վերը թվարկված կառույցներից որևէ մեկին: Սեռական հոլովի հիմնական առանձնահատկությունն այն է, որ նա հիմնականում արտահայտում է երկու գոյականների միջև առկա հարաբերությունը, ի տարբերություն մյուս հոլովների, որոնք ապահովում են կապը գոյականի և բայի միջև:

Վ. Առաքելյանը այս կապակցությամբ մեջբերում է հայ տնի ռուս լեզվաբան Վ.Վինոգրադովի միտքը. «Չոլովը անվան ձևն է, որը խոսքի մեջ արտահայտում է անվան հարաբերությունը ուրիշ բաների նկատմամբ: Այս տեսանկյունից ելնելով, սեռականը ամենից ցայտուն է արտահայտում անվան և ուրիշ բաների փոխադարձ հարաբերությունը»¹⁶⁰:

¹⁵⁹ Штернеманн Р. (рук.) и колл., Введение в контрастивную лингвистику, пер. с англ. Е. Сквейрс, // в «Новое в зарубежной лингвистике», вып. XXV, М., 1989, стр. 144-179.

¹⁶⁰ Առաքելյան Վ., նշվ. աշխ., էջ 71-72:

Պարսկերենում կիրառվում է ընդհանուր՝ գոյականի բնութագրական հատկանիշները նկարագրող միջոց՝ իզաֆեթային կապակցությունը, որը միաժամանակ արտահայտում է ն՝ որոշչային, ն՝ հատկացուցչային հարաբերությունները:

իզաֆեթը (اضافه/*ezāfe*) արտահայտվում է ենթատողային «» նշանով և արտաբերվում է որպես **e**, սակայն ինչպես պարսկերենի մյուս վերտողային և ենթատողային հնչյունական նշանները, այն սովորաբար չի դրվում տեքստում¹⁶¹:

Այն դեպքերում, երբ իզաֆեթային կապակցության մեջ առաջին անդամը վերջանում է ձայնավորով, իզաֆեթն արտասանվում է որպես ' ' ye ' ', և ենթատողային նշանի փոխարեն դրվում է «ی» տառը: Իզաֆեթային կապակցության մեջ որոշյալը և հատկացյալը նախադաս են համապատասխանաբար որոշչին և հատկացուցչին: Կազմությամբ *իզաֆեթային կապակցությունները* կարող են լինել պարզ և բարդ. պարզ կառույցները բաղկացած են երկու բառից, օրինակ՝

ketāb-e šāgerd / کتاب شاگرد

աշակերտի գիրքը

Բարդերը՝ երեք և ավելի բառերից, օրինակ՝

guše-ye otagh xāne / گوشه اتاق خانه

տան սենյակի անկյունը

Իզաֆեթային կապակցությունը՝ որպես քերականական յուրահատուկ կառույց, լայն ուշադրության է արժանացել ավանդական պարսկական քերականագիտության մեջ: Ըստ այդմ՝ զանազանում են իզաֆեթային կապակցության երկու տարատեսակ. առաջին՝ *որոշիչ-որոշյալ* կապակցություն, երկրորդ՝ *հատկացուցիչ-հատկացյալ* կապակցություն¹⁶²:

Լեզվաբան Մահոթիանը առանձնացնում է իզաֆեթային կապակցության երեք իմաստային տարատեսակ՝ *սենսկան* (*genitive*), *բնութագրական* (*attributive*), *վերադիր* (*appositive*)¹⁶³:

Ռուբինչիկը նշում է, որ իզաֆեթի քերականական իմաստը մեծապես պայմանավորված է բառակապակցության անդամ բառերի

¹⁶¹ Օրինակ՝ դրանք դրվում են Ղուրանի տեքստերում, որտեղ պարտադիր է ճշգրիտ արտասանությունը:

¹⁶² Տե՛ս Windfuhr, G. L., op. cit., pp. 58-59.

¹⁶³ Տե՛ս Mahootian Sh.; Gebhardt L., op. cit., pp. 68-69.

բառի մաս տներ ի առանձնահատկությունը ամբ: Ավելի մանրամասնելով իր այս բնորոշումը՝ Ռուբինչիկը նշում է, որ իզաֆեթային կապակցությունները հիմնականում արտահայտում են *որոշչային*, *ստացական*, *քանակական*, *տարածական* և *ժամանակային* իմաստներ¹⁶⁴:

Ինչպես նշեցինք, ստացականությունը, պատկանելությունը իզաֆեթային կապակցության արտահայտած առաջնային իմաստներից մեկն է օրինակ՝

ketāb-e šāgerd / کتاب شاگرد

աշակերտի գիրքը

Որոշչի իմաստ արտահայտող իզաֆեթային կապակցություններում առաջին անդամը գոյական է, իսկ երկրորդը՝ սովորաբար ածական, օրինակ՝

ketāb-e jāleb / کتاب جالب

հետաքրքիր գիրք

Սակայն երբեմն որոշչի դերում կարող է հանդես գալ գոյականը, օրինակ՝

āb-e angur / آب انگور

խաղողի հյուսիս

Ինչպես նկատում ենք, այս կապակցությունը համընկնում է Վ. Առաքելյանի նկարագրած հայերենի *որոշիչ սեռականի* հետ: Պարսկերենում իզաֆեթային կապակցության միջոցով է արտահայտվում նաև հայերենի ծագման սեռականը

farzand-e pezešk / فرزند پزشکی

բժշկի որդին

Չայերենի տեղի սեռականը, ինչպես նաև ժամանակի սեռականը նույնպես պարսկերենում արտահայտվում են իզաֆեթային կապակցության միջոցով

guše-ye otagh / گوشه اتاق

սենյակի անկյունը

vaght-e tavaghof / وقت توقف

ընդմիջման ժամանակը

Պարսկերենի իզաֆեթային կառույցը հիմնականում համապատասխանում է նաև հայերենի մասնական սեռականին.

¹⁶⁴ Рубинчик Ю. А., Грамматика современного персидского литературного языка, стр. 364.

թշ նամհների խու մբը

Մասնականը պարսկերենում որոշ դեպքերում արտահայտվում է *j/az* նախդիրով կազմված կապակցության միջոցով: Օրինակ՝ *j/az-ը* իր հիմնական իմաստով անջատման անուղղակի ինդրի քերականական ցուցիչն է, հիմնականում համապատասխանում է հայերենի բացառական հոլովի *ից* հոլովական թեթույթին՝ իր ունեցած գործառույթներով:

թշ նամհների մի խու մբ

Այստեղ նաև մի հետաքրքրական օրինակ ենք տեսնում. այն դեպքում, երբ հատկացյալը դրված է որոշյալ առումով, ապա կիրառվում է իզաֆեթային կապակցությունը, եթե անորոշ առումով, ապա *j/az* նախդիրով կապակցությունը: Միանշանակ դժվար է սահմանել այս երևույթի պատճառը, սակայն առավել հավանական է հնչյունաբանական բացատրությունը, այն է *ye* անորոշ իմասնիկից հետո դժվարանում է իզաֆեթի արտասանությունը, այդ իսկ պատճառով այդ դիրքում դրվում է *j/az-ը*: Այս նախդիրը կիրառվում է նաև վերաբերական հարաբերություններ արտահայտող որոշակի կապակցությունների կազմում, ինչպես օրինակ՝

իրավունքների պաշտպանություն

Պարսկերենում իզաֆեթային կապակցությունների անդամներից մեկը կարող է լինել նաև բայանուն, որը նույն անորոշ դերբայն է: Կախված կապակցության արտահայտած իմաստից՝ այն կարող է համապատասխանել հայերենի ենթակասեռականով կամ ինդիր սեռականով դրված կապակցություններին, օրինակ՝

աղջկա պարելը

կամրջի կառուցելը

Վ. Առաքելյանը նշում է, որ սեռականի՝ բայական խնդրի դերում կիրառվելը բնորոշ է առօրյա խոսակցական լեզվին և դուրս է գրական հայերենի քերականական կանոններից¹⁶⁵:

Հայերենին յուրահատուկ՝ սեռական հոլովի միջարք մասնակի իմաստային առումներ նույնպես իրենց զուգահեռ արտահայտությունն են գտնում պարսկերենում՝ իզաֆեթային կառույցի միջոցով.

Անվանման սեռական

meydan-e Ferdousi / میدان فردوسی

Տիրոդոսիի հրապարակ

Պարունակություն սեռական

bāgh-e angur / باغ انگور

խաղողի այգի

Չնայած բերված բազմաթիվ օրինակներին, որտեղ հայերենի սեռական հոլովը և պարսկերենի իզաֆեթային կապակցությունը իմաստաբանորեն համընկնում են, այդ համապատասխանություններն, այնուամենայնիվ, լիակատար նույնական չեն: Հանդիպում են նաև կիրառման այնպիսի դեպքեր, երբ հայերենում սեռական հոլովով կազմված կապակցությունները պարսկերենում համապատասխանում են այլ՝ ոչ իզաֆեթային կառույցների: Օրինակ՝ *վոխանուն* *սեռականը*, որի համարժեքը պարսկերենում «*māl-e*» օժանդակ բառի միացմամբ կազմված կառույցն է՝

māl-e vazir / مال وزیر

նախարարին

Վ. Առաքելյանը առանձնացնում է նաև *գերադրական սեռականը*, երբ արտահայտվում է առարկաների այն խումբը, որտեղ եզակի հատկացյալը իր հատկանիշներով ամենաբարձրն է, օրինակ՝ *քաղերի քաղը*:

Չնայած իզաֆեթի կազմության մեջ առաջին անդամը սովորաբար գոյական է, որոշ դեպքերում այն կարող է լինել ածական: Այդ բառակապակցությունները, սակայն, հայերենում իրենց մեջ սեռական հոլովով դրված բառածներ և կապեր են կրում կամ, կախված բառիմաստից և ենթատեքստից, ստանում են այլ հոլովներ, օրինակ՝

¹⁶⁵ Առաքելյան Վ., նշվ. աշխ., 1957, էջ 75:

շարժմանը պատրաստ

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ հայերենում և պարսկերենում վերաբերական իմաստները թեև արտահայտվում են տարբեր քերականական միջոցներով, այնուհանդերձ այդ երկու կառույցների՝ հայերենի սեռական հոլովի և պարսկերենի իզաֆեթային կապակցությամբ իմաստային ընդգրկումը գրեթե համընկնում է՝ որոշ բացառություներով:

3.4.Տրական հոլով

Վ. Առաքելյանը նշում է, որ տրականը և հայցականը միմյանցից տարբերվում են նախևառաջ խնդրառության տեսանկյունից. «Հայցականը ուղիղ խնդիր է և ավելի մեծ անհրաժեշտություն է ներկայացնում գործողության համար, քան տրականը: Հայցականը անմիջականորեն ընկնում է բայի գործողության ոլորտը, և գործողությունը ուղղակի կերպով անցնում է նրավրա: Տրականը, սակայն, հեռավոր ձևով է շոշափվում գործողության կողմից»¹⁶⁶:

Տրականը անմիջականորեն, իբրև խնդիր, չի մտնում գործողության ոլորտը, ինչպես որ հայցականի դեպքում է: Հայցական հոլովի հետ ամենից շատ իմաստային ընդհանրության եզրեր ունի *գործողության անմիջական խնդիր տրականը*: Վ. Առաքելյանը այդ մասին նշում է. «Այն բայերը, որոնք գրաբարում ունեցել են հայցական հոլովով խնդիր, այժմ ինչքան էլ որ տրականով խնդիր առնեն, այնուամենայնիվ հայցական են: Իսկ այն բայերը, որոնք ներգործական են, գրաբարում ունեցել են միայն տրականով խնդիր, այժմ էլ դրանց խնդիրը տրական են համարում: Նման դեպքերում ոչ միայն շարունակվում են խնդրառության հին ավանդույթները, այլ և դրա քերականական ըմբռնումը դեռևս ուժի մեջ է մնում»¹⁶⁷:

¹⁶⁶ Առաքելյան Վ., նշվ. աշխ., էջ 91:
¹⁶⁷ Առաքելյան Վ., նշվ. աշխ., էջ 92:

Գործողության անմիջական խնդիր են ստանում ներգործական մի շարք բայեր՝ տիրել, հաղթել, օգնել, հարվածել, սպառնալ, վարժվել, ընտելանալ, սիրահարվել:

Թշնամին տիրեց մեր **երկրին**:

Նասպառնաց իր **հարևաններին**:

Պարսկերենում տվյալ իմաստային առումը որևէ հստակ քերականական ցուցիչ չունի, կարող է արտահայտվել մի շարք կապերի, իսկ որոշ հարադրավոր բարդ բայերի դեպքում՝ շարահասունության միջոցով: Օրինակ՝

تحریمها به صنایع فن آوری ایران کمک کرد.

Tahrimhā **be** sanāyi' e fanāvāri irān **komak kard**.

Պատժամիջոցները նպաստեցին **իրանի տեխնոլոգիաների** արտադրությանը:

تیم مازندران بر رقیب تبریزی خود پیروز شد.

Tim e māzandarān **bar** raqib e tabrizi khod **piruz šod**.

Մազանդարանի թիմը **հաղթեց** Թավրիզի մրցակիցներին:
(**բառացի**՝ ...մրցակցի վրա հաղթող դարձավ...)

دولت انگلیس مانع انتشار اسناد کلیدی جنگ عراق شد.../man e... šodan (խանգարել, խոչընդոտել)

دولت انگلیس مانع انتشار اسناد کلیدی جنگ عراق شد.

Dowlāt e englis **mān' e** entešār asnād e kelidi e jang e arāq **šod**.

Անգլիայի կառավարությունը **խանգարել է** իրաքի պատերազմի մասին

կարևոր փաստաթղթերի հրատարակմանը:

Մատուցման անուղղակի խնդիրը, որը ևս արտահայտվում է տրականով, ցույց է տալիս այն առարկան, որին մի բան տրվում, մատուցվում, մոտեցվում է: Այս խնդիրը կարող են ընդունել շարժում, մոտեցում ցույց տվող մի շարք բայեր՝ տալ, մատուցել, առաջարկել, պարգևել, նվիրել, ընծայել, հանձնել, մոտենալ, մատակարարել, վճարել, մերժենալ, կտակել, վաճառել և այլն:

Հանձնաժողովը պարգևը **հաղթողին**:

Մատուցման անուղղակի խնդիրը պարսկերենում արտահայտվում է հիմնականում *به/be* կապի միջոցով: Օրինակ՝

ظریف برنامه جامع اقدام مشترک را به مجلس تقدیم کرد.

Zarif barnāme jām' e moštarak rā **be** majles taqdim kard.

*Չարիֆը գործողության նեների համապարփակ ծրագիրը ներկայացրեց **խորհրդարանին**:*

Հանգաման անուղղակի խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որին մի բան հանգում, միանում, ուղղվում է: Այս խնդիրը կարող են ստանալ հետևյալ բայերը՝ *միանալ*, *հյուսվել*, *ծուլվել*, *խառնվել*, *կապել*, *քսել*, *կցել*, *փաթաթվել*, *հասնել*, *հանդիպել* և այլն:

Ամրոցի պատկերը *ծուլվել* էր **հորիզոնին**:

Հանգաման անուղղակի խնդիրը նույնպես պարսկերենում արտահայտվում է *به/be* կապի միջոցով: Օրինակ՝

مسافران پرواز تهران-ساری به مقصد نرسیدند.

Mosāferān e parvāz e tehrān sārī **be maqsad** naresidand.

*Թեհրան-Սարի թռիչքի ուղևորները չհասան **նպատակակետին**:*

Փոխադարձ գործողության և կապի տրականը ցույց է տալիս այն առարկան, որի հետ մեկ այլ առարկա փոխկապակցվածության մեջ է գտնվում¹⁶⁸: Օրինակ՝ *մասնակցել*, *համածայնել*, *ուղեկցել* և այլն:

Հայ կական պատվիրակությանը *մասնակցեց **խորհրդատվության***:

Պարսկերենում նման կարգի քերականական հարաբերությունները մեծ մասամբ արտահայտվում են *dar* կապի միջոցով, որը հիմնականում տեղի նշանակության ունի և իմաստային տեսանկյունից ավելի մոտ է հայերենի ներգոյականի **ուժ** հոլովական վերջավորությանը: Օրինակ՝

روسیه در مذاکرات صلح افغانستان شرکت نخواهد کرد.

Rusiye **dar mozākerāt** e solh e afghānestān šerkat nakhāhad kard.

*Ռուսաստանը չի մասնակցի Աֆղանստանի խաղաղության շուրջ **բանակցության նեներին**:*

Հաղորդման տրականը ցույց է տալիս այն անձին կամ առարկան, որին ինչ-որ բան ասվում, հաղորդվում է: Այն ստանում են հատկապես հաղորդակցվելու, ասելու իմաստ կրող բայերը՝ *ասել*, *հաղորդել*,

¹⁶⁸ Տե՛ս Առաքելյան Վ., նշվ. աշխ., էջ 97:

հայ տնել , թել ադրել , հրամայել , պատմել , պատասխանել , բացատրել , հարցնել , զեկուցել , լսել , ունկնդրել և այլն :

Ներկաներն ունկնդրում էին բանախոսին :

Պարսկերենում նման կարգի քերականական հարաբերությունները արտահայտվում են *be* կապի միջոցով : Օրինակ՝

او از من به مدیر شکایت شکایت کرد .

U az man **be modir** šekāyat kard .

Նահնձնից գանգատվեց **տնօրենին** :

Նմանությամբ կամ համապատասխանության տրականը ցույց է տալիս այն առարկան, որին ինչ որ բան նմանվում կամ հավասարվում է¹⁶⁹ : Այն կարող են ստանալ այնպիսի բայեր, ինչպիսիք են՝ ընկերանալ , նմանվել , հավասարվել , հարմարվել , համապատասխանել , հարմեմատվել և այլն :

Նրա գբադեցրած դիրքը համապատասխանում է իր արժանիքներին :

Պարսկերենում նման քերականական հարաբերությունները կարող են արտահայտվել ինչպես *be* կապի, այնպես էլ շարահասության միջոցով, երբ կիրառվում է հարադրավոր բայ, օրինակ՝

یک نویسنده چینی در نتیجه عمل جراحی پلاستیک شبیه ویلیام شکسپیر شد .

Yek nevisandeye čini dar nātijeye amal jarāhiye pelāstik **šabih e** viliām šekspir **šod** .

Մի չինացի գրող ալաստիկ վիրահատության հետևանքով նմանվել է Վիլյամ Շեքսպիրին :

Վերածման կամ փոխակերպման տրականով դրված խնդիրը ներկայանում է որպես առարկա, որին վերածվում, փոխակերպվում է մի բան¹⁷⁰ : Այն կարող են ստանալ մի շարք բայեր՝ փոխել , բաժանել , կիսել , վերածել , փոխարկել և այլն :

Գեներալը գորքը բաժանեց երկու **մասի** :

Պարսկերենում նույնարժեք քերականական հարաբերությունները կարող են արտահայտվել *be* կապի միջոցով, օրինակ՝

¹⁶⁹ Տե՛ս Առաքելյան Վ., Նշվ. աշխ., էջ 99 :

¹⁷⁰ Տե՛ս Առաքելյան Վ., Նշվ. աշխ., էջ 100 :

الآن وقت آن است که بحران را تبدیل به فرصت کنیم.

*Alān vaqt e ān ast ke bohrān rā tabdil **be** forsāt konim.*

*Այ ժամ ժամանակն է, որ ճգնաժամը վերածենք **հնարավորու թյ ան**:*

Ստացական տրականով դրվում է այն անուղղակի խնդիրը, որին մի բան պատկանում, կամ որին մի բան վերագրվում է¹⁷¹: Այս կարգի խնդիր կարող են ստանալ այնպիսի բայեր, ինչպիսիք են *պատկանել*, *վիճակվել*, *վերապահել*, *վերագրել*, *վերաբերել* և այլն:

Պարսկերենում նման կարգի քերականական հարաբերությունները դրսևորվում են *به* / *be* կապի միջոցով, օրինակ՝

داوود اوغلو انفجار آنکارا را به کردهای سوریه و ترکیه نسبت داد.

*Dāvudoghlu enfejār e ānkārā rā **be** kordhāye suriye va torkiye nesbat dad.*

*Դավուլ թօղլ ու ն Անկարայի պայթյունները վերագրել է Սիրիայի և Թուրքիայի **քրդերին**:*

Ուղևորման կամ ուղղույթան տրականով անուղղակի խնդիր ստանում է այն գոյականը, որին ուղղվում է մեկ այլ առարկա¹⁷²: Այդպիսի խնդիր ստանում են *ուղղել*, *գրել*, *նայել*, *հառել*, *դառնալ*, *դիմել*, *անցնել*, *այցելել*, *ուղարկել*, *գնալ*, *մեկնել*, *պարզել*, *քաղել* և մի շարք այլ բայեր:

Պարսկերենում ուղևորման իմաստավորումները հիմնականում արտահայտվում են՝

او هر روز به دختر عزیز خود گلهای می فرستاد.

*U har ruz **be** dokhtar e aziz e khod golha mi ferestād.*

*Նաամեն օր իր սիրած **աղջկան** ծաղիկներ էր ուղարկում:*

Բաղադրատույնան տրականը կիրառվում է մի շարք համեմատույնան իմաստ արտահայտող բայերի հետ, ինչպիսիք են *գերադասել*, *գերակշռել*, *գերազանցել*¹⁷³: Պարսկերենում նման քերականական հարաբերություններն արտահայտվում են *بر* / *bar* կապի միջոցով, օրինակ՝

او کشوار قدیم خود را بر پایتختهای اروپای ترجیح می داد.

¹⁷¹ Տե՛ս Առաքելյան Վ., Նշվ. աշխ., էջ 101:

¹⁷² Տե՛ս Առաքելյան Վ., Նշվ. աշխ., էջ 103:

¹⁷³ Տե՛ս Առաքելյան Վ., Նշվ. աշխ., էջ 123:

*U kešvar e qadim e khod rā **bar pāyitakhthāye** orupā tarjih mi dad.*

*Նա եվրոպական **մայրաքաղաքների** գերադասում էր իր հինավուրց երկիրը:*

Տրական հոլոպի կիրառման մեկ այլ տարբերակ՝ *ժամանակի տրականը*, ցույց է տալիս այն ժամանակը, որի ընթացքում կատարվում է որևէ գործողություն: Այդ հոլոպական տարբերակով դրվում են մի շարք ժամանակ ցույց տվող բառեր՝ *լուսաբաց, կեսօր, միջօրե, լուսադեմ, արևածագ, մայրամուտ*¹⁷⁴:

Կեսօրին ես կարևոր հանդիպում ունեմ:

Այս իմաստային առումն արտահայտելու համար հիմնականում կիրառելի է նաև նշված բառերի ուղիղ՝ առանց կապերի ձևը:

نشست کمیسیون اقتصادی ظهر باید شروع شود.

*Nešast e komision e eqtesādi **zohr** bāyad šoru šavad.*

Տնտեսական հանձնաժողովի նիստը կեսօրին կմեկնարկի:

دانشجویان دانشگاه تهران ظهر چهارشنبه به مناطق عملیاتی اعزام شدند.

*Dānešjuyān e dānešgāh e tehrān **zohr** e čahāršanbe be manāteq e amliāti azām šodand.*

Թեհրանի համալսարանի ուսանողները չորեքշաբթի կեսօրին

մեկնեցին մարտական գործողությունների վայրերը:

Նշված օրինակներից զատ, տրականը հայերենում ունի մի շարք ավելի մասնակի բնույթի իմաստային տարբերակներ ևս.

Չափ ու քանակի տրական. տարիք, հասակ, չափ, քանակ, ծավալ, խորություն, երկարություն գոյականները մի շարք որոշիչների հետ դրվելով տրական հոլոպով և դառնալով ստորոգելիական վերադիր, արտահայտում են համեմատության, հարաբերության իմաստավորում¹⁷⁵: *Օրինակ՝ նույն տարիքի, նույն հասակի:*

Պարսկերենում նշված իմաստային հարաբերություններն արտահայտվում են բառային և ոչ քերականական միջոցներով:

Փոխարինումն տրական. այս հոլոպական տարբերակով դրվում է այն գոյականը, որի փոխարեն տրվում կամ արվում է ինչ որ բան: Տրական հոլոպի այս տարբերակով հատկապես դրվում են թվականները՝ *մեկին հինգ, մեկին հարյուր* և այլն: Այս դեպքում

¹⁷⁴ Տե՛ս Առաքելյան Վ., նշվ. աշխ., էջ 115:

¹⁷⁵ Տե՛ս Առաքելյան Վ., նշվ. աշխ., էջ 120:

նույնպես պարսկերենում նշված օրինակին համարժեք քերականական արտահայտության միջոցներ չկան¹⁷⁶:

Առանձնությամբ տրական. ցույց է տալիս որևէ գործողության առանձին կատարման հանգամանքը, օրինակ՝ *ինքն իրեն, ինձ ու ինձ*: Կիրառելի է հիմնականում դերանունների հետ: Պարսկերենում նշված իմաստն արտահայտվում է ոչ թե դերանվան կրկնությամբ, այլ *خود* /*piš e khod* կայուն կապակցությամբ, որը բառացիորեն կարելի է թարգմանել «*իր մոտ*»:

پیش خود فکر می کرد که یک سال بعد کجا باید باشد.

Piš e khod fekr mi kard ke yek sāl bad koja bāyad bāšad.

ինքն իրեն մտածում էր մեկ տարի հետո որտեղ էլ ինչու ու :

3.5.3 այցական հոլով

Ուղղական հոլովը, որի մասին խոսվեց, հակադրվում է թեք հոլովներին: Թեք հոլովներն ուղղականից ունեն նախաառաջ ձևաբանական տարբերություններ, որը, իր հերթին, պայմանավորված է նրանով, որ թեք հոլովներով դրված գոյականները կախման մեջ են գտնվում նախադասության ստորոգյալից և ծառայում են վերջինիս համար որպես խնդիր, կամ կախված են նախադասության որևէ այլ անդամից:

Վ. Առաքելյանը հետևյալ կերպ է տալիս խնդրառության սահմանումը. «խնդրառությունը որևէ դերանվան, գոյականի կամ գոյականացված այլ խոսքի մասի հոլովական կախվածությունն է մի այնպիսի բառից, հատկապես բայից, որով պայմանավորվում է դերանվան, գոյականի կամ գոյականացված այլ խոսքի մասի այս կամ այն հոլովը: Լեզուներում խոշոր նշանակություն ունի բայի և գոյականի կամ գոյականացված այլ խոսքի մասի ու դերանվան խնդրառական հարաբերությունը, որտեղ բայը հանդես է գալիս իբրև խնդիր առնող կամ իշխող բառ, իսկ գոյականը կամ գոյականացած խոսքի մասը՝ դերանունը, իբրև խնդիր կամ ենթարկվող բառ»¹⁷⁷:

Ըստ բայի և դրա խնդրի մեջ առկա հարաբերակցության, ուղիղ խնդիրը կարող է ունենալ իմաստային մի շարք նրբերանգներ: Վ.

¹⁷⁶ Տե՛ս Առաքելյան Վ., նշվ. աշխ., էջ 122:

¹⁷⁷ Տե՛ս Առաքելյան Վ., նշվ. աշխ., 1957, էջ 23:

Առաքելյանը առանձնացնում է հետևյալները՝ *արտաքին խնդրի հայ ցական, հետևանքի հայ ցական, ներքին խնդրի հայ ցական, կրկնակի կամ երկրորդական խնդիր հայ ցական*:

Պարսկերենում ուղիղ խնդիրը կարող է արտահայտվել երկու կերպ. գոյականի մաքուր ձևով՝ առանց քերականական ցուցչի, և *ʾrā* հետադիր կապի հետմիասին:

Պարսկերենում ուղիղ խնդիրը սերտորեն առնչվում է առկայացման քերականական կարգի հետ: Առանց հետադիր կապի կիրառվում են անորոշ առումով դրված առարկաները, կապի հետ՝ որոշյալները: *ʾrā* կապը կարող է դրվել նաև որպես ուղիղ խնդրի ծառայող բառակապակցության հետ: Օրինակ՝

من توی گلدان گلها گذاشتم.

Man tuye goldān golhā gozāštam.

Ես ծաղկամանի մեջ ծաղիկներ դրեցի:

բայ ց՝

من گلها را توی گلدان گذاشتم.

Man golhā ra tuye goldān gozāštam.

Ես ծաղիկները դրեցի ծաղկամանի մեջ:

Ուղիղ խնդիրը անմիջականորեն պայմանավորված է նաև բայի անցողականությամբ: Պարսկերենում, ինչպես նկատում է Յու. Ռուբինչիկը, լիովին հստակ չէ մի շարք բայերի՝ անցողական կամ անանցողական լինելու հանգամանքը: Ավելին, պարսկերենում կան մի շարք բառեր, որոնք միաժամանակ ներգործական են և կրավորաձև չեզոք: Օրինակ՝

ریختن / rikhtan- լ ցնել և լ ցվել

امیختن / amikhtan- խառնել և խառնվել

ساختن / sukhtan- այրել և այրվել

Իսկ մի շարք այլ ներգործական բայերի կիրառման դեպքում ուղիղ խնդրի հետ դրվում է ոչ թե սովորաբար այդ դերում կիրառվող *ʾrā* հետադիր կապը, այլ *ʾaz* կապը, որն իր հիմնական կիրառմամբ արտահայտում է անջատման անուղղակի խնդիրը և իմաստով համընկնում է հայերենի բացառական հոլովի *-ից* վերջավորության հետ: Օրինակ՝ *دفاع کردن / defā' kardan* (*պաշտպանել*), *پنیرای*

استفاده / *pažirāyi kardan* (հյ ու ը ը ն կ ալ ել), *da'vat kardan* (հրավիրել), دعوت کردن / *estefāde kardan* (օգտագործել): Օրինակ՝

ساربازان از میهان کهان ما دلیرانه دفاع می کنند.

Sārbāzān **az mihān** kohān mā **defā' mi konand.**

Չինվորները պաշտպանում են մեր հինավուրց հայրենիքը:

Ուղիղ խնդրի այն տարբերակները, որտեղ վերջինս չի հանդիսանում ստորոգյալի գործունեության անմիջական արդյունք, հետևանք, Վ. Առաքելյանը բնորոշում է որպես *արտաքին խնդրի հայցական*¹⁷⁸: Օրինակ՝

Սպասավորները սեղանին տեսակ-տեսակ գինիներ էին շարում:

Այստեղ գինիները սպասավորների գործունեության անմիջական արգասիքը չենք կարող համարել:

من کتاب را روی میز گذاشتم.

Man **ketāb rā** ruye miz gozāštam.

Ես գիրքը դրեցի սեղանին:

Արտաքին խնդրի հայցականից սկզբունքորեն տարբերվում է *հետևանքի հայցականը*: Այն ցույց է տալիս գործողության անմիջական արդյունքը, որը բխում է դրանից և առանց այդ գործողության գոյություն ունենալ չի կարող, օրինակ՝ *հաց թխել*, *ծառ եփել*, *շապիկ կարել* և այլն:

Քանի որ նման դեպքերում հիմնականում գործունենք նյութ ցույց տվող գոյականների հետ, որոնք որոշյալ ությունից զուրկ են, պարսկերենում դրանք կիրառվում են առանց *ʔrā* հետադիր կապի, օր.՝ *nān pokhtan* (հաց թխել):

Վ. Առաքելյանը առանձնացնում է նաև *ներքին խնդրի հայցականը*, երբ բայի նույն արմատով կազմված գոյականը դրվում է որպես ուղիղ խնդիր, օրինակ՝ *երգ երգել*, *խորհուրդ խորհել*: Այս կապակցությունները հիմնականում բնորոշ են գրական լեզվին և տեքստին հաղորդում են յուրահատուկ ոճավորում: Երբեմն նույնաբանությունից խուսափելու նպատակով բայը փոխարինվում է հոմանիշով՝ *խոսք ասել*, *ծառ ասել*:

Պարսկերենում, որտեղ բայերի մեծամասնությունը այսպես թե այնպես հարադրավոր են, նման դեպքերն առանձնացնելը որպես

¹⁷⁸ Տե՛ս Առաքելյան Վ., նշվ. աշխ., էջ 41-46:

ուղիղ խնդրի կիրառություններ ճիշտ չէ, քանի որ դրանք դիտարկվում են որպես մեկ ամբողջական կառույց: Օրինակ՝ *سخن گفتن / sokhan goftan* (ճառ ասել), *غذا خوردن / ghaza khordan* (ճաշել, բառացի՝ ճաշ ուտել):

Ընդհանրապես, պարսկերենում հարադրավոր բայերը քանակությամբ գերակշռում են արմատական բայերին, ավելին՝ առաջինների թիվը գնալով ավելանում է՝ աստիճանաբար գործածությունից դուրս մղելով արմատական բայերին¹⁷⁹:

Ուղիղ խնդրի մեկ այլ տարբերակ է *կրկնակի կամ երկրորդական խնդրի հայցականը*: Ինչպես նշվեց ստորոգելիական վերադիր ուղղականի դեպքում, երբ կրավորական սեռի մի շարք բայեր ստանում էին երկու լրացում, այնպես էլ նույն բայերի ներգործականները կարող են ընդունել երկու խնդիր, օրինակ՝ *անել, ընտրել, ասել, անվանել, կոչել, իմանալ, կարծել, համարել*:

Նաիր ուսուցչին համարում էր հանճարեղ մարդ:

Երկու խնդիրների միջև կան որոշակի իմաստային տարբերություններ. մեկը բուն ուղիղ խնդիրն է, որի վրա անցնում է գործողությունը, մյուսը երկրորդական է և ցույց է տալիս բայի և հիմնական խնդրի հարաբերության արդյունքը:

Պարսկերենում կրկնակի ուղիղ խնդրի կիրառման դեպքում հիմնական՝ բուն ուղիղ խնդրի հետդրվում է *krā* հետադիր կապը, իսկ երկրորդը առանց դրա: Բուն ուղիղ խնդիրն այս դեպքում հայտնի է խոսակիցներին ու բնականաբար որոշյալ է և ստանում է համապատասխան ցուցիչ, իսկ երկրորդը միայն բացահայտվում է դրա հարաբերությամբ:

همه در روی و خیره بماندند

بنام او را خجسته و بیس خواندند

Hame dar ruye u kheyre bemāndand Benam u ra khojaste vis khāndand

Բոլորը հիացմունքով էին նայում նրա դեմքին Եվ

ցնծությամբ նրան Վիս կոչեցին

(Գորգանի, «Վիս և Ռամին»)

Որպես ուղիղ խնդիր կիրառվելուց զատ հայցական հոլովը հայերենում ունի մի շարք այլ կիրառություններ ևս: Օրինակ՝

¹⁷⁹ Рубинчик Ю. А., ук. соч., 2001, стр. 216-217.

ժամանակի հայ ցականը¹⁸⁰, որով դրվում են ժամանակ ցույց տվող մի շարք բառեր՝ տարի, օր, գիշեր, ցերեկ, առավոտ, իրիկուն, ամառ, աշուն, գարուն, ձմեռ, շաբաթվա օրերի անվանումները:

Նահաջորդ օրը մեկնեց քաղաքից:

Նա հինգ տարի անցկացրեց լեռներում՝ հսկելով հայրենիքի սահմանը:

Ինչպես տեսնում ենք, այս դեպքում հայ ցականով դրված գոյականը հանդես է գալիս ժամանակի պարագայի շարահյուսական պաշտոնում: Պարսկերենում նմանատիպ իմաստային առումներով ժամանակի պարագան դրվում է առանձին՝ ուղիղ ձևով, օրինակ՝

کار ساخت آن راه چهار سال طول کشید و در سال 1990 به بهربرداری رسید.

Kār e sākht ān rāh čahār sāl tul kešid va dar sal e 1990 be bahrebardāri resid.

Այդ ճանապարհի շինարարական աշխատանքները **չորս տարի** տևեցին և ավարտվեցին 1990 թվականին:

Հայ ցական հոլովի կիրառման մեկ այլ դեպք է տեղի հայ ցականը¹⁸¹, որը հայերենում լայն կիրառություն ունի: Այն նախևառաջ ցույց է տալիս այն կետը, դեպի որն ուղղվում է առարկան, կոչվում է նաև *ուղևորման հայ ցական*: Օրինակ՝ *հասնել տուն, մտնել այգին*:

Պարսկերենում ընդհանրապես հանգման, ուղևորման իմաստները հիմնականում արտահայտվում են *be* կապի միջոցով, իսկ հարադրավոր բայերի դեպքում՝ նաև շարադասության փոփոխությամբ, երբ խնդիրը դրվում է հարադրավոր բայի երկու բաղկացուցիչների միջև: Օրինակ՝ *be dānšgāh residan* (հասնել համալսարան), *šāred e khāne šodan* (մտնել տուն)

Հայերենում հայ ցական հոլովով կարող է դրվել նաև անորոշ դերբայը¹⁸²: Դա հնարավոր է նախևառաջ մի շարք զգացական իմաստ արտահայտող բայերի հետ, օրինակ՝ *սիրել, գիտենալ, հարկադրել, երազել, պարտադրել, սովորել, որոշել, ուխտել, հորդորել, կարգադրել, արգելել, մերժել, խոստանալ, փորձել, վճռել, կարողանալ, հրամայել, սկսել, համոզել և այլն*:

Լեռնազնացը **փորձեց** կարճ ճանապարհով **հասնել** գագաթ:

¹⁸⁰ Տե՛ս Առաքելյան Վ., նշվ. աշխ., էջ 47:

¹⁸¹ Տե՛ս Առաքելյան Վ., նշվ. աշխ., էջ 49:

¹⁸² Տե՛ս Առաքելյան Վ., նշվ. աշխ., էջ 59-60:

Հրամանատարը գինվորներին **արգելեց դուրս գալ** զորամասից:

Այն, ինչը Վ. Առաքելյանը հայերենի համար դիտարկում է որպես անորոշ դերբայի՝ հայցական հոլովով կիրառություն, պարսկերենի քերականությանը վերաբերող մասնագիտական գրականության մեջ անվանվում է *ներկա ապառնի ժամանակածև կամ աորիստ*:

Պարսկերենում աորիստը կազմելիս բայի ներկայի հիմքին ավելանում է *به* / **be** մասնիկը՝ *خواندن-بخوانم* / *khāndan-bekhānam* (կարդալ), *گفتن-گویم* / *goftan-beguyam* (ասել): *Օրինակ՝*

من میخواهم براوم به پاریس.

*Man mikhaham **berāvam** be pāris.*

*Ես ցանկանում եմ **գնալ** Փարիզ:*

او نمی تواند این هدیه را ببیند.

*U nemi tavānad in hediye rā **bepazirad.***

*Նաչի կարող այդ նվերը **ընդունել**:*

Մինևույն ժամանակ պետք է նշել, որ աորիստը պարսկերենում ունի շատավելիկայն կիրառություն, քան վերը նշված օրինակներն են, սակայն դադուրս է մեր թեմայի շրջանակներից:

3.6. Բացառական հոլով

Անուղղակի խնդիր է ցույց տալիս նաև բացառական հոլովը, որի հիմնական դերը անջատման իմաստի քերականական արտահայտումն է, որից առաջացել և զարգացել են այս հոլովի արտահայտած այլ իմաստային առումները:

Պարսկերենում հայերենի բացառական հոլովին բնորոշ գրեթե բոլոր քերականական իմաստները արտահայտվում են *از* / **az** կապի միջոցով:

Անջատման բացառականը, լինելով բացառական հոլովի արտահայտած իմաստների մեջ հիմնականը, անջատման անուղղակի խնդրի ցուցիչն է¹⁸³: Այն ցույց է տալիս այն առարկան կամ անձը, որից անջատվում, առանձնանում է մի որևէ այլ առարկա: Բացառականի այս հոլովական տարբերակով դրված անուղղակի խնդիրներ ստանում են հատկապես մի շարք բայեր, ինչպիսիք են՝

¹⁸³ Տե՛ս Առաքելյան Վ., նշվ. աշխ., էջ 127:

հեռանալ, փախչել, անջատվել, խուսափել, ճողոպրել, զատվել, հրաժարվել, մեկուսանալ, առանձնանալ, բաժանվել և այլն: Օրինակ՝
او از این مسئولیت سنگین صرف نظر کرد.

U **az in** masuliyat sangin sarfenazar kard.

Նա այդ ծանր **պատասխանավոր թյուևնից** հրաժարվեց:

Անջատման բացառականին իր արտահայտած իմաստով մոտ է ելման բացառականը, որով դրված խնդիր ստանում են հիմնականում այնպիսի բայեր, ինչպիսիք են՝ ստանալ, առնել, վերցնել, խլել, կորզել, հախշտակել, ընդունել, ձեռք բերել, փախցնել և այլն: Օրինակ՝

خواب از چشماتم ربودی.

Khāb **az češmānam** robudi.

Քուևը խլեցիր իմ **աչքերից**:

Պատճառի և հիմունքի բացառականը նույնպես տվյալ հոլովի արտահայտած հիմնական իմաստային առումներից մեկն է¹⁸⁴: Այս երկուսից առաջինը՝ պատճառի բացառականով խնդիրը ստանում են հիմնականում մի շարք զգացմունք արտահայտող բայեր, օրինակ՝ տանջվել, ցավից, տխրել միայն **թյուևնից**:

مسافران حسرت می هانش غمگین شد.

Mosāfer **az hesrat e mihāneš** ghamgin šod.

Ճամփորդը տխրել էր հայրենիքի **կարոտից**:

Պատմական կամ վերաբերական բացառականը ցույց է տալիս, թե ում կամ ինչի մասին է խոսքը¹⁸⁵: Դրվում է հիմնականում այնպիսի բայերի հետ, ինչպիսիք են՝ ասել, խոսել, բամբասել, չարախոսել, պատմել, գանգատվել և այլն: Օրինակ՝

او از من شکایت شکایت می کرد.

U **az man** šekāyat mi kard.

Նա **ինձնից** գանգատվում էր:

¹⁸⁴ Տե՛ս Առաքելյան Վ., Նշվ. աշխ., էջ 130:

¹⁸⁵ Տե՛ս Առաքելյան Վ., Նշվ. աշխ., էջ 147:

Ներգործող խնդրի բացառականը դրվում է կրավորական սեռի բայերի հետևյալ ցուցակում՝ տալիս գործողության աղբյուրը՝ այսինքն տրամաբանական ենթական, որը, սակայն, տվյալ դեպքում քերականորեն ենթակայի դերում է¹⁸⁶: Օրինակ՝

Գառնին կառուցվել է Տրդատ Առաջինի կողմից:

Կրավորականը ցուցակում համար պարսկերենում նույնպես կիրառվում է *از طرف* // *az taraf* (կողմից) արտահայտությունը¹⁸⁷: Օրինակ՝

شرفخان بدلیسی از طرف شاه اسماعیل دوم مأمور شده بود.

Šaraf khān bedlisi az taraf e šāh esmāyil e dovom māmur šode bud.

Շարաֆ խան Բիթլիսին շահ Իսմայել Երկրորդի կողմից պաշտոն ստացավ:

Ժամանակի բացառականով արտահայտվում են մի շարք ժամանակային հարաբերություններ, ինչպիսիք են՝ սկզբնական ժամանակակետը, երբ սկսվում է գործողությունը կամ ժամանակային պահը, որից հետո կատարվելու է գործողությունը, օրինակ՝ *այն օրից ի վեր* կամ *մի քանի ամսից*: Պարսկերենում նշված ժամանակային հարաբերություններն արտահայտելու համար բացառական հոլովի քերականական իմաստները արտահայտող *از* // *az* կապից զատ դրվում է նաև *ba'd* / بعد «*հետո*» կապը:

Տեղի բացառականը ցուցակում տալիս տարածական հարաբերությունների մի քանի տեսակներ, ինչպիսիք կարող են լինել *ելման կետը կամ տարածությունը, որը կտրում, անցնում է ենթական, կամ այն տեղը, որի առջևից, հետևից կամ զուգահեռ անցնում է ինչ-որ առարկա*¹⁸⁸: Տեղի բացառականով դրվում են հիմնականում տարածական իմաստ արտահայտող կապերը՝ *տակից, վրայից, միջից, առջևից, հետևից, կողքից և այլն*: Պարսկերենում նշված ժամանակային հարաբերություններն արտահայտելու համար բացառական հոլովի քերականական իմաստները արտահայտող *از* // *az* կապից զատ դրվում է նաև համապատասխան տեղային իմաստ արտահայտող կապը, օրինակ՝

از جلوی دانشگاه گذشتیم.

¹⁸⁶ Տե՛ս Առաքելյան Վ., նշվ. աշխ., էջ 130:

¹⁸⁷ Иванов В. Б., Гладкова Е. Л., Учебник персидского языка, ч. 2, Москва, 2004, стр. 71-72.

¹⁸⁸ Տե՛ս Առաքելյան Վ., նշվ. աշխ., էջ 136:

az jeloje dānešgāh gozāštim

Համալ սարանի առջևից անցանք:

Բաղդադում թյան բացառականը, որը լայն կիրառություն ունի հայերենում, արտահայտում է երկու գոյականների միջև անցկացվող համեմատությունը՝ դրանց որևէ հատկության նկատմամբ: Հիմնականում դրվում է որակական ածականների, մակբայերի հետ: Պարսկերենում այն նույնպես արտահայտվում է յ/ **az** կապի միջոցով, ինչպես հայերենի բացառական հոլովի բազմաթիվ այլ առումներ, օրինակ՝

تهران از شیراز بزرگتر است.

tehrān **az** šīraz bozorgtar ast.

Թեհրանը ծիրազից մեծ է:

Մասնական բացառականը¹⁸⁹ արտահայտում է մասնակի և ընդհանուր փոխարարությունները, օրինակ՝

بعضی از مهاجران سوری از بیروت به رم منتقل شدند.

ba'zi az mohājerān e suri az beirut be rom montaql šodand.

Սիրիացի **փսխատականներից** ոմանք Բեյրութից տեղափոխվեցին Հռոմ:

3.7. Գործիական հոլով

Գործիական հոլովի արտահայտած քերականական իմաստների մեջ կենտրոնականը *միջոցի անուղղակի խնդրի* իմաստն է: Մնացած իմաստային տարբերակները զարգացել են դրանից ժամանակի ընթացքում:

*Միջոցի գործիականով*¹⁹⁰ դրվում են ինչպես անմիջականորեն գոյականները, այնպես էլ որոշ սպասարկու բառեր, ինչպիսիք են *միջոցով*, *ձեռքով*:

Նամատներով շոյեց բանաստեղծի ճակատը:

Թիկնապահի ձեռքով կազմակերպեցին արքայի սպանությունը:

Պարսկերենում գործողության միջոցի քերականական իմաստն արտահայտվում է **կ/bā** կապի միջոցով, օրինակ՝

زدها قفل خانه را با کلید تازه باز کردند.

¹⁸⁹ Տե՛ս Առաքելյան Վ., Նշվ. աշխ., էջ 145:

¹⁹⁰ Տե՛ս Առաքելյան Վ., Նշվ. աշխ., էջ 150:

dozdhā qofl e khāne rā **bā kelid e tāze bāz kardand.**

Գործերը տան դուռը նոր **բանալի** բացեցին:

Պատճառի գործիականը, ինչպես և հուշում է անվանումը, ցույց է տալիս այն անձը կամ իրը, որը հանդիսանում է գործողության պատճառ, դրդող ուժ¹⁹¹: Գործիական հոլովի այս տարբերակը բավականին էլայն կիրառություն ունի միշտ քսպասարկու բառերի հետ՝ *պատճառով, առիթով, պատրվակով* և այլն:

Սաստիկ շոգի պատճառով բոլորը թաքնվել էին ծառերի ստվերում:

Պարսկերենում նշված քերականական իմաստներն արտահայտվում են **به/be** կապի միջոցով.

به دلیل باران کنسرت لغو شد.

be dalil e bārān konsert laghv šod.

Անձրևի **պատճառով** համերգը հետաձգվեց:

Հիմունքի գործիականը իմաստային զգալի ընդհանրություններ ունի պատճառի գործիականի հետ¹⁹²: Հիմնականում կիրառվում է պաշտոնական-վարչական ոճի և գլխավորապես Գործիականի այս իմաստային տարբերակով դրվում են գլխավորապես *օրենք, պայման, իրավունք, պայմանագիր, հողված*, և նման բնույթի միշտ քայլ գոյականներ:

Սույն պայմանագրով սահմանվում են կողմերի իրավունքներն ու պարտականությունները:

Գործիական հոլովի այս իմաստային տարբերակին անդրադառնալիս պետք է նկատել, որ այն ունի մեկ այլ առավել կիրառելի հոմանիշ կառույց. օրինակ՝ նշված նախադասությունում «պայմանագրով» բառը կարելի է փոխարինել «պայմանագրի հիման վրա» բառակապակցությամբ: Պարսկերենի դեպքում կիրառելի է նշված տարբերակը.

دولت بر اساس قانون ملزم به علنی کردن قراردادهاست.

dowlat bar esās e qānun molazem be alani kardan e qarārdādhā ast.

Պետությունը **օրենքով** (բառացի՝ **օրենքի հիման վրա**) պարտավոր է պայմանագրերը հրապարակել:

¹⁹¹ Տե՛ս Առաքելյան Վ., նշվ. աշխ., էջ 151:

¹⁹² Տե՛ս Առաքելյան Վ., նշվ. աշխ., էջ 152:

Ձևի գործիականը արտահայտում է գործողության կատարման եղանակը:

Թիմակիցները սկզբում հեզնանքով էին վերաբերվում նորեկին:

Պարսկերենում տվյալ իմաստային առումը արտահայտվում է *ʔbā* կապի միջոցով, օրինակ՝

او با کمال خوئسردی به دشمنان خود نگاه می کرد.

u bā kamal e khunsardi be došmānān e khod negāh mi kard.

Նակատարյալ **սասնաարտություն** նայում էր իր թշնամիներին:

Սաստկացման գործիականը այդ հոլովի յուրաքանչյուր կիրառություններին մեկն է, երբ անորոշ դերբայի հարադրությամբ դրվում է նույն դերբայի՝ գործիական հոլովով ձևը, որով արտահայտվում է գործողության սաստկացման, ուժգնացման իմաստավորում, օրինակ՝ *ատելով ատել, տենչալով տենչալ*¹⁹³:

Պարսկերենում նման քերականական համարժեքներ չկան:

Գնի գործիականը նույախ տվյալ հոլովի մասնակի կիրառություններին է, ցույց է տալիս գին, արժեք: Օրինակ՝

Նաիր մեքենան գնեց տաս միլիոն դրամով:

Պարսկերենում գնի, արժեքի նշանակությամբ կրկին կարող է կիրառվել *ʔbā* կապը, օրինակ՝

بهترین گوشیهای بازار با 800 هزار تومان

behtarin gušihāye bāzār bā 800 hezār tumān.

Շուկայի ավագույն հեռախոսները՝ 800 հազար թուրքական:

Տեղի գործիականը ցույց է տալիս տեղը, որի վրայով, միջով, կամ գուգահեռ անցնում է ենթական¹⁹⁴: Օրինակ՝

Մեքենան սլանում էր մայրուղով:

Պարսկերենում նման դեպքերում կիրառվում է *ʔ az* կապը, որն առավել բնորոշ է բացառական հոլովի իմաստային առումներին.

او از کوچه گذشت.

u az kuče gozāšt.

Նա անցավ փողոցով:

¹⁹³ Առաքելյան Վ., նշվ. աշխ., էջ 156:

¹⁹⁴ Տե՛ս Առաքելյան Վ., նշվ. աշխ., էջ 162:

3.8.Ներգոյական հոլով

Ներգոյական հոլովը արտահայտում է երկու հիմնական՝ տեղային և ժամանակային իմաստային առումներ: Ներգոյականը մնացած հոլովների համեմատությամբ հայերենում ունի ամենից սահմանափակ կիրառությունը և հայերենի զարգացման համեմատաբար նոր շրջանի արդյունք է: Վ. Առաքելյանը ներգոյականի մասին նշում է. «Ներգոյականը արտահայտում է տարածական, ժամանակային այնպիսի հարաբերություն, որ հակադրվում է մակերեսին, չորս կողմին, տակին, վրային, վերևին և այլն, ու համընկնում է մեջ կապի արտահայտած հարաբերության հետ»¹⁹⁵:

Ի տարբերություն հայերենի մյուս հոլովների, ներգոյականն ունի քիչ թվով իմաստային առումներ, որոնցից հիմնական են տեղային և ժամանակային իմաստները: Ներգոյական հոլով չեն կարող ստանալ անձ, շնչավոր ցույց տվող գոյականները, բայանունները, այն բառերը, որոնցից կազմված հնարավոր ներգոյականը ձևով համընկնում է տվյալ արմատից կազմված անկատար դերբայի հետ:

Տեղի ներգոյականը ցույց է տալիս դադարի տեղը, որտեղ տվյալ առարկան գտնվում է, որտեղ որևէ բան է լինում: Տեղի ներգոյականով դրվում են հիմնականում տարածական նշանակության գոյականները՝ *երկրում, անտառում, դպրոցում*, կամ գոյականները, որոնք խոսքային իրավիճակում կարելի է մեկնաբանել որպես տեղ, օրինակ՝ *աչքում, գլխում* և այլն¹⁹⁶:

Պարսկերենում տեղային դադարի իմաստ արտահայտող հիմնական քերականական միջոցը *در* / *dar* կապն է: Այն հիմնականում արտահայտում է ընդհանրական տեղի իմաստ՝ առանց հստակեցնելու դրա այլ իմաստային մանրամասնությունները, օրինակ՝ *در تهران* / *dar tehrān* (*Թեհրանում*), *در دانشگاه* / *dar dānešgāh* (*համալսարանում*):

Պարսկերենում կա նաև մեկ այլ քերականական միջոց, որը արտահայտում է հատկապես ներսի տարածության, ինչ-որ բանի մեջ գտնվելու իմաստ՝ *تو(ی)* / *tu (-ye)* կապը:

¹⁹⁵ Տե՛ս Առաքելյան Վ., նշվ. աշխ., էջ 166:

¹⁹⁶ Տե՛ս Առաքելյան Վ., նշվ. աշխ., էջ 169:

توی قوطی چیست؟

tuye qoti chist?

Տու փու մ ի օ նչ կա:

Մահու թիանը նաև հետաքրքիր դիտարկում է անում, ըստ որի խոսակցական լեզվում պարսկերենը տարբերակում է մտցնում մշտական տեղակայման և ժամանակավոր տեղակայման միջև: Այսպես, առաջին դեպքում պարտադիր կերպով դրվում է **dar** կապը, օրինակ՝

كاخ "چهل ستون" در اصفهان است.

Kakh e čehel sotun dar esfān ast.

Չեհեղ Սոթոն ն պալատը Սպահանում է գտնվում:

Իսկ այն դեպքերում, երբ խոսքը տվյալ գոյականի՝ միայն սահմանափակ ժամանակահատվածում տվյալ տեղում գտնվելու մասին է, **dar** կապը կարող է չդրվել և գոյականն իր ուղիղ ձևով ցույց տա տեղի նշանակություն, օրինակ՝

خواهر من مدرسه است.

Khāhar e man madrese ast.

Իմ քույրը դպրոցում է:

Պետք է սակայն նշել, որ սաչի կարելի դիտարկել որպես հստակ քերականական կանոն, և նշված իրավիճակում **dar** կապի կիրառումը կարելի է համարել միանգամայն ճիշտ, ուստի ներկայացված դեպքը կարելի է դիտել ուղղակի որպես խոսակցական լեզվում նկատվող միտում:

Ժամանակի ներգոյականը ցույց է տալիս ժամանակամիջոցը, որի ընթացքում կատարվում, տեղի է ունենում գործողությունը¹⁹⁷: Ժամանակի ներգոյականով դրվում են հիմնականում ժամանակ ցույց տվող բառերը՝ *դպրոցում, տարում, ժամում* և այլն: Պարսկերենում նշված դեպքերում կիրառվում է **dar** կապը՝ *dar qarn e bistom* (քսաներորդ դպրոցում):

Ժամանակային բառերը թվականի հետ միասին կիրառվելիս ցույց են տալիս տևողություն: Այս կիրառությունը Վ. Առաքելյանը բնորոշում է որպես *չափ ու քանակի ներգոյական՝ երեք տարում, հինգ ամսում*, և այլն: Նախորդ կիրառման նմանությունամբ՝

¹⁹⁷ Տե՛ս Առաքելյան Վ., նշվ. աշխ., էջ 170:

պարսկերենում այս իմաստավորման արտահայտման համար կարող է կրկին դրվել *در* /dar/ կապը՝ *در سه سال* /dar se sāl (երեք տարում):

Ժամանակահատվածի, ընթացքի առավել ընդգծված իմաստավորում արտահայտելու համար դրվում է *طی* /tey/ բառը՝ *طی این مدت* /tey e in modat (այդ ժամանակահատվածում, այդ ընթացքում):

Ներգոյական հոլովի մեկ այլ սահմանափակ կիրառություն է *սահմանափակման ներգոյականը*, օրինակ՝ *իր գործում գիտակի ինել, որոշ հարցերում համաձայնել*¹⁹⁸: Պարսկերենում այս դեպքում ևս առկա են զուգահեռ կիրառություններ՝ վերստին *در* /dar/ կապով՝

او در کار خود تجربه دارد.

ու *dar kār e khod tajrobe dārad.*

Նաիր գործում փորձված է:

Ամփոփելով ժամանակակից հայերենի հոլովի քերականական կարգի և ժամանակակից պարսկերենի նույնիմաստ քերականական կառույցների միջև անցկացված զուգադրությունը, կարող ենք նշել հետևյալ եզրահանգումները. հայերենի հոլովներն իրենց արտահայտած իմաստների մեծամասնությամբ հիմնականում զուգորդվում են պարսկերենի համարժեք մի որևէ քերականական ձևի, մինչդեռ որոշ մասնակի իմաստավորումների դեպքում՝ տարամիտվում արտահայտության պլանում: Այսպես, հայերենի ուղղական հոլովը իր հիմնական կիրառություններով զուգորդվում է պարսկերենի՝ առանց քերականական ցուցչի, այսպես կոչված «մաքուր ձևի» գոյականի հետ: Մինչդեռ, կոչականի դերում հանդես գալիս պարսկերենում գոյականները որոշ դեպքերում կարող են լրացուցիչ քերականական մասնիկներ ստանալ:

Հայերենի սեռական հոլովը իր հիմնական իմաստային առումներով պարսկերենում համապատասխանում է իզաֆեթային կառույցի, որոշ մասնակի դեպքերում հնարավոր է, որ դրա համարժեքը լինի *از* /az/ կապով կազմված կապակցությունը:

Հայերենի տրական հոլովի արտահայտած քերականական իմաստները պարսկերենում հիմնականում ծածկվում են *به* /be/ կապով

¹⁹⁸ Տե՛ս Առաքելյան Վ., նշվ. աշխ., էջ 171:

կազմված կապակցություններով, թեև առանձին դեպքերում հնարավոր է, որ համարժեքները լինեն *dar* կապով կառույցը կամ իզաֆեթային կապակցությունը: Հայերենի հայցական հոլովի՝ պարսկերեն գուգորդումները դիտարկելիս հստակ տարբերակում ենք նկատում որոշյալ և անորոշ գոյականների միջև: Առաջինները ստանում են *Urā* հետդիր կապը, անորոշները կիարռվում են *qon* նշույթով: Հայերենի բացառական հոլովի իմաստային առումները հիմնականում համարժեք են *az* կապով կազմված կապակցություններին: Հայերենի գործիական հոլովի հիմնական քերականական իմաստները գուգորդվում են *bā* կապով կազմված կապակցություններով, որոշ դեպքերում դրա փոխարեն կարող է հանդես գալ լինել *be* կապը, ավելի հազվադեպ՝ խիստ մասնակի կիրառություններով՝ նաև *az* կապը: Հայերենի ներգոյական հոլովի առումները հիմնականում նույնական են *dar* կապով կազմված կապակցությունների հետ: Ընդգծված ներսի տարածության, ինչ-որ բանի մեջ գտնվելու իմաստ է արտահայտում (تو) *tu (-ye)* կապը:

ԳԼՈՒԽ 4. ԱՃԱԿԱՆԻ ՀԱՄԵՄԱՏՈՒ ԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ

Մեկ այլ անվանական քերականական կարգ է ածականի համեմատության աստիճանների կարգը: Իմաստային տեսանկյունից այն գրեթե նույն արժեքային հարաբերությունն է արտահայտում բոլոր լեզուներում: Ա. Չելենեցկին այս կարգի իմաստային կառուցվածքում առանձնացնում է երկու հիմական բևեռ՝ հավասարության, որն արատացովում է ածականի համեմատության դրական աստիճանի մեջ և անհավասարության, որն արտացովում են բաղդատական և գերադրական աստիճանների մեջ¹⁹⁹:

Ըստ Է. Ադայանի՝ ածականները ցույց են տալիս ոչ միայն որևէ առարկայի կամ միանման առարկաների խմբի հատկանիշ, այլ և նրանց հատկանիշը՝ ուրիշ առարկաների նույն հատկանիշի համեմատությամբ. այսպիսով, ստացվում են ածականների համեմատության աստիճանները՝ դրական (positivus), բաղդատական (comparativus) և գերադրական (superlativus)²⁰⁰:

Մ. Ասատրյանը, անդրադառնալով ածականի համեմատության աստիճանների քանակին՝ նշում է. «Դրական աստիճանը սկզբունքորեն տարբերվում է բաղդատական և գերադրական աստիճաններից նրանով, որ դրականի դեպքում արտահայտվում է բացարձակ հատկանիշ, հատկանիշ առանց համեմատության, օրինակ՝ *մեծ քաղաք*, իսկ բաղդատականի և գերադրականի դեպքում, որպես կանոն, արտահայտվում է հարաբերական հատկանիշ, որը համեմատվում է այլ առարկաների նույն հատկանիշի հետ... որոշ քերականական աշխատություններում դրականը համեմատության աստիճան չի համարվում, և ընդունվում է համեմատության երկու աստիճան՝ բաղդատական և գերադրական: Սակայն, քանի որ դրականը ածականի ուղիղ, անփոփոխ, ելակետային ձևն է, և բաղդատականն ու գերադրականը արտահայտում են հարաբերական հատկանիշ սրա համեմատությամբ ու հակադրությամբ, ուստի և դրականը

¹⁹⁹ Տե՛ս Зеленецкий А. Л., Сравнительная типология основных европейских языков, стр.135-136:

²⁰⁰ Տե՛ս Ադայան Է. Բ., Լեզվաբանության հիմունքներ, էջ 495-496:

համեմատության աստիճանների մեջ կարող է մտնել որպես հակադրության միեզր, որպես գրոեզր»²⁰¹:

Է. Աղայանը նաև ճիշտ չի համարում այն լեզվաբանների տեսակետը, ըստ որի ածականների համեմատության աստիճանները քերականական կարգ չեն: Նա գտնում է՝ քանի որ «ածականի համեմատության աստիճանները արտահայտում են վերաբերական քերականական իմաստ և քանի որ ունեն իրենց քերականական ձևավորումը լեզուների մեծագույն մասում, ապա պետք է համարել քերականական կարգ»²⁰²:

Արտահայտության պլանում ածականների համեմատության աստիճանների տարբերությունները տարբեր լեզուներում հիմնականում հանգում են համադրական և վերլուծական քերականական ձևերին: Տարբեր լեզուների համեմատության աստիճանների քերականական ձևերը զուգադրելիս անհրաժեշտ է հաշվի առնել, արդյոք դրանցով արտահայտած իմաստներն ունե՞ն արժեքային տարբերություններ թե ոչ, առկա՞ են զուգաձևություններ, թե ոչ²⁰³:

4.1. Բաղդատական աստիճան

Եթե ածականի դրական աստիճանը արտահայտում է առարկայի հատկանիշը առանց որևէ համեմատության և ածականի ելակետային ձևն է, ապա բաղդատական աստիճանը արտահայտում է առարկայի համեմատով հատկանիշի հավասարական, առավել կամ նվազ լինելը այլ առարկաների միևնույն հատկանիշի նկատմամբ²⁰⁴:

Լեզուներում ածականի բաղդատական աստիճանը կարող է կազմվել տարբեր ձևերով: Որոշ լեզուներում այն կարող է արտահայտվել նախամասնիկով կամ վերջնամասնիկով, ինչպես հնդեվրոպական, թյուրքական, կովկասյան, ուգրա-ֆիննական լեզուներից շատերում: Այլ լեզուներ, ինչպես արաբերենը՝ բաղդատական աստիճանն արտահայտում են ներքին թեքմամբ:

²⁰¹ Ասատրյան, Մ. Ե., Ժամանակակից հայոց լեզու. ձևաբանություն, Երևան, 2004, էջ 134:

²⁰² Նույն տեղում:

²⁰³ Տե՛ս Chandler R., Hefler A., A Handbook of Comparative Grammar, New York, 1949, pp. 26-27.

²⁰⁴ Տե՛ս Պետրոսյան, Զ. Զ., Հայերենագիտական բառարան, 1987, էջ 328-329:

Լեզուների մեկ այլ խումբ, որոնցից է նաև հայերենը, բաղդատական աստիճանը կազմում են վերլուծական ձևով²⁰⁵:

Մ. Ասատրյան նշում է, որ հայերենը ածականի համեմատության աստիճանների արտահայտման ձևաբանական միջոցներից աղբատիկ է, և արտահայտման «մաքուր» քերականական միջոցներ չկան²⁰⁶:

Չայերենում ածականի բաղդատական աստիճանը կազմվում է դրական աստիճանի վրա «ավելի» բառն ավելացնելու միջոցով: Այն շատ հաճախ կարող է դրվել գրեթե բոլոր որակական ածականների հետ: Սակայն «ավելի» բառը լիարժեք քերականական մասնիկ չի կարելի համարվել, քանի որ այն զգալի չափով պահպանում է իր բառային ինքնուրույնությունը և առանձին բառիմաստը:

Ժամանակակից հայերենում ածականի համեմատական աստիճանը կարող է նաև արտահայտվել դրական աստիճանի և համեմատվող առարկայի բացառական հոլովի կապակցությամբ, օրինակ՝ *Մասիսը բարձր է Արագածից*:

Բաղդատական աստիճանի դեպքում համեմատվող առարկան դրվում է բացառական հոլովով կամ *քան (քան թե) գումարած ուղղական հոլով* կապակցությամբ՝ *Մոսկվան ավելի մեծ է Երևանից* կամ *Մոսկվան ավելի մեծ է քան Երևանը*:

Է. Աղայանը գտնում է, որ ածականի բաղդատական աստիճանը կարող է ցույց տալ ոչ միայն հատկանիշի ավելի լինելը, այլև հավասար կամ նվազ լինելը, ըստ այդմ այն կարող է երեք ձևով ներկայանալ՝ *առավելական, հավասարական, նվազական*: Առաջինը վերը նշված օրինակն է, հավասարականը, օրինակ՝ *սա նույնքան լավն է, որքան նա*, նվազականը՝ *սանրանից պակաս լավն է*²⁰⁷:

Ժամանակակից պարսկերենը պատկանում է այն լեզուների թվին, որոնցում ածականի համեմատության աստիճանները կցական կազմությոն ունեն, որը կոնկրետ պարսկերենի դեպքում արտահայտվում է *تر / tar* վերջնամասնիկով, օրինակ՝

قاشنگ / qašang – قاشنگتر / qašangtar (գեղեցիկ-ավելի գեղեցիկ)

²⁰⁵ Է. Աղայանը նշում է, որ կան նաև լեզուներ, որոնք բաղդատականի համար առանձին ձև չունեն և որևէ առարկայի առավելությունը մեկ այլ առարկայի նկատմամբ ցույց տալու համար դիմում են շարահյուսական միջոցների: Աղայան Է. Բ., 1987, էջ 496:

²⁰⁶ Ասատրյան, Մ. Ե., 2004, էջ 135:

²⁰⁷ Տե՛ս Աղայան Է. Բ., Լեզվաբանության հիմունքներ, էջ 496:

بلند / *boland* - بلندتر / *bolandtar* (բարձր- ավելի բարձր)

کوچک / *kuček* - کوچکتر / *kučektar* (փոքր- ավելի փոքր)

ارزان / *arzān* – ارزاتر / *arzāntar* (էժան- ավելի էժան)

Ի դեպ, հենց նշված *تر* / *tar* վերջամասնիկն է պահպանվել հայերեն «վաղթար» բառի մեջ, որ իրանական փոխառությունն է՝ դեռևս պարթևերեն լեզվից, և փաստորեն տվյալ դեպքում փոխառվել է հենց ածականի բաղդատական աստիճանը:

Բաղդատական աստիճանով դրված ածականը ենթարկվում է նույն շարահյուսական կանոններին, ինչ որ դրական աստիճանով դրվածը²⁰⁸: Այն որպես որոշիչ կիրառվելիս դրվում է գոյականին հետադաս և նրա հետկապակցվում է *իզաֆեթայ ին կապրվ*²⁰⁹: Օրինակ՝

برج بلندتر / *borje bolandtar* (ավելի բարձր աշտարակ)

ماشین ارزاتر / *māšine arzāntar* (ավելի էժան մեքենա)

Պարսկերենում բաղդատական աստիճանի դեպքում համեմատվող առարկան դրվում է *از* / *az* նախդիրի հետ, որն իր քերականական իմաստով համարժեք է հայերենի բացառական հոլովին, կամ *تا* / *tā* (քան) բառի հետ, օրինակ՝

نان از شیر گرانتر است. / *Nān az šir gerāntar ast.*

Չացը կաթից թանկ է:

نان گرانتر است تا شیر. / *Nān gerāntar ast tā šir.*

Չացն ավելի թանկ է քան կաթը:

Այսպիսով, կարող ենք ասել, որ շարահյուսական տեսանկյունից ժամանակակից հայերենի և պարսկերենի բաղդատական ածականներն ընդհանրություններ ունեն:

Պարսկերենում, ինչպես նաև հայերենում բաղդատական աստիճանով դրված ածականները կարող են ստանալ այլ՝ իմաստը սաստկացնող ածականներ, օրինակ՝

میوه خیلی گرانتر است. / *Mive kheyli gerāntar ast.*

Միրգը շատավելի թանկ է:

²⁰⁸Տե՛ս Mace J., *Persian grammar: for reference and revision*, Abingdon/ New York, 2003, pp. 51-52.

²⁰⁹*իզաֆեթայ ին կապրի* մասին մանրամասն՝ տես սույն առեկախություն 3.3 *Սեռական հոլով* ենթագլխում:

Ժամանակակից պարսկերենում որոշ ածականների բաղդատական ստիճանը կազմվում է այլ արմատից, օրինակ՝ خوب / *khub* (լ ավ)- بهتر / *behtar* (ավելի և ավել):

4.2. Գերադրական ստիճան

Ածականի գերադրական ստիճանը արտահայտում է տվյալ գոյականի համեմատվող հատկանիշի գերազանցությունը այլ առարկաների նկատմամբ կամ առանց համեմատության:

Է. Աղայանը նշում է, որ գերադրական ստիճանը կարող է լինել երկու տեսակ՝ *բացարձակ* և *հարաբերական*: Բացարձակ գերադրականը ցույց է տալիս տվյալ հատկանիշի գերազանցությունը, առանց համեմատության մեջ դրվելու այլ առարկաների հետ²¹⁰: Բացարձակ գերադրականը հայերենում կարող է արտահայտվել երկու ձևով. առաջինը՝ բառային, որը ներառում է գերազանցություն, սաստկություն արտահայտող մի շարք բառերի, բառակապակցությունների և ածականի դրական ստիճանի գուգորդումներ, օրինակ՝ *շատ, չափազանց, արտակարգ, չափից ավելի, չափից դուրս, ծայրահեղ, խիստ, սաստիկ* և այլն: Երկրորդ ձևը, որով կազմվում է բացարձակ գերադրականը, *-գույն* մասնիկով կազմություններն են, օրինակ՝ *լավագույն, վատագույն, մեծագույն* և այլն: Գերադրականի այս կազմությունը, սակայն, այժմ գործուն և տարածված չէ և առկա է եղել դեռևս գրաբարում՝ ծառայելով որպես բաղդատական ստիճանի ցուցիչ²¹¹:

Յարաբերական գերադրականը ցույց է տալիս առարկայի գերազանցությունը նրա հետ համեմատվող առարկաների նկատմամբ: Այն կազմվում է *ամենա+դրական ստիճան* կապակցությամբ՝ *ամենալավ, ամենաերկար, ամենամեծ* և այլն: Գերադրականի այս տարատեսակը հայերենում կենսունակ է՝ հատկապես *-գույն* մասնիկով կազմությունների համեմատությամբ:

Ա. Սարգսյանը նշում է, որ *-գույն* մասնիկով հայերենում կազմվում են սահմանափակ թվով ածականներ և դրանք բնորոշ չեն

²¹⁰ Տե՛ս Աղայան Է. Բ., Լեզվաբանության հիմունքներ, Էջ 496:

²¹¹ Նույն տեղում:

ժողովրդախոսակցական լեզվին: Յեղիակն այսպես է բնութագրում տվյալ տեսակի գերադրականի կիրառությունները. «Սահմանափակվել է դրանց կիրառության ոլորտը, ընդ որում՝ սահմանափակվել է երկու առումով. դրանք բնորոշ են դարձել բարձր ոճին, ինչպես նաև սահմանափակվել է *-գոլյն* մասնիկով բաղադրվող գերադրականների գուգորդական կապակցելիությունը, այսինքն՝ ոչ միայն փոքրաթիվ ածականներ են ստանում *-գոլյն* մասնիկը, ոչ միայն այդ գերադրականները բնորոշ են առավել ասես «բարձր» ոճին, այլև այդպիսի գերադրականները կապակցվում են սահմանափակ թվով գոյականների և իմաստային որոշակի տարբերություն ունեն *ամենա-* բաղադրիչով կազմված գերադրականների համեմատությամբ»²¹²:

ժամանակակից պարսկերենում ածականի գերադրականը բաղդատական աստիճանի նմանությամբ ունի կցական կազմություն՝ դրական աստիճանով դրված ածականին միանում է *ترین / tarin* վերջնամասնիկը, օրինակ՝

بزرگ / bozorg (մեծ)- بزرگتر / bozorgtar (ավելի մեծ)- بزرگترین / bozorgtarin (ամենամեծ)

آسان / āsān (հեշտ)- آسانتر / āsāntar (ավելի հեշտ)- آسانترین / āsāntarin (ամենահեշտ)
 کوچک / kuček (փոքր)- کوچکتر / kučektar (ավելի փոքր)- کوچکترین / kučektarin (ամենափոքր)

ժամանակակից պարսկերենի ածականի գերադրական աստիճանը հետաքրքիր գծեր ունի շարահյուսական մակարդակում: Այսպես, եթե դրական և բաղդատական աստիճաններում ածականը դրվում է որոշյալից հետո, ապա գերադրական ածականի դեպքում հակառակ շարահյուսությունն է՝ որոշիչը նախորդում է որոշյալին, օրինակ՝ آسانترین کار / āsāntarin kār (ամենահեշտ գործ):

Ինչպես կարող ենք նկատել բերված օրինակներից՝ կապակցության անդամների միջև դրված է *իզաֆեթ*: Իրանցի լեզվաբան Փ. Խանլարին նշում է, որ գերադրական ածական պարունակող կապակցություններում այդ ածականից հետո *իզաֆեթը* չի դրվում, երբ որոշյալը եզակի թվով դրված գոյական է (ինչպես՝

²¹²Սարգսյան Ա., Ածականի՝ *-գոլյն* մասնիկով կազմվող գերադրականի իմաստային առանձնահատկությունները, «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», 2015 № 3 (18), էջ 45-51:

ներկայացված օրինակում): Իսկ եթե գերադարական ածականի հետ դրված որոշյալը հոգնակի թվով է դրված, ապա պետք է դնել *իզաֆեթը*²¹³: Օրինակ՝

بزرگترین شاعران ایران فردوسی است. / Bozorgtarin e shāerān e Irān Ferdousi ast.

Իրանի բանաստեղծներից մեծագույնը Ֆիրդուսին է:

Ըստ Յու. Ռուբինչիկի՝ *իզաֆեթ* դրվում է նաև այն դեպքում, երբ գերադարական ածականի հետ դրված է հավաքական գոյական: Նաև նշում է, որ միայն որոշյալի հոգնակի ու թյուր ունը չի որոշում *իզաֆեթի* առկայությունը, այլ նաև նախադասության իմաստը՝ թե արդյոք կա՞ նպատակ որոշյալն առանձնացնել իր նման այլ առարկաների շարքում: Եթե այդ իմաստավորումը չկա, ապա ըստ Ռուբինչիկի, հոգնակի թվով գոյական-որոշյալի և գերադարական ածականի կապակցության մեջ *իզաֆեթ* կարող է նաև չդրվել²¹⁴:

Գերադարական աստիճանի իմաստավորումը հնարավոր է արտահայտել նաև այլ կերպ՝ բաղդատական աստիճանով դրված ածականի և *همه / hame (բոլոր)* բառի գուցորդմամբ²¹⁵, օրինակ՝

این خانه از همه بزرگتر است. / In khāne az hame bozogtar ast.

Այս տունը բոլորից մեծ է:

Ինչպես կարող ենք նկատել բերված օրինակից, եթե հայերենում գերադարական աստիճանի բառային տարբերակի կազմության համար օգտագործվում են գերազանցություն, սաստկություն արտահայտող մի շարք բառերի/բառակապակցությունների և ածականի դրական աստիճանի գուցորդումներ, ապա պարսկերենում կապակցության մեջ դրվող ածականը բաղդատական աստիճանով է գործածվում:

Այսպիսով, կարող ենք նկատել, որ իմաստային տեսակետից ածականի համեմատության աստիճանները երկու լեզուներում գրեթե նույն իմաստային հարաբերություններն են արտահայտում, իսկ տարբերությունները վերաբերում են գերազանցապես արտահայտության պլանին, որտեղ, ինչպես տեսանք, հայերենին հատուկ է վերլուծական կառույցը, իսկ պարսկերենին՝ կցականը:

²¹³ Khānlari, P. N., Dastur-e zabān-e fārsi, Enteshārāt-e Tehran, 1377, pp. 189-190.

²¹⁴ St' u Rubinchik Ju. A., Grammatika sovremennoġo persidskogo literaturnogo jazyka, str. 133-134.

²¹⁵ St' u Elwell-Sutton L. P., Elementary Persian Grammar, Cambridge, 1963, pp. 46-47:

ԵԶՐԱԿԱՑՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով նախորդ գլուխներում կատարված վերլուծությունները՝ կարող ենք հանգել հետևյալ հիմնական եզրակացություններին:

1. Թվի քերականական կարգի ընդհանուր տեսական բնութագրի քննությամբ բացահայտել ենք դրա բովանդակության և արտահայտության պլանների բաղադրիչները՝ բուն թվային՝ քանակական իմաստները, այդ իմաստների տիրույթից դուրս գտնվող այլ քերականական իմաստավորումները՝ անեզականությունը, անհոգնականությունը, հավաքականությունը և դրանց արտահայտման միջոցները: Չուգադրվող երկու լեզուներում էլ առկա է երկեզր՝ հոգնակի-եզակի թվային հակադրություն: Երկակի թիվը հայերենում հանդիպում է մնացուկային ձևով՝ որոշ բարբառներում, իսկ պարսկերենում առկա է միայն որպես արաբերենից մուտք գործած, սահմանափակ կիրառությամբ փոխառյալ քերականական երևույթ՝ միաժամանակ չդառնալով պարսկերենին հատուկ թվակարգային եզր:

2. Ընդհանրական թվային իմաստի արտահայտման հարցում ժամանակակից հայերենը և ժամանակակից պարսկերենը հիմնականում նույն սկզբունքն են կիրառում: Եզակիաձև գոյականը կարող է ցույց տալ ինչպես մեկ առարկա, այնպես էլ օգտագործվել որպես տվյալ առարկայի դասի ընդհանրացված անվանում: Մի շարք դեպքերում պարսկերենում միահյուսված են թվի և առկայացման քերականական կարգերը: Մասնավորապես, անորոշ հոդը, արտահայտելով գոյականի՝ խոսքում առաջին անգամ հիշատակվելու կամ անժանոթ լինելու հանգամանքը, միաժամանակ դրան օժտում է եզակիության իմաստավորմամբ:

3. Անհոգնականների և անեզականների քննությունը ցույց է տվել, որ նշված խմբերին պատկանող գոյականները երկու լեզուներում կիրառվելիս հիմնականում արտահայտում են նման քերականական իմաստներ, չնայած որոշ դեպքերում հնարավոր են տարամիտումներ:

4. Հավաքական գոյականների քերականական հատկություններին անդրադառնալով՝ կարող ենք փաստել, որ ժամանակակից հայերենը և ժամանակակից պարսկերենը հիմնականում նույն օրինաչափություններն են ցուցաբերում նման գոյականների և դրանց ստորոգյալի թվային համաձայնության ժամանակ:

5. Մոտավոր թվի քերականական իմաստի արտահայտման համար երկու լեզուներն էլ կարող են կիրառել թվային շարքում միմյանց հաջորդող թվականների կապակցությունները, ինչպես՝ *մեկ-երկու օր, հինգ-վեց ուսանող* և այլն:

6. Ձևաբանական տեսանկյունից երկու լեզուներն էլ կիրառում են կցական հոգնակիակազմությունն հոգնակերտ վերջավորությունների միջոցով: Ժամանակակից պարսկերենը, ի տարբերություն հայերենի, հոգնակերտ վերջավորությունների մակարդակում կարող է արտահայտել անձի և իրի, շնչավորի և անշունչի քերականական իմաստներ: Դրանից բացի՝ պարսկերենում կիրառելի է նաև ներքին թեքմամբ հոգնակիի կազմությունը, որն արաբերենի լեզվական ազդեցության հետևանք է: Այն լայն կիրառություն է ստացել պարսկերենում՝ դառնալով այդ լեզվի թվակարգի արտահայտության պլանի լիարժեք և անքակտելի բաղադրիչը:

7. Թվային համաձայնությանն անդրադառնալով՝ կարող ենք նշել, որ ժամանակակից հայերենում ենթական և ստորոգյալը պարտադիր համաձայնում են թվով, իսկ պարսկերենի դեպքում կանոնը պարտադիր է միայն անձ ցույց տվող և շնչավոր գոյականների՝ ենթակայի դերում հանդես գալու դեպքում: Իսկ երբ այդ գոյականները արտահայտում են իր, ապա համաձայնությունը կամընտրական է:

8. Ժամանակակից հայերենում և ժամանակակից պարսկերենում որոշակիորեն տարբերվում է այսպես կոչված «հարգանքի հոգնակին» (honorific). Եթե հայերենում այն կիրառելի է միայն երկրորդ դեմքի դերանվան պարագայում, ապա պարսկերենում այդ առմամբ կարող է դրվել նաև երրորդ դեմքի դերանունը կամ գոյականը:

9. Երկու լեզուներում որոշյալ ության ենթակարգն արտահայտվում է հիմնականում հոդով, սակայն եթե հայերենում դա որոշիչ հոդն է, ապա պարսկերենում հոդն անորոշ ությունն է ցույց տալիս: Յետևաբար, հայերենում *գրո հոդով ձևը* արտահայտում է անորոշ ություն, իսկ պարսկերենում՝ որոշյալ ություն: Այնուհանդերձ, *գրո հոդով ձևը* լիարժեք որոշյալ ության քերականական իմաստ չի պարունակում, և այդ իմաստավորումն առավել արտահայտիչ է դառնում լրացուցիչ քերականական ցուցիչների կիրառման դեպքում: Մյուս կողմից՝ հայերենում առավել ընդգծված անորոշ ության իմաստ արտահայտում են *մի* անորոշ հոդ պարունակող կապակցությունները:

10. Ցուցաստացական ենթակարգում առկա է նկատելի տարբերությունները դեմք եզակիի դեպքում. հայերենում այդ դիմային տարբերակի հոդը նույն որոշիչ հոդն է՝ *ը/ն*, իսկ պարսկերենում գործածվում է տարբեր հոդ՝ *یش* - *-yaš (-yeš)*: Դրանից բացի՝ ստացական հոդերը ժամանակակից պարսկերենում կարող են նաև փոխարինել նախադասության առանձին անդամի՝ հանդես գալով որպես խնդիր:

11. Յայերենի հոլովներն իրենց արտահայտած իմաստների մեծ մասով հիմնականում զուգորդվում են պարսկերենի որևէ համարժեք քերականական ձևի հետ, մինչդեռ որոշ մասնակի իմաստավորումների դեպքում տարամիտվում են արտահայտության պլանում: Այսպես, հայերենի ուղղական հոլովը իր հիմնական կիրառություններով զուգորդվում են պարսկերենի՝ առանց քերականական ցուցիչի՝ այսպես կոչված «մաքուր ձևի» գոյականի հետ: Մինչդեռ կոչականի դերում հանդես գալիս՝ պարսկերենում գոյականները որոշ դեպքերում կարող են լրացուցիչ քերականական մասնիկներ ստանալ:

12. Յայերենի սեռական հոլովը իր հիմնական իմաստային առումներով պարսկերենում համապատասխանում է իզաֆեթային կառույցին, որոշ մասնակի դեպքերում հնարավոր է, որ դրա համարժեքը լինի *az* կապով կազմված կապակցությունը:

13. Յայերենի տրական հոլովի արտահայտած քերականական իմաստները պարսկերենում հիմնականում զուգահեռ են *be* կապով

կազմված կապակցություններին, թեև առանձին դեպքերում հնարավոր համարժեք կարող են լինել *dar* կապով կառույցը կամ իզաֆեթային կապակցությունը:

14. Հայերենի հայցական հոլովի՝ պարսկերեն գուգահեռները դիտարկելիս հստակ տարբերակում ենք նկատում որոշյալ և անորոշ գոյականների միջև: Առաջինները ստանում են *ʾrā* հետադիր կապը, անորոշները կիրառվում են գրոձևով:

15. Հայերենի բացառական հոլովի իմաստային առումները հիմնականում համարժեք են *ʾ/ az* կապով կազմված կապակցություններին: Հայերենի գործիական հոլովի հիմնական քերականական իմաստները գուգահեռ են *ʾ/bā* կապով կազմված կապակցություններով, որոշ դեպքերում դրա փոխարեն կարող է հանդես գալ *ʾ/be* կապը, ավելի հազվադեպ՝ խիստ մասնակի կիևառություններին՝ նաև *ʾ/ az* կապը: Հայերենի ներգոյական հոլովի առումները հիմնականում նույնական են *dar* կապով կազմված կապակցությունների հետ: Ընդգծված ներսի տարածություն, ինչ-որ բանի մեջ գտնվելու իմաստ է արտահայտում *(تو)tu (-ye)* կապը:

16. Ածականի համեմատության աստիճանները իմաստային տեսակետից երկու լեզուներում գրեթե նույն արժեքային հարաբերություններն են արտահայտում, իսկ տարբերությունները վերաբերում են գերազանցապես արտահայտության պլանին, որտեղ հայերենին հատուկ է վերլուծական կառույցը, իսկ պարսկերենին՝ կցականը:

Ընդհանրացնելով վերը նշվածը՝ կարելի է եզրակացնել, որ ժամանակակից հայերենը և ժամանակակից պարսկերենը անվանական քերականական կարգերի տիպաբանության հարցում ունեն բազմաթիվ նմանություններ, որոնք կարելի է բացատրել ինչպես երկու լեզուների ընդհանուր ծագումնաբանությամբ, որն ինքնին ենթադրում է քերականական համակարգի բազմաթիվ ընդհանրություններ, այնպես էլ երկու լեզուների՝ դարերի ընթացքում միմյանց հետ սերտ շփման հանգամանքով: Միևնույն ժամանակ, գոյություն ունեն նաև քերականական իրողություններ, որոնք հատուկ են միայն լեզուներից մեկին: Այդպիսիք

հիմնականում լեզուներից մեկի վրա արտաքին ազդեցության հետևանք է, որից մյուս լեզուն հիմնականում զերծ է մնացել, ինչպես, օրինակ, պարսկերենում հոգնակիակազմությունն է ներքին թեքման միջոցով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒ ԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբեղյան Մ., Յայնոց լեզվի տեսությունը, Երևան, «Միտք» հրատ., 1965, 699 էջ:
2. Աղայան Է. Բ., Ժամանակակից հայերենի հոլովները, Պատմաբանասիրական հանդես, N. 4, Երևան, 1966, էջ 117-140:
3. Աղայան Է. Բ., Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, ՅՍՍՐ ԳԱ ՅՐ. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ, Երևան, 1967, 402 էջ:
4. Աղայան Է. Բ., Լեզվաբանության հիմունքներ, ԵՊՅ հրատ., Երևան, 1987, 734 էջ:
5. Աճառյան Յ., Լիակատար քերականությունը հայնոց լեզվի, համեմատությամբ 562 լեզուների, հ. III, ՅՍՍՐ ԳԱ հրատ., Երևան, 1957, 1030 էջ:
6. Առաքելյան Վ. Դ., Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, ՅՍՍՐ ԳԱ հրատ., Երևան, 1957, 299 էջ:
7. Առաքելյան Վ. Գ., Յայերենի և պարսկերենի դարձվածքաբանական և բառակազմական ընդհանրությունները, թեկն. ատենախոսություն, Երևան, 2011, 204 էջ:
8. Ասատրյան, Մ. Ե., Ժամանակակից հայնոց լեզվի ձևաբանության հարցեր, հ. Ա, ԵՊՅ հրատ., Երևան, 1970, 392 էջ:
9. Նալբանդյան, Գ.Մ., Պարսից լեզվի քերականությունը, ԵՊՅ հրատ., Երևան, 1980, 450 էջ:
10. Պետրոսյան Յ. Զ., Գոյականի թվի կարգը հայերենում, ԵՊՅ հրատ., Երևան, 1972, 453 էջ:
11. Պետրոսյան Յ. Զ., Գոյականի առումները հայերենում, ՅՍՍՐ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1960, 169 էջ:
12. Պետրոսյան Յ. Զ., Յայերենագիտական բառարան, «Յայաստան» հրատ., Երևան, 1987, 687 էջ:
13. Զահուկյան Գ. Բ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, ՅՍՍՐ ԳԱ հրատ., Երևան, 1974, 586 էջ:
14. Սևակ Գ., Ժամանակակից հայնոց լեզվի դասընթաց, ԵՊՅ հրատ., Երևան, 1955, 359 էջ:

15. Սարգսյան Ա., Ածականի՝ -գույն մասնիկով կազմվող գերադրականի իմաստային առանձնահատկությունները, «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», 2015 № 3 (18), էջ 45-51:
16. افشار، کتابشناسی ده ساله کتابهای ایران، تهران، 1333-1342, Tehrān, 1346 (1967), 753 էջ
17. امیر قلی امینی، فرهنگ عوام، انتشارات مازیار، تهران. / Amini A., Farhange avām, Enteshārāte Māziyār, Tehrān, 1389 (2010), 794 էջ
18. حسن احمدی گوی، "دستور زبان فارسی"، ویرایش چهارم، انتشارات فاطمی، تهران. / Anvari H., Givi. H. A., "Dastur-e zabān-e fārsi: virāyeš-e čahārom", Enteshārāt-e Fātemi, Tehrān, 1391 (2012), 404 էջ
19. محمدرضا، باطنی، توصیف ساختمان دستوری زبان فارسی، انتشارات امیر کبیر، تهران. / Bāteni M., Dastur-e zabān-e fārsi, Enteshārāt-e Amir Kabir, Tehrān, 1392 (2013), 195 էջ
20. بهار محمد تقی، سبک شناسی یا تاریخ تطور نثر فارسی، انتشارات امیر کبیر، تهران. / Bahār M.-T., Sabkšenasi ya tarix-etatavor-e nasr-e fārsi, Tehran, 1370 (1991), 497 էջ
21. خاںلری، پرویز، دستور زبان فارسی، انتشارات توس، تهران. / Khānlari, P. N., Dastur-e zabān-e fārsi, Enteshārāt-e Tus, Tehrān, 1377 (1998), 368 էջ
22. پرویز نائل خاںلری، تاریخ زبان فارسی، ج. چهارم، س. 12، نشر نو، تهران. / Khānlari P. N., Tārikhe zabāne fārsi, jelde čahārom, našre nou, Tehrān, 1365, 505 էջ
23. خیامپور، عبدالرسول، دستور زبان فارسی، انتشارات ستوده، تبریز. / Khayāmpur, A., Dastur-e zabān-e fārsi, Enteshārāt-e Sotude, Tabriz, 1392 (2013), 191 էջ
24. محمد معین، فرهنگ فارسی معین (یک جلد)، فرهنگنما: کتاب آراد، تهران. / Moein M., Farhange fārsiye Moein (yek jeld), Farhangnemā/ Ketābe ārad, Tehrān, 1386 (2007), 1280 էջ
25. اسماعیل سعادت، زبان فارسی: ممیز ذیروح از غیرذیروح، مجله نشر دانش، سال چهاردهم، شماره های پنجم و ششم. / Saadāt E., Momayeze ziruh az gheyreziruh, Majaleye našre dāneš, sāl čahārdahom, šomārehāye panjom va šešom, mordād va ābān, 1393, pp. 238-246.
26. شریعت، محمد جواد، "دستور زبان فارسی"، (ویرایش 3). - تهران: اساطیر. / Šariat, M. J., "Dastur-e zabān-e fārsi" Enteshārāt-e Asātir, Tehran, 1364 (1985), 459 էջ
27. علی اشرف صادقی، اکرم حاجی سیدآقایی، برخی نشانه های نادر جمع در زبان فارسی، ویژه نامه فرهنگستان. / Sādeqi A., Seyedāqāyi A., Barkhi nešānehāye nādare jam' dar zabāne fārsi, Vizhenāmeje farhangestān, sale 1389, šomāre 6, pp. 54-76.
28. علی نژاد، بتول، تقی طیب، سید محمد، نگاهی به دستگاه شمار اسم در فارسی معاصر، مجله علوم اجتماعی و انسانی. / Alinezhad A., Taghitayeb S. M., "Negāhi be dastgāh-e shomār-e esm dar fārsi-e moāser" Majale-ye olum-e ejtemāyi va ensāni dānshgāh-e Shirāz., No. 48, Shirāz, 1385, pp. 158-170.

29. Аракин В. Д., Сравнительная типология английского и русского языков, изд. Физматлит, Москва, 2005, 232 стр.
30. Бертельс Е. Э., Грамматика персидского языка, изд. Института живых восточных языков им. А. С. Енукидзе, Ленинград, 1926, 129 стр..
31. Виноградов В. В., Русский язык. , Москва, изд. «Высшая школа» 1972, 616 стр..
32. Гак В. Г., О контрастивной лингвистике// «Новое в зарубежной лингвистике», XXV, Москва, 1989, стр. 5-17.
33. Дежё Л., Некоторые замечания о роли приложения типологии к контрастивной лингвистике, // «Новое в зарубежной лингвистике», вып. XXV, Москва, 1989, стр. 179-187.
34. Зеленецкий А. Л., Сравнительная типология основных европейских языков, изд. «Академия», Москва, 2004, 249 стр..
35. Иванов В. Б., Гладкова Е. Л., Учебник персидского языка, изд. «Филоматис», Москва, 2004, 320 стр.
36. Кацнельсон С. Д., Типология языка и речевое мышление., изд. «Наука», Ленинград, 1972, 215 стр.
37. Керквуд Г. В., Перевод как основа контрастивного лингвистического анализа, // «Новое в зарубежной лингвистике», вып. XXV, Москва, 1989, стр. 341-350.
38. Кодухов В. И., Общее языкознание, изд. «Высшая школа», Москва, 1974, 304 стр.
39. Красухин К. Г., Введение в индоевропейское языкознание, изд. «Академия», Москва, 2004, 317 стр.
40. Милевский Т., Предпосылки типологического языкознания// «Исследования по структурной типологии», изд. Академии Наук СССР, Москва, 1963.
41. Никкель Г., Контрастивная лингвистика и обучение иностранным языкам, // «Новое в зарубежной лингвистике», вып. XXV, Москва, 1989, стр. 350-366.
42. Овчинникова И. К., Мамед-заде А. К., Учебник персидского языка, Издательство Московского Университета, Москва, 1965, 447 стр.
43. Пейсиков Л.С., Лексикология современного персидского языка, изд. Московского университета, Москва, 1975. 207 стр.
44. Рубинчик Ю. А., Грамматика современного персидского литературного языка, изд. «Восточная литература», Москва, 2001, 601 стр.
45. Рубинчик Ю. А., Современный персидский язык, изд. «Восточная литература», Москва, 1960.

46. Скаличка В., Типология и сопоставительная лингвистика // в «Новое в зарубежной лингвистике», вып. XXV, М., 1989, стр. 27-32.
47. Смирнова И. А., Категория числа в языках с немаркированным именем (на материале иранских языков), Вопросы языкознания, н. 2, 1981, стр. 77-88.
48. Хельбиг Г., Языкознание-сопоставление-преподавание иностранных языков, // «Новое в зарубежной лингвистике», вып. XXV, М., 1989, стр. 307-327.
49. Чейф У. Л., Значение и структура языка, изд. «Прогресс», Москва, 1975, 432 стр.
50. Штернеманн Р. (рук.) и колл., Введение в контрастивную лингвистику, // «Новое в зарубежной лингвистике», вып. XXV, М., 1989, стр. 144-179.
51. Якобсон Р., Избранные работы, изд. «Прогресс», Москва, 1985, 456 стр.
52. Ярцева В. Н., Большой энциклопедический словарь: языкознание, изд. «Большая Российская Энциклопедия», Москва, 1998, 682 стр.
53. Ярцева В. Н., Методы сопоставительного изучения языков, изд. «Наука», Москва, 1988, 97 стр.
54. Chandler R., Hefler A., A Handbook of Comparative Grammar, American Book Company, New York, 1949. 129 p.
55. Comrie B., Language Universals and Linguistic Typology, Second Edition, The University of Chicago Press, Chicago, 1989, 264 p.
56. Corbett G. G., Features, Cambridge University Press, Cambridge, 2012, 322 p.
57. Corbett, G. G. , Number, Cambridge University Press, Cambridge, 2004, 358 p.
58. Croft W., Modern syntactic typology, in M. Shibatani and T. Bynon (eds.), 1995.
59. Elwell-Sutton L. P., Elementary Persian Grammar, Cambridge, 1963, 238 p.
60. Fillmore, Charles J. "The Case for Case" In: E. Bach and R.T. Harms (eds) (1968) Universals in Linguistic Theory. London: Holt, Rinehart and Winston, pp. 1-25
61. Fisiak J., Contrastive linguistics and language teaching, Pergamon Press, New York, 1981, 284 p.
62. Jespersen O., The philosophy of grammar, George Allen and Unwin Ltd., London, 1924, 360 p.
63. Lambton, A.K.S., Persian Grammar, Cambridge University Press, Cambridge, 2000, 330 p.
64. Mace J., Persian grammar: for reference and revision, Routledge Curzon, London/ New York, 2003, 227 p.
65. Mahootian Sh.; Gebhardt L., Persian Descriptive Grammar, Taylor & Francis Routledge, London, 1997, 379 p.

66. Marton W., Pedagogical implications of contrastive analysis// *in Contrastive linguistics and the language teacher*, Pergamon Press, Oxford/ New York, 1981, pp. 157-171.
67. Moravcsik, E. A., Group plural: associative plural or cohort plural. Email document, LINGUIST List: Vol-5–681. 11 June 1994.
68. Newmeyer F. J., Possible and Probable Languages, Oxford University Press, Oxford, 2005, 278 p.
69. Phillot, D.C., Higher Persian Grammar, Calcutta University, Calcutta, 1919, 937 p.
70. Sanders C., Recent developments in contrastive analysis and their relevance to language teachers// *in Contrastive linguistics and the language teacher*, Pergamon Press, Oxford/ New York, 1981, pp. 21-33.
71. Shopen T., Language Typology and Syntactic Description, vol. 3, Cambridge University Press, Cambridge, 2007, p. 416.
72. Song J. J., Linguistic typology: morphology and syntax, Routledge, London and New York, 2014, 392 p.
73. Storch A. and Dimmendaal G. J., Number constructions and semantics, John Benjamins Publishing Company, Amsterdam/Philadelphia, 2014, 363 p.
74. Thackston W. M., An Introduction to Persian, 1, Rev. 4th edition, Ilex Publishers, Maryland, 2009, 286 p.
75. Velupillai V., An Introduction to Linguistic Typology, John Benjamins Publishing Company, Amsterdam/Philadelphia, 2012, 517 p.
76. Windfuhr, G. L., Persian Grammar: history and state of its study, Mouton Publishers, The Hague/ Paris/ New York, 1979, 211 p.